

6103

6104

6105

6106

6107

4. Amphu 1912

9(497)


U-62

ՔԱՐՏԷՍՆԵՐ

- 23. Կէլիպօլուի թերակղզին և շրջակաները. 377
- 24. Բաղդատական քարտէս պատերազմիկ տէրութեանց տարածութեան, բնակչութեան, հանրային հասոյթներուն և զինուորական ոյժին. 389
- 25. Պատերազմիկ բանակներու գերքը Սեպտեմբեր 18ին 415
- 26. Թուրք և Գորատաղեան բանակներու գերքը պատերազմի յայտարարութեան միջոցին 457
- 27. Օսմ. բանակներու համախմբութիւնը գաշնակից բանակներու դէմ, պատերազմի յայտարարութեան օրը. 473

ՅԱՒԵԼՈՒԹՅՆԵՐ

- 5. Թնդանօթի փոխադրութիւն Երօտրոյի լիճին վրայ
- 6. Զօրահանութեան տեսարանը Պոլսոյ փողոցներուն մէջ
- 7. Զօրահանութեան տեսարանը Սպարապետութեան Դրան առջեւ



Հէպն գահաժառանգը սահմանազրուխ կը մեկնի

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

**ԸՆԴԱՐՁԱԿ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ
ՊԱԼՔԱՆԵԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ**

Կ Ա Ջ Մ Ե Ց

ՍՐԱՄ ԱՆՏՈՆԵԱՆ


1001
36892



Պ. ՆԱՏՈՐ

Կ. ՊՈԼԻՍ
ՏՊԱԿՐՈՒԹԻՒՆ Օ. ԱՐՋՈՒՄԱՆ
1913

Ն Ե Ր Ա Ծ Ո Ւ Թ Ե Ի Ն



Իբր ներածութիւն պատերազմական գործողութեանց, զորս կը սկսիւնք ներկայացնել, ստորեւ կը հրատարակենք Օսմ. Ա. զօրաբանակի (Պոլիս) հրամանատար Էօմէր Եափեր փաշայի հետեւեալ Շրջաբերականը, որ պատերազմի սկզբնատրութեան միջոցին հաղորդուեցաւ յայնմ Օսմ. բանակին, եւ որուն մէջ տմեկնապարզ ձեռով մը մանրամասնուած են պատերազմական կանոնները, պատերազմիկներու, ոչ-պատերազմիկներու, յրտեսներու, զերիկներու զանազանարիւնները, անոնց նկատմամբ բանուելիք ընթացքը, եւ դեռ խել մը շահեկան տեղեկութիւններ: Չի մոռցուիր անշուշտ թէ այս կանոնները յոյ Թուրքիոյ յատուկ չեն, այլ կը պատկանին յոյր յարաբարակիրը ազգերու, հետեւաբար նաեւ Պաքստանեան Դաշնակցութեան մաս կազմող Պետութեանց.—

X

ՈՐՈՒՔ ԵՆ ՊԱՏԵՐԱԶՄԻԿ.—

1. — Պատերազմը բացարձակապէս կառավարութեանց դէմ մղուած կռիւ մըն է: Հետեւաբար՝ չի տարածուիր հանգարտ ու անզէն անհատներուն վրայ: Պատերազմիկ կը նկատուին կռուող կողմերու գործօն, Պահեստի և երկրապահ զինուորները, ինչպէս նաև կամաւորներն ու պատերազմական օրէնքներու համաձայն հրամանատարութեան մը ենթակայ օժանդակները: Պէտք է նկատի ունենալ թշնամիին զինուորական ոյժերը, որոնց մէջ կը գտնուին նաև բժիշկները, հոգեւոր պաշտօնեաներն ու հիւանդապահները, որոնք չեն կռուիր և որոնք պատերազմական գերի կը նկատուին ու պէտք է որ մեծ յարգանքի առարկայ դառնան:

2. — Երբ ոչ-պատերազմիկները զէն ի ձեռին գերի կը բռնուին, կառավարութիւնը ազատ է իր պաշտպանութեան պահանջումներուն համաձայն վարուելու անոնց հետ:

3. — Անոնք որ իրենց զինուորական ծառայութեան միջոցին չեն յարգեր պատերազմի օրէնքները, բնաւ իրաւունք չունին միևնոյն օրէնքներուն հետամուտ յարգանք սպասելու ուրիշներէ: Ասոր համար, որքան ալ փափուկ խնդիր մը ըլլայ պատերազմիկներու տեսակները մասնաւորելը, պէտք է յատուկ ուշադրութեամբ զանազանել զանոնք այն աւազակներէն որոնք պատերազմին շնորհիւ կը յաջողին այս ու այն կողմ խմբուիլ թալկելու համար:

4. — Օտար կամաւոր ըսելով պէտք է հասկնալ չէզոք տէրութեանց այն հպատակները որոնք իբր զինուոր կը մանեն օտար տէրութեան մը բանակին մէջ: Երբոր կը յարգեն պատերազմական օրէնքը և զինուորական որոշիչ նշան մը կը կրեն, պատերազմիկ կը նկատուին, որովհետև կորսնցուցած են իրենց չէզոքի հանգամանքը:

5. — Եթէ այդ կամաւորները հպատակը ըլլան այն տէրութեան որուն դէմ պատերազմի ձեռնարկուած է, այս վերջինը, զանոնք գերի բռնած ատենը իրաւունք ունի պատերազմական օրէնքներուն չենթարկելու և անմիջապէս, իբր հայրենիքի դաւաճան, հրացանի բռնելու:

ՏՊԱՐԱՆ ԵՒ ԿԱԶՄԱՏՈՒՆ
Օ. ԱԶՈՒՄՈՒՆ
№ 161

ԹՇՆԱՄԻՆ ԷՅՑ ՎԱՐՈՒՆԼՈՒ ԿԵՐՊԸ . —

6. — Պատերազմի ժամանակ՝ թշնամի բանակին մարդիկը սպանենն ու վիրաւորելը կատարելապէս օրինաւոր է :

7. — Պէտք չէ վիրաւորել կամ սպաննել այն թշնամի զինուորը որ անկարող է զինադրելու և ինքզինքը պաշտպանելու : Ո՛չ միայն արտօնուած չէ զայն խոշտանգելը, այլ խոշտանգելը ինքնին բացարձակապէս հակառակ պիտի ըլլար օտանեան վնասնձնութեան :

8. — Եթէ թշնամին ստնակոխ ընէ պատերազմական օրէնքները և ջարդէ կռուի միջոցին իր ձեռքը ինկած գերիներն ու գիւղի մը կամ քաղաքի մը բնակիչները, սովորաբար միևնոյն կերպով կը հատուցուի : Եւ սակայն, ասիկա շատ անտրամաբանական միջոց մըն է. աւելի մարդկային պիտի ըլլար այդ արարքը ընողները անհատապէս դատել զանոնք ձեռք անցընելէ վերջ :

9. — Լրտեսը այն է որ կը ծպտուի և անհիմն պատրուակով մը գաղտնարար կը ջանայ տեղեկութիւններ ձեռք բերել՝ թշնամիին հաղորդելու համար : Բայց կարելի չէ լրտես նկատել համազգեստ կրող զինուոր մը որ թշնամի բանակին գործողութեանց շրջանակը կը մտնէ՝ տեղեկութիւններ ձեռք բերելու համար :

10. — Եթէ իրապէս լրտեսներու դասակարգին պատկանող մէկը, կատարելապէս ճանչցուելէ վերջ՝ գործի վրայ չի բռնուիր և իր բանակը վեղանալէ վերջ, գերի կը բռնուի զինուորական գործողութեանց ընթացքին, այլևս լրտես չի նկատուիր, այլ պատերազմական գերի :

11. — Ոչ մէկ լրտես կրնայ մեռցուել կամ հրացանի բռնուել առանց դատաստանի :

12. — Խաղաղութեան ժամանակ՝ լրտեսները քաղաքային դատարաններու կողմէ կը դատուին, բայց պատերազմի ատեն ենթակայ են զինուորական օրէնքին և պատերազմական ատեններու կողմէ կը դատուին : Օսմ. զինուորական օրէնքին 77, 78, 79, 80, 81, 82, 83, 84, 85րդ յօդուածներն են որ կը բովանդակեն լրտեսներու վերաբերող տրամադրութիւնները : Կառավարութեան մը համար օրինաւոր անձնապաշտպանութեան իրաւունք մըն է ասիկա. այս պատճառաւ՝ լրտեսին պատիժը մահ է :

ՓԱՆՍՏԱԿԱՆ ԿԵՐՊԸ . —

13. — Թշնամիներէն անոնք որոնք իրենց երկրին կը դաւաճանեն ծառայութիւններն լքելով, կամ հակառակ բանակը կը փախչին, չեն կրնար պատժուիլ այս վերջինն կողմէ : Ետ ալ չեն դարձուիր, որովհետեւ անոնց փախուստը թշնամին տկարացնող միջոց մըն է : Ամէն պարագայի մէջ, այս փախստականները իրենց երկրին հանդէպ դաւաճաններ ըլլալով, անոր կողմէ ծանր պատժի, յաճախ մահուան կ'ենթարկուին :

ԼՐԱՏԱՐՆԵՐԸ . —

14. — Այն թշնամին որ բերանացի կամ գրաւոր լուր մը կը տանի բանակէ մը կամ պաշարուած քաղաքէ մը ուրիշ բանակի մը, և որ իր պաշտօնը կատարած միջոցին, գրաւուած հողին վրայ ձեռք կ'անցուի զին-

ուած ու համազգեստով, պատերազմական գերի կը նկատուի : Եթէ համազգեստ չի կրեր, կամ զինուոր չէ, պարագաներուն համեմատ կը դատուի :

15. — Եթէ այս կարգի մարդիկ՝ խաբելու մտքով ոչինչ բրած են, պատերազմական գերի կը նկատուին. բայց եթէ խորամանկութեամբ կամ ծպտումով գործած են, լրտես կը նկատուին և ըստ այնմ կը պատժուին :

ՊԱՏԵՐԱԶՄԿԱՆ ԳԵՐԻՆԵՐԸ . —

16. — Պատերազմական գերի են պատերազմիկները, ոստիկանները, դատաւորները, ոստիկան - զինուորները, կառավարական ու վարչական պաշտօնեաները, հայթայթիչները, մատուակները, օդանաւորները, սաւառնորդները, հեռագրատան և երկաթուղիի պաշտօնեաները, լրագրական թղթակիցները, հոգեւոր պաշտօնեաները, բժիշկները, հիւանդապահները և պատգարակակիրները :

17. — Մատուակները, օրագրողները, հայթայթիչները՝ բանակին մաս չեն կազմեր. այս պատճառաւ, զինուորական գործողութեանց պահանջածէն աւելի երկար ատեն վար չեն կրնար դրուիլ :

ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ՎԵՐՋ . —

18. — Պատերազմէն վերջ՝ պատերազմիկները երեք դասակարգի կը բաժնուին . — մեռելները, վիրաւորները և պատերազմական գերիները : Մեռելներուն նկատմամբ երեք նուիրական պարտքեր կան զորս Իսլամութեան ոգին ու Օսմանցիութեան փառքը հարկեցուցիչ կը դարձնեն . — 1. Դիակները յարգել . պահել անոնց վրայէն գտնուած դրամն ու միւս առարկաները և քաղաքային կամ զինուորական իշխանութեանց միջոցաւ զանոնք դարձնել իրենց ընտանիքին : 2. Դիակները թաղել՝ ինքնութիւններն հաստատելէ վերջ, ինչ որ կարելի կ'ըլլայ եթէ քննուին անոնց թղթապանակը, զօրաբաժնին կամ վաշտին թիւը, քաղաքային հանգամանքը հաստատող թուղթերը և ընտանեկան նամակները : Այս բոլոր տեղեկութիւնները պէտք է անմիջապէս հաղորդել թշնամիին՝ գտնուած առարկաներուն հետ : 3. Դիակներու թաղումը պարտականութիւն մըն է յաղթող կողմին համար : Պէտք չէ սակայն աճապարել, թէ՛ անոնց ինքնութիւնը հաստատելու և թէ՛ վիրաւորները իբր մեռել չթաղելու համար :

19. — Վիրաւորները և պատերազմի ժամանակ հիւանդ ինկողները արժանի են գթութեան ու աջակցութեան, որովհետեւ զարնուած կամ հիւանդացած են իրենց հայրենիքին ծառայելով : Միջազգային օրէնքը կը յանձնարարէ դարմանել թշնամիին ձեռքը ինկած վիրաւորներն ու հիւանդները . Իսլամութիւնն ու մարդասիրութիւնն ալ արդէն այդպէս կը տրամադրեն :

ՎԻՐԱՒՈՐՆԵՐ ԵՒ ՀԻՒՄՆԴՆԵՐ . —

20. — Գերիները ազատութենէ կը զրկուին, բայց պէտք չէ որ պատժուին կամ խոշտանգուին : Արգիւտուած է զանոնք անօթի թողուլ, ծեծել, վիրաւորել կամ սպաննել : Անոնք ենթակայ են զիւրեւնք գերիվարած բա-

ԳԵՐԻՆԵՐԸ . —

նակին օրէնքներուն: Սթէ ըմբոստանան, իսկոյն խիստ միջոցներ ձեռք կ'առնուին իրենց դէմ:

21. — Գերիներուն անձնական իրերը իրենց տրամադրութեան տակ կը մնան, և իրենց բնակարան մը կը յատկացուի: Եթէ չյարգեն զինուորական կանոնները, ձերբակալման վիճակի տակ կ'առնուին:

22. — Արգիլուած է պատերազմական գերիները ստիպել որ զինուորական գործողութեանց մասնակցին: Միայն հանրային սպասարկութեանց կը յատկացուին պայմանաւ որ այդ սպասարկութիւնները բնաւ առնչութիւն չունենան զինուորական գործողութեանց հետ:

23. — Պատերազմական գերիները բացարձակապէս ազատ են իրենց կրօնական պաշտամունքը կատարելու:

ՍՏԱՅՈՒԱԾՔ ԵՒ ՀՍՍԱՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ. —

24. — Գրաւման բանակ մը կրնայ քանդել իր նպատակին իրականացման արգելք եղող ամէն բան: Կրնայ գործածել կամ ջնջել մարտկոցներ, ամրոցներ, դէնքի գործարաններ, ճամբաներ, հաղորդակցութեան ու թղթակցութեան միջոցներ գոյանոցներ:

25. — Տաճարները, եկեղեցիները, հիւանդանոցները, բարեգործական հաստատութիւնները, համալսարանները, դպրոցները, պալատները, թանգարանները, մատենադարանները, Արձանագրութեան Դիւանները պէտք է պաշտպանուին: Բայց կարելի է անոնց մէջ զինուորներ հաստատել կամ դանոնք հիւանդանոցի և ամբարանոցի վերածել: Քաղաքակրթական գործեր քանդելու ուրիշ բան չէ, այլ ինքզինքը մարդկութեան թշնամի հռչակել:

26. — Կը գրաւուին այն ամէն առարկաները և կարասիները որոնք կրնան ծառայել թշնամիին զինուորական գործողութեանց:

27. — Կը գրաւուին նաև թշնամի բանակին զանձերն ու զրամները:

28. — Կարելի չէ դպչիլ անհատական ստացուածքներու, այսինքն՝ թշնամի կառավարութեան նպատակներուն պատճանող իրերու:

29. — Քանի տեւեն թշնամութիւնները, պէտք չէ յաճախակի կամ շարունակական յարաբերութեանց մէջ գտնուել թշնամիին հետ. ատիկա կրնայ խաթարել բանակին բարոյական կորովն ու կարգապահութիւնը:

30. — Զինուորի մը համար անձնատուր ըլլալը մեծագոյն ամօթն է: Նոյնիսկ եթէ իրիչ գերազօր ոյժերու դէմ գտնուի, իր պատիւը կը պահանջէ որ կուռի միջոցով վերջը: Հայրենասիրական պարտականութիւն մըն է ասիկա: Մնաց որ մեռնիլը աւելի լաւ է քան անձնատուր ըլլալը:

ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ ԵՒ ՎՍԱՀՈՒԹՅՈՒՆ. —

Այս երկու բառերն են յաջողութեան մեծագոյն ազդակները: Այն որ ո՛չ կարգապահութիւն ունի, ոչ ալ ամուր հոգի, ոչ մէկ բանի մէջ կրնայ յաջողիլ: Հարկ չկայ թուելու այն խոշոր աղէտները որոնք կրնան առաջ գալ անկարգապահութենէն և կասկածանքէն: Ոչ ոք պէտք է սոսկ իրեն սեփական առաքինութիւն մը նկատէ հայրենասիրութիւնը: Օսմ. բանակին բոլոր զինուորներն ալ իրարու հաւասար չափով հայրենասէր են:

Օսմանցիները գիտեն թէ վէրքերը պատուանշաններ են, թէ մահը բընական բան մըն է: Իրենց համար՝ կուռիլն ալ, մեռնիլն ալ, խաղ մըն է: Ուրեմն վստահ եմ որ ամէնքս ալ պատուով ու արիութեամբ պիտի կատարենք մեր հայրենասիրական պարտաւորութիւնները: Կը յանձնարարեմ որ այս տրամադրութիւնները մեծ ուշադրութեամբ գործադրուին պատերազմին տեւողութեան միջոցին և կուռի ընթացքին:


Աստուած մեզի օգնական ըլլայ:

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԸՆԴԱՐՁԱԿ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՊԱԼՔԱՆԵԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ

Ք. Մ Ա Ս


ԳՍՐԱՏԱՂԻ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ

(25 ՍԵՊՏԵՄԲԵՐ — 29 ՆՈՅԵՄԲԵՐ 1912)



Գ Լ Ո Ւ Խ Ա.

Փ Ո Ւ Ա Դ Ա Ր Զ Ո Յ Ժ Ե Ր Ը



«Եթէ վաս մը գտնուի, իսկոյն պիտի առնուին անոր զեկերը. և ոտքն անկն որ ապրի, այլևս բնաւ չպիտի կրնայ զեկ կրել: Անկա անպատիւ պիտի նկատուի ընդմիջ. և ոչ մէկ գործով պիտի կրնայ զրայիլ: Գոզնոց մը պիտի անցուի անոր մարմնին շուրջը, որպէս զի մարդիկ շաւ մը հասկնան քի անոր կուրծիկն սակ երկիմարդու սիրտ մը չի բարախտ... »:

Այսպէս կը տրամադրէ Գարատաղի Լեոնականներու Օրէնքը, և այս բարբարիկ ու անողոք Օրէնքով թրծուած ափ մը ժողովուրդն էր որ 1912 տարուան Սեպտեմբեր 25ի օրը պատերազմ կը յայտարարէր Օսմ. կայսրութեան դէմ: Զի յիշուի որ Սեւ Լեւոնականներն ո՛ր և է մէկը երբեք այդ անարգանքը կրելու բռնադատուած ըլլայ. և թերեւս քիչ մըն ալ այդ զարնուրելի Օրէնքն է պատճառ որ վատ չի հասնիր Զոնակորայի սարերուն վրայ: Աստագոյն և ամէնէն չարչարազին մահն անգամ ոչինչ

Տեսնել Պատկեր, էջ 12, 14, 32, 38, 40, 44, 53, 59, 70, 83, 85, 87, 114, 158, 169, 171, 179, 204, 223, 231, 23, 233, 241, 259, 294, 300, 303, 315, 356, 375, 382, 385, 387, 392, 398, 399, 408, 4 2, 460, 467, 500: Քարտեր, էջ 49, 99, 129, 152, 227, 289, 292, 350, 389, 415, 457, 473. Յանդրած, Թիւ 4, 5:


է այդ պատժին քով, որ վատերէն կը խլէ իրենց պատուին պահպանութեան և ապրուստին ապահովութեան մէկ հատիկ միջոցը, — զէնքը որուն խնարժան դարձած էին, — բայց չի սպաններ, չի շարժարէր, չի բանտարկէր զանոնք, կը թողու որ շրջին ազատ, իրենց հետ պտտցնելով անարգանքի գողնոցը, որ խարանի մը պէս ամէն տեղ և ամէն մարդու պիտի պատմէ իրենց վատութիւնը: Կարելի է երեւակայել աւելի տաժաւազին թիպարտութիւն մը:

Նոր չէր որ այս արի ժողովուրդը կը կռուէր Օսմ. Կայսրութեան դէմ: Մենք նկարագրեցինք արդէն այն հերոսական մաքառումները, որոնց շնորհիւ պղտիկ, աննշան Գարատաղը յաջողած էր իր անկախութեան տէր մնալ նոյն իսկ անա՛նկ տեսներ, ուր բովանդակ Եւրոպա տեղի կուտար Օսմ. բանակներուն առջև, և մահիկազարդ դրօշը իր կարմիր կամ կանանչ պատտաւին ծալքերը կը ծածանէր մինչև վիեննայի ամբողջութիւնը: Քանի ամսէ ի վեր արդէն Գարատաղ սահմանազուխի կռուներ կը մղէր թուրք զինուորներուն դէմ. Մայիսօրներու վերջին մեծ ապստամբութենէն ասդին, այդ կռիւները դարձած էին քրոնիկ ու շարունակական, ստեղծելով կատարեալ պատերազմական վիճակ մը՝ կանոնաւոր պաշարումներով ու թնդանօթի գործակցութեամբ: Պատերազմի յայտարարութիւնը լոկ պաշտօնական կը դարձնէր ինչ որ գոյութիւն ունէր արդէն անպաշտօն կերպով: Այն օրը ուր Պ. Բլամէնաց Պոլսոյ մէջ Նորասունկեան Էֆէնտիի կը յանձնէր պատերազմի յայտարարութիւնը, Չէթինեի մէջ ալ Նիքոլա թագաւոր պալատ հրահրած էր Օսմ. ներկայացուցիչ Մուխթար պէյը, և երեք քառօրոյ ժամ տևող սիրալիր տեսակցութենէ մը ու մեծարանքներէ վերջ, յայտնած էր թէ կացութեան բերմունքով կը ստիպուի պատերազմ յայտարարել թուրքիոյ դէմ: Յետոյ, Նիքոլա թագաւոր Օսմ. ներկայացուցչին յանձնած էր իր ու դեսպանատան պաշտօնեաներուն անցազիրները, աւելցնելով որ արքունի թիկնապահներ իրենց պիտի ընկերանան մինչև սահմանազուխ:

Այդ միջոցին արդէն ժողովուրդը խռնուած էր պալատին հրապարակը, ու կը սպասէր որ թագաւորը անձամբ հաստատէ պատերազմի յայտարարութեան լուրը: Ծերունիներ, տղաք, կիներ ու աղջիկներ նուազ խանդավառ չէին երեւար քան բուն իսկ պատերազմիկները: Միակ երկիրն է Գարատաղ ուր մայրերը երբե՛ք, երբեք չեն անիծած ու չեն անիծեր պատերազմը, և կը նախընտրեն իրենց զաւակը ինկած տեսնել կռուի դաշտին վրայ, վէրքերով ծակ ծակ, քան անկողնի մը հանգստութեան մէջ մահացած: Ելք Մուխթար պէյ դուրս ելաւ պալատէն, ոչ մէկուն, ոչ իսկ նոր հարսերուն դէմքին վրայ կրցաւ տեսնել այն բնական, ինքնեկ անձկութիւնը զոր ամէնէն դիւցազնական ազգերու կիներն իսկ չեն կրնար զսպել պատերազմի արձախքին հանդէպ: Խլացուցիչ ծափեր, աղմուկ, մարտադու աղաղակներ, ամբողջ դժոխային երաժշտութիւն մը սարքած էին այդտեղ: Ոչ մէկ վերաւորիչ խօսք, նոյն իսկ ակնարկ թշնամի Կայսրութեան ներկայացուցչին, որ ստիպուած էր իրենց խիտ շարքերը ճեղ-

քելով անցնիլ: Գարատաղը ոչ ասպետական ոգին էապէս անհաշտ է փոքրօգի և անարժան ցոյցերու ու թշնամանքներու հետ:

Հազիւ Մուխթար պէյ անհետացած՝ թագաւորը երեւցաւ պալատին պատշգամէն, և ձեռքի նշանով մը ծափահարութեանց վերջ տալով անհամբեր ժողովուրդին կարդաց խանդավառ յայտարարութիւն մը որ այլևս տա-



րակոյս չէր թողուր պատերազմին նկատմամբ, և կը սրտապնդէր ժողովուրդը թէ անօգնական չպիտի մնայ դաճաճի և հսկայի այդ անհաւասար կռուին մէջ:

Ահա թէ ի՛նչ կ'ըսէր Նիքոլա թագաւոր. —

Անկարեղի եւ աւելի երկար ասեմ հանդուրժել ցաւի այն աղաղակներուն որոնք կուգան Հիւսէյի մեր հարստահարեալ եղբայրներէն: Այնտեղ կը խողովորուի զի միայն այս մարտիկ այդ եւ կիներ ու տղաք: Հայրենիքի սերը կը հրահայեց մեզի որ փութամբ անոնց օգնութեան: Մենք վստահ այս պարսքը հասուցած կ'ըրայիս բայց յուսացի որ կը պատկուի իմ խաղաղասէր քանիքս, որոնց նպատակն էր սահմաններէն անդին զսնուող մեր մարտիրոսա-

ցող եղբայրներուն պաշտպանութիւնը: Սակայն դժբախտաբար բուրժուարական Սերպերուն ազատութիւնը առանց արիւնահեղութեան ապահովելու համար ըրած ջանքերս չյաջողեցան, եւ շատ կը գուշակ որ հարկադրուեցայ խոռովել խաղաղութիւնը ու սուրբ քաջէ պատեանէն: Կոչուել կ'ընեմ ուրեւի՛ն ձեզի որ ինծի հետեւիք ու ձեռք կարկանդակ մեր հարստահարեալ եղբայրներուն, ինչպէս նաեւ քաջ Մաշխարներուն, որոնք երկու տարիէ ի վեր առիւծներու պէս կը կռուին իրենց իրաւունքներուն, իրենց ազատագրութեան եւ Սեւ Լերան հետ իրենց միացման համար:

Գարսաղ միակեր չէ. իրեն հետ եւ Պաշխանեան քրիստոնէայ քաղաւորութիւնները, որոնց հետ դաշնակցած ենք մենք: Ես միշտ փափաքեմ եւ այդ Գաշնակցութեան, որուն իրականացման կը պատահին Պաշխանեան քոչոր ժողովուրդները, Ասիացիներուն իրենց երկիրը խուժելէն ի վեր:

Կը յուսամ որ իմ հին զինուոր գաւառներս այսօր ուրիշ ատեն ասեւեկ աւելի պիտի զինուան քարձր բռնել հայրենիքին փարկը եւ պիտի ջանան ճոր փառքերով օժտել մեր բանակը: Բարութիւն պէտք է մեծ Կայսրութեան մը հետ կռուելու համար: Գարսաղցի միշտ ինկզիսնիսն արժանի դարձուցած են այդ գործին եւ միշտ սիրած են ինկզիսնիսն զոհել իրենց եղբայրներուն համար: Կրնաք ապահով ըրիչ քե՛ս քաղաքակիրթ աշխարհը, ինչպէս նաեւ Սերպ ազգն ու քոչոր Սրաւ ազգերը համակիր են մեզի:

Ազնիւ ձեռքեր, սուրով զինուած ձեռքեր կը կարկանդակուին մեզի՝ Սերպիոյ, Պուլխարիոյ եւ Յունաստանի քաղաւորներուն կողմէ. որոնց ժողովուրդները, այս նորարարական ձեռնարկութեան մեջ, Գարսաղցոց միացած են եղբայրօրէն: Մենք զոռոզութեամբ չէ որ կը յարձակինք Թուրքիոյ վրայ, այլ աւելի ազնիւ զգացումներով, պարզապէս մեր եղբայրներուն բնաջնջումը արգիւելու համար:

Կը հրաւիրեմ ուրեւի՛ն ձեզ որ քաջաբար անցնիք սահմանագրուիք, արշաւէք Հին Սերպիա, ուր ձեզի ժամադիր պիտի ըլլան Սերպիոյ ձեր եղբայրները, առաջնորդութեամբ իրենց ազնիւ քաղաւորին, իմ սիրեցեալ փեսայ: Այնտեղ պիտի ողջագործուիք ձեր եղբայրներուն հետ, եւ անոնց հետ ձեռք ձեռքի պիտի փութաք ազատութիւն սանկը ձեր հարստահարուող եղբայրներուն:

Երկինքի օրհնութիւնը կը հաջնեմ այս ձեռնարկին վրայ. զոր կ'երազեմ մանկութենէն ի վեր. եւ զոր երգած եմ իմ խորթաձեռներուս մեջ:

Կեցցե՛ք Գարսաղ.
Կեցցե՛ք Պաշխանեան Գաշնակցութիւնը:

Հազարաւոր ձայներ իրեն հետ միասին արտաբերեցին այդ «Կեցցե՛ք» ներքը և անվերջ ձայնը թնդացին ի պատիւ թագաւորին ու գահաժառանգին, որ յայտարարութեան ընթացքին միջոցին եկած հօրը մօտ կանգնած էր միւս եղբայրներուն հետ: Օտարական մը եթէ այդ միջոցին շրջէր Չէթինէի փողոցները, դժուար թէ գուշակէր որ պատերազմի յայտարարութեան տեսարանն է իր աչուրներուն առջև պարզուածը: Չէթինէ աւելի տօնական օրուան մը երեւոյթը ունէր: Տուները դրօշազարդուած էին մեծ մասամբ. ձայնակներու և դալարիքի հիւսկէններ ժապաւէնի պէս երկարած էին փողոցներու մէջ՝ պատուհանէ պատուհան: Ամէն կողմ ուրախու-

թիւն, երգ, նոյն իսկ պար, կատարեալ տօնախմբութիւն մը: Մարտի զգայութիւնը արթնցնող միայն զօրականներն էին, որոնցմով խնդրուած



Գարսաղի պատերազմական գործողութեան շրջանակը

էր քիչ մը ամէն փողոց, բայց անոնք ալ աւելի հանդիսաւոր զօրահանդէսի մը քան պատերազմի երթալու երեւոյթը ունէին:

Քիչ ետքը, թագաւորը գնաց անձամբ խանութեաց ժողովուրդին: Գահաժառանգ Տանիօ իշխանն ու Բէթար իշխանը նոյն իրիկունն իսկ Բօտկորիցայի ընդհանուր բանակետը պիտի մեկնէին, և թագաւորը կ'ու-

զէր ուղեկցիլ իր դաւախներուն : Ճամբուն վրայ , սիրայի բառերով կը հրահրէր ժողովուրդին աւելնը : Եւ ծափահարութիւնները վերջ չէին գրտներ : Մասնաւորաբար գուրգուրանքով կը ծափահարուէր իշխան Բէթար , Նիքօլա թագաւորին ամէնէն պզտիկ զաւակը , տակաւին հազիւ 23 տարեկան , որ դեռ մէկ քանի օր առաջ հրամանատար կարգուած էր Զէթալի գումարտակին , և որ պատերազմին անդրանիկ թնդանօթի հարուածը պիտի արձակէր : Կամաւորներու խումբերը , որոնց մէջ տարէց ծերունիներ մեծամասնութիւն կը կազմէին , և որոնց մէջ կը նշմարուէին մանաւանդ զարհուրելի Մալխօրները իրենց բնիկ տարազով , թագաւորին մասնաւոր ուշադրութեան առարկայ կը դառնային : Բայց ինչ որ Նիքօլա թագաւոր ամէնէն աւելի գորովանքով , զեզումով դիտեց այն օրը , 1876ի պատերազմին մասնակցած երբեմնի հերոսական մարտիկներուն կազմած խումբն էր որ իրեն ընդ առաջ եկաւ հրացանը ուսին , առանց զինուորական համազգեստի , այն միևնոյն ազգային տարազով որով կուռած էր երեսուն տարի առաջ : Այն թուականին՝ Նիքօլա թագաւոր ինք ալ անոնց հետ կողք կողքի մարանչած էր իր սարերուն վրայ , և հիմայ , երբեմնի գէնքի ընկերներուն այդ յայտնութիւնը աշուրներուն առջև կը յարուցանէր ամբողջ փառաւոր անցեալը իր թուր ուրախութիւններով ու նաև դառնութիւններով : Որովհետև այն ատեն ալ յոյսերով զեզուն էր՝ երբ իր բովանդակ երիտասարդական կորուով ժողովուրդը առաջնորդած էր անաւոր պատերազմի մը . վերջէն՝ Պէրլինի Վեհաժողովը խորտակած էր իր ակնկալութիւնները , կորզելով իրմէ ինչ որ շահած ըլլալ կը կարծէր իր անվեհեր ու անվիճելի հերոսութեամբ : Այս անգամ գոնէ պիտի յաջողէր աւելի բախտաւոր ըլլալ . . .

Գրեթէ մտահոգ բաժնուեցաւ իր հերուան կոխի ընկերներէն , հրաժեշտ տալով նաև պատերազմական նախարար զօրավար Մարթինովիչի , որ Անթիլիարի կը մեկնէր՝ Նքօթարայի վրայ խոյանալու սահմանուած բանակին հրամանատարութիւնը ստանձնելու : Իսկ ժողովուրդը՝ անգիտակ վեհապետին մտահոգութեան՝ կը շարունակէր իր բարձրագու ցոյցերը Պուլվարական , Սերպիական , Յունական , ու մանաւանդ Ռուսական դեպանատուններուն առջև :

Այսպէս ուրեմն պատերազմը այլևս իրօք պատերազմ էր , և եթէ թուրքիոյ ու Գարատաղի համար նորութիւն մը չէր , գոնէ Եւրոպայի համար շատ դառն հիասթափութիւն մը դարձաւ : Մանօթացանք արդէն այն յուսահատ ձիգերուն որոնցմով եւրոպական դիւանագիտութիւնը այդ միջոցին կ'աշխատէր խաղաղութիւնը պահպանել հակառակ ամէն բանի , և արգիլել պատերազմ մը որուն ուր կասիլը ոչ ոք կրնար գուշակել , և որ կրնար բովանդակ Եւրոպան հրդեհել : Շատեր կը յուսային թէ տէրութեանց հաւաքական ամենազօրութիւնը պիտի կրնար տազնապը բառնալ , ճնշում բանեցնելով թէ՛ թուրքիոյ և թէ՛ Պալքանեան Պետութեանց վրայ , բայց անա Գարատաղ ձեռնոցը կը նետէր , և ապահովաբար մինակ չպիտի մնար , ինչպէս անվերապահ կերպով կը յայտնէր Նիքօլա թագաւոր իր յայտարարութեամբ : Հիասթափուած էին մանաւանդ խաղաղասէրները ,

և այդ հիասթափութեան առթած անդրանիկ դառնութեան քան պատմական ճամբատանդրութեան կարելի է վերագրել Արևելքի գործերուն լաւատեղեակ Պրանսացի յայտնի քաղաքական անձնաւորութեան մը՝ ծերակուտական Պ. Թէթուրնէլ ար Քօնսթանի կողմէ Նիքօլա թագաւորին ուղղուած հետեւեալ բաց-նամակը , որ թնդանօթի հարուածներէն աւելի ազմուկ հանեց պատերազմի յայտարարութեան վաղորդայնին . —

Ն. Վեհափառ Տէր , Գարատաղի քաղաքին

ԲՕՏԿՕՐԻՑԱ

Վեհափառ Տէր ,

Երեսուն տարի անցած ըլլալով Պէրլինի Վեհաժողովէն և սահմաններու գծման Եւրոպական Յանձնաժողովէն ասդին , որուն քարտուղարն էի , այլ ևս կապուած չեմ պաշտօնի գաղտնապահութեան հարկէն , մանաւանդ որ , Ձեր Վեհափառութիւնը կը ստիպէ բոլոր պատուաւոր մարդիկը՝ բողոքելու թուրքիոյ դէմ ձեր հրատարակած վերջին պատերազմին համար :

Վկայութեան կը կոչեմ Յանձնաժողովի իմ բոլոր պաշտօնակիցներս , որոնք . ինծի պէս , 1879ին և 1880ին , սպերտիտ պաշտօնը ստանձնեցին կողպատելու Ալպանիան այն հողերէն՝ զորս չէիք աշխարհակալած . վկայութեան կը կոչեմ մանաւանդ տակաւին սպորդ իմ անգլիացի պաշտօնակիցս , Սըր Վէնսանթ Քայետարը : Ամէնքս միասին էինք Բօտկօրիցայի մէջ , ձեր հրձիգներուն գոյացուցած աւերակներուն կեդրոնը : Ամէնքս ալ աւելի կամ նուազ ամօթահար էինք , հաստատելով որ աշխարհի խաղաղութիւնը վրդովուած էր սոսկ ձեր շահուն և այն բանին համար զոր դուք ձեր փառքը կ'անուանէիք , չսակցած էինք թէ ձեր յարուցած պատերազմը ձեր փառասիրութիւնը չէր , այլ ձեր արհեստը :

Ժամանակը անցաւ . հիմայ կը վերսկսիք . ու նորէն աշխարհը կրակի կուտաք . ձեր հաւելիթը եփելու համար : Ընդդիմադիր չունիք՝ ձեր բէժիմին տակ անմարդացած Գարատաղի մէջ . շատ ցաւալի է ասիկա , որովհետեւ իրենք մանաւանդ չպիտի ուշանային ձեզի տալու արժանի պատիժը , զոր քաղաքակիրթ աշխարհին դատաստանը վերապահած է ձեզի :

Կը կարծեմ պարտականութիւն մը կատարած ըլլալ , ձեզի դերելով ինչ որ բնաւ չէք լսեր այդտեղ , և կը խնդրեմ որ զայն ընդունիք իբր զբաց հան արտայայտութիւնը մէկու մը որ կը ճանչնայ ձեր դժբախտ երկիրը :

Բարիք , 10 Հոկտեմբեր

ՏԻԹՈՒՐՆԷԼ ՏՐ ՔՕՏՍԹԱՆ

Երևակոսական , Ասիական Գարատաղի Գարատաղի սահմաններու գծման Յանձնաժողովին


Ռուսանիոյ զրագէտ թագուհին՝ Քարմէն Սիլվա , յանուն խաղաղասիրութեան , փութաց հեռագրով մը շնորհաւորել Պ. Թէթուրնէլ ար Քօնսթանը (*), որ նոյն ատեն կ'ընդունէր հետեւեալ բաց-պատասխանը՝ ուրիշ Պրանսացիի մը , երեսփոխան և Բարիզի գարատաղեան ընդհանուր հիւպատոս Պ. Լուի Պրիւնէլի կողմէ . —

Պ. Եփրուրեկ Տր Քօնսթան

Կարդացի ձեր բաց նամակը , ուղղուած Գարատաղի Նիքօլա թագաւորին , և ներեցէք ինծի , որ թէ՛ իբր այդ երկրին հիւպատոսը և թէ՛ իբր Պրանսացի՝ անկեղծօ-

(*) Յայտնի չէ թէ Քարմէն Սիլվայի խաղաղասիրութիւնը ո՞ւր մնաց վերջէն՝ երբ Ռուսանիա , Դաշակիցներուն արիւնով ձեռք բերուած երկիրներուն փոխարէն՝ Պուլկարիայէն մաս մը հող պահանջել սկսաւ պատերազմի սպառնալիքով . և ասիկա՝ առանց անոնց ահաւոր զոհողութեանց հող չէ թէ աննշան մասնակցութիւն մը բերած ըլլալու :

ըէն իմ վշտախանն զարմացուն յայտնեմ, իր դիրքով նշանաւոր և միեւնոյն ատեն վեհանձն մարդու մը գրչին տակ գտած ըլլալուն համար բաւեր, որոնք իր ունեցած զգացումներուն կը հակասեն:



Մալքաները պտոյտի միջոցին

Ոչ Գարատաղի թագաւորին արժանապատուութիւնը և ոչ ալ անոր արժէքաւոր պզտիկ ժողովուրդին համբաւը բարեբախտաբար չեն կրնար վնասուիլ ձեր ամբաստանութիւններով: Պատմութիւնը անոնց գործերուն օրինաւորութիւնը նուիրականա՞

ցուցած է: Ի՞նչպէս մեկնել երեսուն տարուան լուսթենէ մը ետք, ձեր մարդասիրական զգացումներուն այսքան թշնամական զարթումը:

Պալքանեան քրիստոնեայ ժողովուրդներուն միաձայն արտայայտութիւնը և երկար տարիներու տառապանքներէ և կռիւներէ վերջ ալ՝ ճարահատ՝ իրենց զգացումներուն տպաւորիչ համաձայնութիւնը հոյակապօրէն պատմական իրողութիւն մը կը կազմեն: Պզտիկ Գարատաղի թագաւորը չէ միայն հաւատարիմ թագաւորը Գարատաղցիներու բաղձանքներուն, այլ նաև թարգմանն է ամէն անոնց որոնք հիմայ պատրաստ են կռուելու դատի մը համար որ մարդկութեան դատն է, ինչ որ ալ մտածէք դուք:

Դիտելի է նաև որ Գարատաղցիք իրենց արիւնով ուռագած են բոլոր իրենց նուաճումները և իրենց երկրին համեստ տարածութիւնը կ'ապացուցանէ որ մեծ տէրութիւնները զայն չեն վարձատրած չափազանց: Ի հեճուկս եղած բոլոր նախատինքներու, ամէն Գարատաղցի գիտէ թէ ինչո՞ւ կռուեցաւ, ինչո՞ւ կը կռուի: Եւ ասիկա բաւական է:

ԼՈՒԻ ՊՐԻԻՆԷ
Ընդհ. հիւպատոս Գարատաղի,
Երևանի մարտի

Բարից, 11 Հոկտեմբեր

Պ. տ'էթուրնէլ աը Բօնաթան՝ Ռուսմանիոյ թագուհիէն զատ ծափահարող չունեցաւ: Միայն Ֆրանսացի նշանաւոր ակադեմիական Բիէր Լօթի, որ վերջէն թուրքիոյ ի նպաստ յօդուածներու շարք մը պիտի հրատարակէր զանազան թերթերու մէջ (*), Նիւ Եորքէն Մարքեկի ուղղեց հետևեալ բողոքը Պալքանեան Դաշնակցութեան ու Եւրոպայի կողմէ թուրքիոյ նկատմամբ ցոյց տրուած անսիրելութեան դէմ. —

1870ին՝ Ալճերիոյ Արաբները, որոնք մեզի դէմ գանգատելու իրաւացի պատճառներ ունէին, որոշած էին ապստամբել: Բայց յանդարձ ծագեցաւ Ֆրանսո-գերման պատերազմը: Այն ատեն՝ դրեթէ չափազանցութեամբ տարուած խղճահարութեամբ մը՝ լռեցուցին իրենց գանգատները, և խաղաղութեան դաշնագրին կնքումէն վերջ միայն խմբովին ապստամբեցան մեզի դէմ:

Պալքանեան Պետութիւնները դժբախտաբար չհետեւեցան իսլամ ազգի մը կողմէ ընծայուած այս ազնիւ օրինակին: Ինչ որ ալ ըլլան իրենց գանգատները թուրքիոյ դէմ, ճշմարիտ վատութիւն մը ըրած կ'ըլլան, երբ այսպէս, անոր դժբախտութիւններէն օգտուելով, կռնակէն վրան կը յարձակին ամէնքը մէկ: Դեռ վերջերս զերինք կը նմանցնէի այն բորենիներուն, որոնք խմբովին կը մօտենան իրենց որսերուն, երբ կը զգան թէ վերաւորուած են անոնք: Աւանց իրենց՝ Իտալիա երբեք չպիտի կրնար ընկճել թուրքիոյ վսեմ դիմադրութիւնը, հակառակ իր նաւատորմին զարհուրելի թնդանօթներուն, որոնք մինակնին իրեն պարգեւեցին Տրիպոլիոյ ծովեզերքը:

Կ'ուզեմ հաւատալ սակայն, նոյնինքն այդ լատին ազգին պատուին համար, թէ Իտալիան չէ այս Պալքանեան խռովութիւնը յարուցանողը: Քրիստոնեայ Եւրոպան պէտք է սրտմտի ու միջամտէ, գոնէ ի յարգանս թուրքերու զմայելի հերոսութեան: Եթէ անգործ մնայ, ատիկա արատ մը պիտի ըլլայ իր պատմութեան մէջ:

Եւրոպայի չըրածը արդեօք չը՞ պիտի ուզէ ընել մեծ, ազատ ու անշահախնդիր Ամերիկան, չը՞ պիտի ուզէ Եւրոպայի տեղ ինք վայելել այդ փառքը:

Մէկ քանի խօսքեր որոնցմով նախագահ թափթ պատուեց զիս, այն յոյսը կու տան ինծի թէ Միացեալ Նահանգները արդէն իսկ խորհած են իրենց իրաւարարութիւնը առաջարկել, և թէ շատ հեռու չէ այս վայրկեանը ուր այս մտքով դիմում մը պիտի ընեն (**):

(*) Բիէր Լօթի այդ յօդուածներէն մաս մը ամիսփեց La Turquie agonisante վերնագրով հատորի մը մէջ:

(**) Լօթիի այս յոյսը չիրականացաւ:

Ինչ որ ալ ըլլայ, Թուրք ժողովուրդը, իր դիմագրութեամբ և իր քաջութեամբ, ամէնէն գեղեցիկ պատեր բոլորեց իր ճակտին: Ու ես խորապէս համոզուած եմ որ Ֆրանսացւոց ստուար մեծամասնութիւնը ինձի պէս կը խորհի:




Չէթ ինեէի պարզած տեսարանը պատերազմի յայտարարութեան օրը

Այս էպպէս պղատոնական ցոյցերը տարակոյս չկայ որ չպիտի կրնային կասեցնել ինչ որ տէրութիւնները, հակառակ հսկայ ճիգերու, չէին կըրցած արգելիլ: Թնդանօթը կը գոռար արդէն, և Թրքօ-գարատաղեան բովանդակ սահմանազուխը կրակի մէջ էր:

Գարատաղի բանակը բառին բուն նշանակութեամբ երկրապահ բանակ մըն է, և 1910ի օրէնքին համաձայն, 18—62 տարեկան ամէն մարդ

զինուոր է (18—53 տարեկան գործօն բանակին մէջ, 53—62 տարեկան՝ պահեստի): Այս օրէնքին շնորհիւ՝ Գարատաղ խաղաղութեան միջոցին դրօշի տակ կը պահէ 25,000 հոգինոց բանակ մը (250,000 բնակչի վրայ), որուն թիւը, պատերազմի ժամանակ, կը բարձրանայ 37,200ի:

Այդ 37,200 մարդիկը բամուռած են չորս զօրաբաժնի, իւրաքանչիւրը երեք գումարտակով (*), բացի չորրորդ զօրաբաժնէն որ միայն երկու



ՏԱՆԻԼՕ ԻՇԵՒԱՆ ԵՒ ԻՐ ԱՒԱՐԸ
Գարատաղցւոց գրաւած անդրանիկ գնդաձիբը

գումարտակէ կազմուած է: Ա.Մէն մէկ գումարտակ ունի 4-6 վաշտ, 4-8 զօրախումբով, պահեստի վաշտ մը, հեծեալ հետազօտիչներու ջոկատ մը, հրէջներու, հեռագրողներու և ճամբայ շինողներու ջոկատ մը, լեռնային թնդանօթներու և ուժրակարճակներու հրետաշարքեր, գնդաձիբներու ջոկատ մը, սակաւաթիւ հեծեալախումբ, մատակարարութեան (intendance) վաշտ մը և պարէնաւորիչ խումբ մը:

Դաշտային ու լեռնային հրետանին ընդհանրապէս կը բաղկանայ հին


(*) Գումարտակ (պիտիւկ) կը գործածենք փոխան Ֆրանսական brigade բառին, իւրաքանչիւր գումարտակ սովորաբար կազմուած է երկու զօրագունդէ: Սեւ լեռան զինուորական կազմակերպութեան մէջ սակայն տարբեր է, ինչպէս կը տեսնուի վերի մանրամասնութիւններէն:

ոճով Գրուսնիք: Բացս ուսթիւն կր կազմեն 76 միլիմէթր տրամագծով արագահարուած ուսական խնդանօթներու երկու հրետաշարք, 90 մ/մ տրամագծով խտալական դաշտային թնդանօթներու երեք հրետաշարք, լեռնային արագահարուած ուսական խնդանօթներու չորս հրետաշարք և խտալական լեռնային խնդանօթներու երեք հրետաշարք: Գարատաղ ունի նաև 220 մ/մ տրամագծով խտալական չորս հրասանդ (mortier = հավան քօլիո), 230 մ/մ տրամագծով ուսական տասերկու հրասանդ, 150 մ/մ տրամագծով խտալական երեք հրասանդ, 150 մ/մ տրամագծով թնդանօթներու 3-4 հրետաշարք, և 120 մ/մ տրամագծով խնդանօթներու երեք հրետաշարք:

Բանակը զուրկ է հեծելազօրքէ և փոխադրութեան միջոցներուն համար՝ վաղըն՝ ուց սայլերէ զատ ուրիշ բան չունի. զուրկ է նաև բժշկական կազմակերպութենէ, հիւանդապահներէ, վիրաւորներու սպասարկութեան յատուկ խումբերէ: Այս վիճակը ներկայացնող բանակ մը բնականաբար չի կրնար յարմարիլ յայ ձակողական պատերազմներու. երկրապահ բանակ մըն է էպպէս. բայց առանձինն՝ Գարատաղցի զինուորը միշտ զարնուրի լի մարտիկ մը եղած է իր քաջութեամբ, տոկունութեամբ, խանդավառ հայրենասիրութեամբ, յաճախ նաև իր անագորոշն, գրեթէ վայրագ կատաղութեամբ: Գարատաղցի զինուորները արտաքոյ կարգի մարզանքի պէտք չունին. իրենց դերը լոկ հայրենի լեռներուն պաշտպանութեան մէջ սահմանափակուած է, և ասոր համար մանուածապատ կրթութեան պէտք չկայ. ամէն Գարատաղցի, տղայ հասակէն, ինքզինքը կը վարժեցնէ այդ գործին: Երբ պէտք ըլլայ, զօրակոչի ալ չեն սպասեր. բոլոր անոնք որոնք կրնան զէնք կրել, կը փութան կը խմբուին իրենց գիւղապետին շուրջը, կին, զաւակ, տուն, ստացուածք, ամէն բան թողլով առանց կարօտի. կուտի բնազդը զօրաւորագոյնն է իրենց մէջ: Ունին երկու տեսակ իրացան, ուսական Պէրտանը, և կրկնահարուած կարճ հրացան մը:

Սովորական ժամանակ՝ Շքօտրայի մէջ կը մնար օսմ. 24րդ անկախ զօրաբաժինը: Երբ ձգտումը միծցաւ Պալքանեան Պետութեանց և Թուրքիոյ միջև, Նազըմ փաշա Շքօտրա զրկեց նաև ըլտիֆներու զօրաբաժին մը: Պատերազմի յայտարարութեան միջոցին, այդ ոյժերուն միացան Ալպանացի իսլամ ստուարաթիւ կամաւորներ: Վերջէն՝ անոնց վրայ պիտի աւելնային տակալին 2. զօրաբանակին պատկանող մէկ քանի հատուածներ, որոնք չէին կրցած միանալ Փուժանօվայի բանակին: Այս ոյժերուն կը հրամայէր Հասան Բիզա փաշա:

Շքօտրա քաղաքը որ համանուն լիճին ծայրագոյն հարաւային կէտին վրայ կառուցուած է, զինուորական տեսակէտով մեծ արժէք չունի: Հիւսիս-արեւելքէն և հարաւէն պաշտպանուած է դաշտային ամրութեանց շարքով մը (Կօլէմի, Պարտանեօլի, Պրտիցա) և արեւմուտքի կողմէն ժոռուտ սարով մը որ աւելի քան 400 մ/մ բարձրութենէ մը կ'իջի լիճին ու քաղքին վրայ, և որուն ծայրագոյն հարաւային կողմը կը զբտ-



1. Գարատաղեան զօրանոց մը. — 2. Զօրավար Նիքօլիէ. — 3. Գնդապետ Նիքօթիէ. — 4. Գարատաղցի հետեւակազօրք

նուր թարապօջի հոշակաւոր դարձած ամրոցը: Եքօտրան պաշտպանող ամրոցները, թարապօջն ալ միասին, կը կազմեն 25 քիլօմէթր շրջագիծով ճակատ մը, զոր Գարատաղցիք չկրցան լիովին պաշարել, մինչեւ որ Սերպերը իրենց օգնութեան չհասան:

Դէպի հիւսիս, Բօտկօրիցայի դէմը, թրքական սահմանագլուխին երկայնքը կը գտնուին շարք մը ամրոցներ (Տէտչիչ, Բօկայի, Եքիբչանիք, Վլատինա, Վրանիա, Հէլմ), որոնք արեւմուտքէն թուրք քաղաքը կը շրջապատեն և զայն կը պաշտպանեն հիւսիսի ու հարաւի կողմէն: Այդ ամրոցները կ'իշխեն նաև Եքօտրա իջնող ճամբուն վրայ:

Եքօտրայի և շրջակայ գաշտին բնակչութիւնը մեծ մասամբ կը բաղկանայ Իսլամներէ: Բայց ամբողջ արեւելեան և հիւսիս-արեւելեան երկիրը կը գրաւեն 27-30,000 Մալխորներ^(*), որոնցմէ մաս մը Գարատաղի հողին վրայ կը գտնուէր 1911ի ապստամբութենէն ի վեր: Կռիւներու միջոցին, Մալխորները յաճախ կատարեալ անձնազոհութեամբ աշակցեցան Գարատաղցուց, մինչդեռ իսլամ Ալպանացիները, — Արնատ թները, — շատ տեղերու մէջ ինքնեկ դաշնակից մը դարձան թուրքերուն:

Երկրին բնական դրութեան բերմունքով, կարելի չէին հարթ գաշտի վրայ բաղխումներ արդէն Գարատաղցուց բանակը, լոկ իր սարերուն պաշտպանութեան և լեռնային յարձակմանց մէջ իրական արժէք մը կը ներկայացնէ, և թէ՛ վարժութեամբ, թէ՛ մանաւանդ կաղձակերպութեամբ, բացարձակապէս անյարմար է հարթ գաշտի վրայ բլրալիք մեծ ճակատամարտներու: Իր մղած կռիւները, ինչպէս պիտի տեսնենք, զանազան դիրքերու և աւելի կամ նուազ տոկուն ամրութեանց դէմ յարձակումներէ կը բաղկանան: Նիքօլա թագաւոր սկիզբէն իրեն նպատակ ընտրած էր գրաւել կարգ մը աշխարհագրական ու քաղաքական դիրքեր, որոնք վերջէն հիմ պիտի ծառայէին Գարատաղի հողային ընդարձակման: Իրեն պէտք էին երկիրներ թէ՛ Նօվի Բաղարի սանճագէն, թէ Եքօտրայի շրջանակէն, և թէ Աղրիականի եզերքէն: Այս նպատակը իրականացնելու համար՝ իր զինուորական ոյժերը բաժնած էր երեք գլխաւոր բանակներու, որոնք ընդհանուր զօրահանութեան հրովարտակին հրատարակութենէն չորս օր ետք (18-21 սեպտեմբեր) մեծ մասամբ կազմ ու պատրաստ էին արդէն, և կազմուած էին հետեւեալ կերպով.—

1. Պատերազմական նախարար զօրավար Մարթինօվիչի հրամանատարութեան տակ գտնուող Հարաւային բանակը^(**) բաղկացած Ա. Զօրաբաժնէն, որ սկսաւ գործել ինչին հարաւ-արեւմտեան կողմէն:
2. Զօրավար Վէլիքօ Լաղարօվիչի հրամանատարութեան տակ գտնուող Կեղրոնի բանակը, բաղկացած Բ. Զօրաբաժնէն և Դ. Զօրաբաժնի մէկ մասէն, որ սկսաւ գործել ինչին հարաւ-արեւելեան կողմէն:
3. Զօրավար Եանքօ Վուքօթիչի հրամանատարութեան տակ գտնուող Հիւսիսային բանակը, բաղկացած Գ. Զօրաբաժնէն և Դ. Զօրաբաժնի մնացեալ մասէն, որ սկսաւ գործել Նօվի Բաղարի սանճագէն:

(*) «Մալխոր» կը նշանակէ «լեռնցի»:

(**) 547 էջի մեր քարտէսին վրայ, սխալմամբ այս բանակը նշանակուած է երբ արեւելեան բանակ: Պէտք է ըլլայ հարաւային բանակ:

նուող Հիւսիսային բանակը, բաղկացած Գ. Զօրաբաժնէն և Դ. Զօրաբաժնին մնացեալ մասէն, որ Բօլաչինէն մեկնելով սկսաւ գործել Նօվի-Բաղարի սանճագէն մէջ, ուր պիտի միանար Սերպերուն:

Վերջին երկու բանակներն ալ ժամադիր եղած էին Եքօտրայի առջեւ, և իրենց բաժին ինկած գործողութիւնները լրացնելէ վերջ պիտի գային միանալ Հարաւային բանակին և օգնել Եքօտրայի պաշարման:

Այս երեք բանակներու վերին հրամանատար Նիքօլա թագաւորն էր, պատուական պատերազմիկ որ իր ռազմագիտութեան փորձերը տուած էր արդէն 1886ի պատերազմներուն մէջ: Իր յառաջացեալ տարիքը սակայն չէր ներեր որ հետեւի այն յոգնեցուցիչ, գրեթէ սպառիչ յարձակումներուն, որոնցմէ պիտի բաղկանային Գարատաղցուց զինուորական գործողութիւնները: Այս պատճառաւ, իրեն փոխանորդ և սպարապետ կարգած էր գահաժառանգ Տանլիօ իշխանը, որ մինչեւ Եքօտրայի առջեւ հետեւեցաւ Կեղրոնի բանակին, որուն գործողութիւնները պիտի պատմենք էն առաջ:



Գարատաղցի մեռեալ մը որուն իբր յուղարկաւոր տղայ մը միայն մնացած է, միւսները բոլոր կռուի գացած են



Գ Լ Ո Ւ Խ Բ.

ԿԵԴՐՈՆԻ ԲԱՆԱԿԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Պատերազմի յայտարարութեան իրիկունն իսկ, Նիքոլա թագաւոր Չէթինեէի մէջ ներկայ գտնուեցաւ Քաթուսքայի գումարտակին զօրանցքին, զոր զիտեց ձիու վրայէ: Յետոյ, ընկերակցութեամբ Սիրքօ իշխանին որ իր մօտ կը մնար, ճամբայ ելաւ դէպի Բօտկօրիցա, ուր հաստատուած էր ընդհանուր բանակետը: Թագուհին, արքայական ընտանիքին բոլոր անդամները, Պալքանեան Պետութեանց Չէթինեէի ներկայացուցիչները և գրեթէ բովանդակ ժողովուրդը իրեն ուղեկցեցան մինչև քաղաքին ծայրը, խանդավառ ցուցերով: Բոլոր եկեղեցիներուն զանգակները կը հնչէին այդ միջոցին և կիներ կ'աղօթէին Սև Լերան զինուց յաջողութեան, շատեր նաև իրենց զաւակներուն հերոսացման համար:

Երբ Նիքոլա թագաւոր Բօտկօրիցա ժամանեց, այնտեղ ալ տեսարանը նոյնն էր, ինչ որ էր Չէթինեէի մէջ: Ժողովուրդը խանդավառ, ամէն կողմ ծաղիկներ, ուրախութեան կանչեր, երգ, պար, գոռում գոչում, միշտ նոյն տոնական օրուան քան պատերազմի սկզբնաւորութեան տեսարանը: Թագաւորին յայտնութիւնը այդ ոգեւորութեան մէջ, սրտերը բոլորովին պիտի խայտացնէր անշուշտ: Ընդունելութիւնը այն աստիճան սիրազեղ եղաւ որ Նիքոլա թագաւոր պահ մը սկսաւ արտասուել յուզմունքէն: Խանդոտ հեռագիրներ կը հասնէին արտասահման, մասնաւորաբար Ամբրիկա գտնուող Գարատաղցիներէ թէ ճամբայ ելած են դրամով ու զէնքով, հայրենիքին բերելու իրենց անձնազոհութեան բաժինը(*): Կարելի չէր

(*) Պոլիս գտնուող յետամնաց Գարատաղցիք ալ որոնք տակաւին առիթ չէին ունեցած հայրենիք մեկնելու, պատերազմի յայտարարութենէն անմիջապէս վերջ ուղեցին մեկնել դէպի Գարատաղ, թուրք կառավարութիւնը ժամանակ մը արգելեց անոնց մեկնումը, առարկելով որ տուրքերն չեն վճարած, և թէ մինչև որ չվճարեն ամբողջովին, չպիտի թողատրէ որ մեկնին: Ռուս դեսպանատան միջամտութիւնը հարթեց այս խնդիրը և Գարատաղցիք կրցան մեկնել: Նոյն բանը եղաւ նաև Հէլէններուն:

մտահող դէմք մը տեսնել: Կիները խռնուած էին զօրանոցներուն առջև, սպասելով իրենց ամուսիններուն որոնք անոնց մէջ ընդի տարազնին կը փոխէին զարատաղեան կանանչորակ զինուորական համազգեստին հետ: Ապահովարար ակադեմիական երեւոյթ ունէին իրենց բնիկ տարազով զոր կապոցներու մէջ կու գային կիներուն կը յանձնէին, բայց վերջապէս համազգեստին տակ նորէն պէտք եղածին չափ արի ու պատկառազողու կը մնար իրենց ընդհանուր երեւոյթը: Շատ զինուորի երու կուրծքին վրայ կը փայլէին ուսասկան պատուանշաններ, ընդունուած Մանչուրիոյ պատերազմներուն մէջ, որոնց մասնակցած էին իրր կամաւոր: Կիները իրենց հետ բերած էին նաև այրերուն ուտելիքը, գունաւոր ահագին թաշկինակներու մէջ: Պղտիկ Գարատաղը անշուշտ չէր կրնար կերակրել 37,000 հոգինոց իր բանակները, բայց ամէն մարդ իր ունեցածը տրամադրած էր կառավարութեան՝ ազգային պատերազմին համար, և կիները կը հայթայթէին իրենց կրցածը, բանակներուն պակտող պարենաւոր



Նիքոլա թագաւորը օթնօթիւրով Բօտկօրիցա կառավարութեան Տեղիէն թուրք հրամանատարը:


Ընչ խուճերուն տեղը լեցնելով մրջիւններու գործունէութեամբ մը: Բօտկօրիցա զոր Նիքոլա թագաւոր ընդհանուր բանակետը ընտրած

էր, Թուրքերու դէմ գործելու կոչուած երեք բանակներուն համար լաւագոյն առանցքը չէր ապահովարար, բայց չըջակայ ճախճախուտներուն մէջ յարմարագոյն դիրք մը գտնելն ալ անհնար էր բոլորովին: Գաղաքը կը գտնուի սահմանագլուխէն երեք մղոն հեռու, և Գարատաղի կը պատկանի Պէրլինի Վեհաժողովէն ի վեր: Ճշմարիտ արեւելեան քաղաք մըն է, աղտոտ ու ողորմուկ, նեղ ու խորտուրտ փողոցներով, որոնց մէջ ամէնէն նկարչագեղ մասը կը կազմէ Իսլամներու թաղը. խեղճ, տկար, ընկճուած թուրք ժողովուրդ մը կ'ապրի այնտեղ, մեկուսացած քրիստոնեայ տարրէն, երկու անիառունակ մզկիթներով:

Սեպտեմբեր 26ի առտուն՝ բովանդակ բնակչութեան խանդավառ «Հուրրա»ներուն մէջ՝ թագաւորը ձի հեծաւ և իր Միրքօ զաւակին ու սպայակոյտին հետ մեկնեցաւ Բօսկօրիցայի մօտակայ բարձունքը: Կեդրոնի բանակը՝ Վրաքայի դաշտին ճահով դէպի Շքօտրա յառաջխաղալու համար, կը ձեռնարկէր գրաւելու մինչև Թուզի երկարող գիծին վրայի ամրութիւնները: Սպայակոյտը շատ լաւ տեղեկութիւն ունէր թշնամի ոյժերուն վրայ և խնամով պատրաստած էր իր յատակագիծը, ինչ որ դիւրամբ ըրոնելի կը դարձնէ առաջին օրերու կայծակնային յաջողութիւնները: Թուրքերը, յանկարծակիի եկած ըլլալով, ժամանակ չէին ունեցած օգնական զօրք ղրկելու այդ ամրոցներուն: Պատերազմի յայտարարութենէն բաւական առաջ՝ Էսաատ փաշա, որ վերջէն Հասան Րիզա փաշայի հետ Թարապօչի և Շքօտրայի հրամանատարութիւնը պիտի ստանձնէր, փորձած էր իր կողմը շահիլ ամրոցներու այդ գիծին մերձակայ Քրիստոնեայ Ալպանացիները, անոնց խոստանալով զէնք ու ռազմամթերք, պայմանաւ որ Գարատաղի դէմ գործածեն: Մայիսորները անյաջողութեան մատնած էին այս ձեռնարկը և Էսաատ փաշա, բարկանալով, մէկ քանի զիւղ այրած էր, յուսալով բռնութեամբ ձեռք բերել այն ինչ որ չէր կրցած ստանալ սիրաշահութեամբ: Բայց ահա յանկարծ վրայ հասած էր Գարատաղի անակրնկալ ընդհ. զօրահանութեան հրամանը: Վերջին պահուն միայն, պատերազմի յայտարարութենէն օր մը առաջ, Օսմ. Արևմտեան բանակին հրամանատարութիւնը խելաբերելով, հրահանգ ղրկած էր Շքօտրայի հրամանատարին որ մէկ քանի վաշտ օգնական զօրք հասցնէ Թուզի, թէ՛ քաղաքը և թէ՛ չըջակայ ամրութիւնները պաշտպանելու համար: Բայց արդէն իսկ ուշ էր: Շքօտրայէն ղրկուած ինը վաշտերը իրենց ճամբան փակուած գտան Մայիսորի երէ, որոնք ամբողջ օրը կատաղի կռիւ մը մղելով արգիլեցին Օսմ. զինուորներուն յառաջացումը: Յաջորդ օրը պատերազմը կը յայտարարուէր, և օր մըն ալ վերջ, Սեպտեմբեր 26ի այդ առտուն, Նիքօլա թագաւոր և իր սպայակոյտը Բօսկօրիցայի մերձակայ գագաթէն կը դիտէին Կեդրոնի բանակը որ գահաժառանգ Տանիլօ իշխանին հրամանատարութեամբ կը սկսէր իր յառաջխաղացութիւնը:

Իրաւուելիք առաջին ամրութիւնը Բլանիցայի դիրքն էր, համանուն լեռան վրայ: Նիքօլա թագաւորին կրտսեր զաւակը, որ թնդանօթաձիգներու հարիւրապետի աստիճան ունէր, ժամը ճիշդ ութին արձակեց թնդանօթի անդրանիկ հարուածը, մինչդեռ ընդհ. բանակետղին երաժշտախում-

Բը Գարատաղի ազգային երգը կը հնչեցնէր: Շուտով սկսաւ թնդանօթի մենամարտ մը երկու կողմերուն միջև: Բասն վայրկեան վերջ, թրքական



Գարատաղից երեք գրաւած աւարը կը փոխարին Բօսկօրիցա


Թնդանօթները լուծեան դատապարտուած ըլլալով, օսմ. զինուորները

քաղաքացիական Բլանիցայի բարձունքը, զոր բոլորովին պարպեցին ցերեկին: Այն ատեն՝ Գարատաղեան հետեւակազօրքը՝ հրետանիէն պաշտպանուած՝ զօրավար Լազարովիչի հրամանատարութեամբ յառաջացաւ յամբարէն ու գրաւեց Բլանիցայի բարձունքն ու համանուն գիւղը, որ սակաւաթիւ հիւղակներէ բաղկացած խեղճուկ չէն մըն է: Թուրքերը՝ Գարատաղցուոց ձեռքը կը ձգէին Տէտչիչի և Բօկայիի ամրութեանց վրայ իշխող պատուական դիրք մը, ուրկէ զօրավար Լազարովիչ յաջորդ օրը օգտուեցաւ՝ հիւսիսէն դէպի հարաւ ուղղուած յարձակմամբ մը խոյանալով Տէտչիչի վրայ: Գարատաղցիք այժերու պէս մազլցեցան լեռն ի վեր, զարհուրելի կատաղութեամբ: Անոնց մէջ ամէնէն խանդավառներն էին պատանիները, որոնք իրենց հայրերուն ու պապերուն քաջագործութեանց վերյուշումներէն խթանուած, առաջ կը սուրային առանց նկատի առնելու թշնամիին ո՛չ ռուսները, ոչ ալ զնոյնները: Մէկ քանին նոյն իսկ իրենց զէնքերը նետած էին, քիչ մը աւելի արագութեամբ հասնելու համար սարին բարձունքը, ուր դանակով, շատ հեղ նաև լոկ բնութեան պարգեւած զէնքով, իրենց ձեռքերով կը կռուէին: Շատեր զո՛հ գացին այդ անհաշիւ խելայեղման օր զիրենք անընտել կը դարձնէր կարգապահութեան և որուն առաջքը չէին կրնար առնել փորձառու սպաներու ո՛չ հայցումները, ո՛չ նոյն իսկ հայտնութիւններն ու սպառնալիքները: Քիչ մըն ալ այդ անձնագոհութեան շնորհիւն էր սակայն որ կարելի եղաւ զնոյնները արագութեամբ փոխադրել սարին իւրաքանչիւր ցցունքին վրայ և անյուսալիօրէն կարճ ատենուան մէջ բնկճել թրքական դիմադրութիւնը, որ նուազ կատաղի չէր: Երկու կողմէն ալ հերոսական մտրտ մը մղուեցաւ, անխնայ, անողորմ կռիւ որ ամբողջ տասնըչորս ժամ բնաւ չղաղրեցաւ, միշտ նոյն կատաղութեամբ, գրեթէ վայրենութեամբ^(*): Ի վերջոյ, Թուրքերը, ընկճուած իրենցմէ բաղմաթիւ թշնամիին անողոք յարձակմանց տակ, տեղի տուին և սպիտակ դրօշը առաջին անգամ ըլլալով երեւցաւ Տէտչիչի ամրութեան վրայ: Թուրք հրամանատարը իր զինուորներուն զըլուխը անցած զնաց անձնատուր ըլլալու Տանիլօ իշխանին որ Բլանիցա կը մնար, և անոր երկարեց իր սուրը: Իշխանը սակայն մերժեց ընդունիլ, ըսելով. «Քաջերը իրաւունք ունին իրենց սուրը պահելու»: Եւ բոլոր սպաները պահեցին իրենց սուրը, ինչպէս ձիաւորներն ալ տէր մնացին իրենց ձիերուն^(**): Գիշերը ուշ ատեն Նիքօլա թագաւոր ընդունեց Տէտչիչի Թուրք հրամանատարը, և ըսաւ անոր. «Իմ հիւրս էք, շնորհակալ եմ

(*) Սրանատի կողմէ հրատարակուած հեռագիր մը կը յիշատակէ թէ Նիքօլա թագաւոր որ Բօտկօրիցայի բարձունքէն ակնատես եղած էր Տէտչիչի յարձակման, խիստ դիտողութիւն ուղղեց թնդանօթաձիգներու հրամանատար զօրավար Պօզովիչի, ռմբակոծման յուր արդիւնքին վրայ, և թէ զօրավար Պօզովիչ, այդ դիտողութիւններէն զգածուելով, անձնասպան եղաւ:

(**) Այս վերջին շնորհը կը պարտէին Նիքօլա թագաւորին որ մեծ սէր կը տածէ ձիերու մասին: Իր հրամանով, բոլոր սպաները տիրացան իրենց ձիերուն, զորս շուտով ծախեցին և Լաւազոյնը ներկայացուեցաւ նոյն ինքն թագաւորին, որ փութաց զնեւ 1000 ֆուրսի:

պատերազմի բախտին օր այս հաճոյքը պարգեւեց ինձի»: Յետոյ, զայն անձամբ, իր օթոմօպիլով, առաջնորդեց Բօտկօրիցա, ապանովցնելով թէ



1. Թրքական քանդուած ամրոց մը. — 2. Թուրք զերիներ կ'երթան իրենց կերակուրը ստանալու. — 3. Թուրք զերիներ կ'առաջնորդուին Բօտկօրիցա

մեծ խնամք պիտի տարուի իր և միւս զերի սպաներուն, ինչպէս նաև զինուորներուն հանգստութեան: Տէտչիչի գրաւման լուրը մեծ ուրախու-

Թիւն պատճառեց ժողովուրդին, որովհետև Շքօտրայի ճամբուն վրայ կա-
րեւորագոյն առաջին դիրքն էր(*): Գարատաղցիք Տէտչիչի մէջ ձեռք ան-
ցուցին չորս թնդանօթ: Զօրավար Լազարովիչ, յաջորդ օրը, 28 Հոկ-
տեմբեր, առանց մեծ դիմադրութեան դրաւեց նաև Բօկայիի ամրութիւնը:

Սեպտեմբեր 29ին իշխան Տանիօ իր ոյժերը կեդրոնացուց մինչև
Վրանիա երկարող թրքական ճակատին դէմ, և ամբողջ օրը անցաւ թըն-
դանօթաձգութեամբ: Գիշերը, իշխանը ընդհանուր յարձակում հրամա-
յեց: Թուրքերուն թնդանօթներէն միայն երկուքը ողջ մնացած էին, բայց
նորէն յաջողեցան ետ մղել Գարատաղցուց առաջին յարձակումը: Այս
վերջինները սակայն, առանց վնասելու, յարձակումը կրկնեցին աւելի
մոլեգնութեամբ, և առտուն կանուխ Վրանիա ստիպուեցաւ անձնատուր
ըլլալ(**): Վրանիոյ գրաւմամբ կեդրոնի բանակը իր երկու կողերուն ըս-
պանացող թրքական բոլոր մարտկոցներն ալ փճացուցած ըլլալով, իշ-
խան Տանիօ յառաջացաւ դէպի Շքիբչանիքի ամրութիւնը որ թուրքին կը
պաշտպանէր, և անոր դէմ ուղղեց միանգամայն վեց հրետաշարքերու
կրակը: Միեւնոյն ատեն զօրավար Լազարովիչ, բանակին աջ թեւին գլուխը
անցած, կը յարձակէր Հէլմի ամրութեան վրայ, մինչդեռ մէկ քանի հա-
զար Մալիսորներ Արդայի և Հօթիթի դէմ կը քայէին: Այս վերջին երկու
խումբերը Շքիբչանիքի և թուրքի Օսմ. զինուորներուն դէպի Շքօտրա
նահանջի գիծը կը կարէին նոյն ատեն: Ամրոցին թուրք հրամանատարը,
Ալի պէյ, Հոկտեմբեր 30ի ամբողջ օրը կատաղի դիմադրութիւն մը բրաւ,
հակառակ Գարատաղցուց հրետանիին մահացու կրակին: Իրիկուան կողմ,
հակառակ Գարատաղցուց ու Մալիսորները կտրած են իր
լուր առնելով որ զօրավար Լազարովիչ ու Մալիսորները կտրած են իր
նահանջի գիծը, բանագնացներ զրկեց Գարատաղցուց բանակը և առաջար-
կեց ամրոցը յանձնել, պայմանաւ որ ինք ու իր զինուորները ազատ ըլլան
կեց սիրալիբ կերպով ընդունեց բանագնացները, բայց մերժեց անոնց ա-
ռաջարկը: Յետոյ առաջարկեց զիրենք ազատ թողուլ, պայմանաւ որ Ան-
թիվարի առաջնորդուն ընդհակոցութեամբ և Գարատաղի ծախքով ու
աւստրիական շոգենաւով Պոլիս զրկուին: Բանագնացները չընդունեցին այս
հակառաջարկը: Անոնց Մեկնումէն անմիջապէս վերջ ուժակոծումը շարու-
նակուեցաւ: Գարատաղցիք մէկ քանի անգամ յաջորդաբար փորձեցին յար-
ձակիլ ամրոցին վրայ որուն մեծապէս փլաստուած ըլլալը գիտէին, բայց
օսմ. պահակազօրքը ամէն անգամուն ալ արիարար ետ մղեց իրենց յար-
ձակումները: Այստեղ ալ պարզուեցան կատաղութեան տեսարաններ,

գիրկ գիրկի կռիւներ երկու կողմի յառաջացեալ խումբերուն միջև: Գիշերը
Գարատաղցիք հանգիստ առին, և յաջորդ օրը, մէկ Հոկտեմբեր, կանուխ
առտու ընէ սկսան պատրաստուիլ ընդհանուր յարձակման մը: Յերեկին ան-
մէն բան պատրաստ էր արդէն, և յարձակման փողը պիտի հնչէր, երբ
թուրք սպայ մը՝ սպիտակ դրօշով մը ներկայանալով ծանոյց Տանիօ իշխա-
նին թէ Ալի պէյ անձնատուր կ'ըլլայ առանց պայմանի: Իր իսկ յայտա-
բարութեամբ, Գարատաղցուց 15 ս/մ արամաքծով թնդանօթները գրե-
թէ քար ու քանդ բրած էին ամրութիւնները որոնք արդէն արտաքոյ
կարգի պաշտպանութեան միջոցներէ զուրկ էին: Հակառակ հերոսական
դիմադրութեան մը, որուն շնորհիւ, մինչեւ անկումը, յաջողած էր Գա-
րատաղցիները հեռու պահել ամրութեան և բաւական ծանր կորուստ
պատճառել անոնց, կը ստիպուէր անձնատուր ըլլալ, որովհետև նահանջի
ճամբան բոլորովին կտրուած էր և կոտին շարունակութիւնն ալ այլ ևս
անօգուտ(*): «Ճակատագիրը այս է կղեր», ըսաւ անձնատուր եղած մի-
ջոցին, ընկճուած ու վշտահար: Թուրք բանագնաց, ն ժամանելէն քիչ ետ-
քը՝ Գարատաղցուց բանակետը հասաւ նաև թուրքի բնակչութեան ընտ-
րուած պատուիրակութիւն մը որ անձնատուր ինքն խոստումը կրկնեց:
Տանիօ իշխան Շքիբչանիք զրկեց երեք վաշտեր՝ որոնք զնդապեան ու
միւս գերիները առաջնորդեցին իր մօտ: Զինուորները հետիտան կը հետե-
ւէին զնդապետին որ ձիով յառաջացաւ մինչև գահաժառանգին բանակետ-
ղը: Տանիօ իշխան նոյնպէս ձիու վրայ կը գտնուէր: Գերիներուն ընդու-
նելութիւնը կը յիշեցնէր ասպետական դարերը: Երբ օսմանցի սպաները
մօտեցան, Գարատաղցիք զինուորական պատիւներ ընծայեցին և նուազա-
խումբը սկսաւ հնչեցնել օսմ. քայլերը: Եօթը օսմանեան վաշտերը, բացի
պաշտպանութեանէն, վար առին իրենց զէնքերը: Գնդապետ Ալի պէյ յի-
տուն քայլ անդին վար իջաւ ձիէն և սկսաւ հետիտան քալել մինչև
գահաժառանգը, որուն յանձնեց իր սուրը: Իշխանը սուրը առաւ, դէպի
զնդապետը դարձաւ և ըսաւ. «Ստ առէք սուրերնիդ, դուք պատիւով
կրեցիք զայն. ձեր զինուորներուն քաջութեան համար կը շնորհաւորեմ
ձեզ»: Յետոյ սուրը վերադարձուց անոր, մինչդեռ նուազախումբը կը
հնչեցնէր Գարատաղի քայլերը, և չորս կողմէն խանդավառ «Հուրրա»-
ներ կը բարձրանային: Իրիկուան կողմ իշխան Տանիօ, եղբայրը՝ Բէթար
իշխանը և ամբողջ սպայակոյտը յաղթական մուտք գործեցին թուրքի քա-
ղաքը: Զինուորական նուազախումբ մը կ'առաջնորդէր իշխանին թափօրը:
Մալիսորները, որոնք ամրոցին անկման մեծապէս նպաստած էին՝ պահա-
կազօրքը կռնակէն զարնելով և անոր նահանջը կտրելով, խնդութեամբ
ընդունեցին յաղթականները:

Տանիօ և Բէթար իշխանները, կուռին ամբողջ տեւողութեան միջոցին
անձամբ կը հրամայէին Գարատաղցուց, առաջինը հետեւակազօրքին
և երկրորդն ալ թնդանօթաձիգներուն: Բէթար իշխան որ պատերազ-

(*) Ալի պէյ վերջէն յայտարարեց նաև թէ Գարատաղցիք, թշնամութեանց
սկիզբէն, կտրած էին շուրի ճամբաները և թէ վեց օրէ է վեր պահակազօրքը խմբու-
ղութ զուրկ էր:

(*) Ըստ Նոյե Ֆրայե Բրեսիլի թղթակցին՝ որ Բօտկօրիցայի մէջ տեսակցած էր Տէտչիչի
թուրք հրամանատարին հետ, ամրոցին պահակազօրքին պատկանող օսմանցի Յոյներ
Սերպեր, Պուլկարներ, պատերազմի յայտարարութեան օրերուն դասակարգ եղած էին
Գարատաղցուց յարձակման նախորդ օրն ալ փախած էին 100ի մօտ նորագիրներ, և
պահակազօրքը բոլորովին տկարացած էր: Իսկ յարձակող Գարատաղցուց և Մալիսոր-
ներուն թիւը կը հասնէր 2000ի: Այս վերջիններուն կողմն էր նաև հրետանիի առա-
ւելութիւնը:

(**) Իմբակոծումէն երեք օր վերջ, Վրանիա կ'այրէր տակաւին:

ցաւազին ժպիտ մը կը թրթոայ: Մայրեր իրենց կուրծքին վրայ կը սեղմեն զինուորական համազգեստ կրող սիրուն մանկիկները»: — Յուզիչ տեսարան մը պարզուեցաւ, երբ գերի ինկած թուրք սպաները ներկայացուեցան թագաւորին: Նիքոյա թագաւոր զեղումով ողջունեց զանոնք, բարի գալուստ մաղթեց և ըսաւ. «Որքան ատեն որ իմ երկիրս մնաք:




Սուրբապետ կէտի ողջուցումը զՅիզուհիկից

Փարատաղցիք ասպետական հիւրընկալութիւն մը պիտի ընեն ձեզի, որովհետեւ խորապէս կը գնահատեն իրենց մեծագոյն թշնամիներուն ցոյց տուած քաջութիւնը»: Սպաները, իրենց կարգին յուզուած, ձերունի վեհապետին ձեռքը սեղմեցին: Նիքոյա թագաւոր յարեց. «Նըջանիկ եմ ձեզ արտօնելով որ շարունակէք կրել ձեր սուրը»: Այդ միջոցին լալուչակի յուզուած էր մանաւանդ զնդապետ Ալի պէյ, որ պատուոյ խօսք

տալով ամէն հսկողութենէ զերծ մնաց Բօսկօրիցայի մէջ, ուր իրեն միացած էր իր ընտանիքը:

Յետոյ Նիքոյա թագաւոր ընդունեց այնտեղ ներկայ գտնուող անձնաւորութեանց և պատերազմական թղթակիցներու խնդակցութիւնները:



Բօսկօրիցա, ընդհանուր թանակաւ Պարատաղի


տոնեաներուն վիճակին: Թէև եղած արիւնահեղութիւններէն սիրտս խորապէս խոցուած է, բայց կը յուսամ որ թուրքիոյ և Փարատաղի պա-

տերազմի դաշտերուն վրայ թափուած արիւնէն նոր դարագլուխ մը պիտի բացուի» :

Գիշերը, ուշ ժամանակ Բօտկօրիցա հասան նաև Տանիօ և Բէթար իշխանները, որոնք շատ սիրազեղ ընդունելութեան մը առարկայ դարձան ժողովուրդին կողմէ : Թագաւորը որ անոնց գալուստին կը սպասէր, համբուրեց զանոնք գորովազին գեղով մով մը : Թղթակից մը այդ առթիւ Բէթար իշխանին մօտենալով, յիշեցուց խօսք մը՝ զոր իշխանը քիչ ժամանակ առաջ, Անգլիոյ Ճօրճ թագաւորին թագադրութեան առթիւ, Լոնտոնի մէջ ըսած էր Յունաստանի գահաժառանգին դաւակին՝ Նէորիոս իշխանին, ապահովցնելով զայն թէ «տարին չլրացած՝ Թուրքի միւս պիտի ուտեն» : Իշխանը ժպտեցաւ ու պատասխանեց. «Այսօր սակայն, մէկ քանի հեղ յաջորդաբար քիչ մնաց որ Թուրքերը իմ միսս ուտէին» : Օսմանցիներուն ցոյց տուած արի դիմադրութեան խոստովանութիւնն էր ասիկա :

Տէաչիչի և Շքիբչանիքի գրաւմամբ Կեղրնի բանակին առջեւ կը բացուէր 'Վրաքայի դաշտը' ուր թրքական Չարդ զօրաբաժնէն ստուար մաս մը հաւաքուած էր, կասեցնելու համար Գարատաղցուց յառաջխաղացութիւնը : Էստատ փաշայի ալպանական բնիկ զօրախումբերը կ'օժանդակէին օսմ. բանակին : Այս դիմադրութիւնը մնաց անօգուտ : Զօրավար Լազարովիչ, հոկտեմբեր 2ին, Տէաչիչի անկման յաջորդ օրը, գրաւեց Հէլմի ամրութիւնը : Բանակը սակայն ստիպուեցաւ ահազջ չորս օր յամենալ, անցնելու համար Հէլմի շրջակայ ճախճախումբերէն և համանուն լիճէն, որոնք մեծապէս կը դժուարացնէին մասնաւորաբար զինուորական իրեղէններու և թնդանօթներու փոխադրութիւնը : Շատ կէտերու վրայ Գարատաղցիք ստիպուեցան ճամբաներ շինել՝ խոշոր թնդանօթները անցընելու համար : Հօկտեմբեր 7ին՝ վերջապէս յաջողեցան ազատիլ ճախճախումբերէն, և համախմբուիլ Բօրլիքի մէջ, ուր Բէթար իշխան, Շքօտրայի լիճին ճամբով իր եղբորը միացաւ, հետը բերելով պաշարման թնդանօթներ : Տանիօ իշխան՝ 'Վրաքա իշխանի առաջ գորանցք մը կատարել տուաւ իր զինուորներուն ու Մալխօրներուն : Յետոյ, հաւաքելով իր հրամանին տակ գտնուող սպաները, անոնց պատուիրեց որ իրենց մարդիկը խոհեմութեան հրաւիրեն, չկրկնելու համար անդրանիկ ընդհարմանց խօլ ու անզգոյշ գրոհները, որոնք այնքան սուղի նստած էին բանակին : — «Լսէք այդ քաջերուն որոնք իրենց պապերուն ընծայած օրինակին կը հետեւին, թէ ժամանակները փոխուած են և անոնց հետ ալ կռուի եղանակները, ըսաւ : Իրենք կ'երեւակայեն այն ատենները ուր գիրկ գիրկի էր կռիւը, կամ սուրով ու դաշոյնով, և ուր թշնամին զինաթափ ընելէ վերջ ձեռքերով կը խեղդէին : Կը մոռնան սակայն որ այն ատենները ո՛չ մալգէրները կային, ո՛չ արագահարուած թնթանօթները, ոչ ալ գնդաձիրները : Ես կը յարգեմ քաջերը, կը հիանամ անոնց վրայ, բայց կը նախընտրեմ իմաստուն ու խոհեմ հերոսները, և կը փափաքիմ որ կարելի եղածին չափ խնայուի իմ քաջ Գարատաղցիներուս կեանքը : անոր շատ պէտք պիտի ունենանք վաղուան ճիգին համար որ շատ հեշտ չպիտի ըլլայ» : Արդէն իսկ քառասնամեայ գահաժառանգը կը խօսէր շատ անուշ

բայց նաև շատ տիրական չեշտով մը որ սովորաբար ամենամեծ տպաւորութիւն կը գործէր : Այս պարագային սակայն՝ իր թեղադրութիւնները պիտի մնային անպտուղ, որովհետեւ Գարատաղցիք, մանաւանդ երիտա-



ԻՌԻՄԻՏԻՆԻ ԱԻՆՐՈՂ
Ինչ որ կը մարդ Շքիբչանիքէն ուրբապետուրէն վերջ


սարդներն ու պատանիները, երբեք չդադրեցան իրենց կեանքը խօլաբար շուայելէ : Այն արիւթիւնը որով օսմ. զինուորները և Ալպանացիները կռուեցան այդ շրջանակին մէջ, աստիճան մը աւելի կը գրգռէր իրենց

հերոսական խանդը, և փողերու կոչն ու սպաներու հրամանները քիչ անգամ կը յաջողէին խղզել իրենց սրտին ազադակը:

Այս խանդավառ բանակը՝ Մարանաթի բարձունքն ի վար խոյանալով, շուտով ընկճեց Վրաքայի դաշտին մէջ փորձուած թրքական դիմադրութիւնը, և Շքօրայի առջեւ հասնելով պաշարեց զայն հիւսիս-արեւելեան ճակատէն:

Զօրավար Վուքոթիչի հրամանատարութեան տակ գտնուող հիւսիսային բանակը նոյնպէս յաղթանակէ յաղթանակ կը դիմէր այդ միջոցին, ինչպէս պիտի պատմենք յաջորդ Գլուխով: Այս բոլոր անդրանիկ յաղթութիւնները մեծ խանդավառութիւն առաջ բերին ո՛չ միայն Գարատաղի, այլ նաև բովանդակ Սլաւ աշխարհին մէջ: Տակաւին միւս Գաշնակիցները պատերազմի չսկսած, բուն կռիւր չբռնկած, Գաշնակիցներու տկարագոյնին ձեռք բերած այդ յաջողութիւնները բարեգուշակ կ'երևային ընդհանուր գործողութեանց համար: Ռուսիայէն, Պուլկարիայէն, Սերպիայէն շնորհաւորական հեռագիրներ կը հասնէին անընդհատ, թէ՛ պետական շրջանակներէ և թէ՛ բարձրաստիճան անձնաւորութիւններէ: Ռուսիայէն հեռագրողներուն մէջ կը գտնուէր նաև համբաւաւոր Իկնաթիէֆ իշխանին (Պոլսոյ երբեմնի ամենազօր դեսպանին) կինը, որ նորանոր յաղթանակներ կը մաղթէր Նիքոյա թագաւորին: Բեթէրսպուրկի Սլաւ Բարեգործական Ընկերութիւնը կ'որոշէր զեղ ու առողջապահական իրեր փութացնել Գարատաղցի վիրաւորներուն: Բանակին բժշկական կազմակերպութեան թերութիւնը ծանօթ էր արդէն, ու ճիշդ այդ ատենները Նիքոյա թագաւորին փեսան՝ Մեծ-Գուքս Նիքոյա-Նիքոյայէվիչ՝ Վիեննայի մէջ գնեց անագին քանակութեամբ բժշկական ու վիրաբուժական առարկաներ, պատգարակներ և վրաններ, զորս անձամբ Գարատաղ պիտի տանէր: Իշխանին կ'ընկերանային իր կինը՝ աղջիկ Նիքոյա թագաւորին, և Պաթէմպէրկի Ճրանց-Նօզէֆ իշխանն ու իշխանուհին (այս վերջինն ալ աղջիկ Նիքոյա թագաւորին): Երբ Ֆիլոմէէն նաև կը նստէին դէպի Քաթարօ և անկէ ալ Չէթինեէ երթալու համար, քարափին վրայ խոնուած էր ամենախիտ բազմութիւն մը, որուն մէջ կը գտնուէին մեծ թիւով խրուաթ ուսանողներ: Մեծ-Գուքսը և իր ճամբու ընկերները թէ՛ ուսանողներուն և թէ՛ խրուաթ ժողովուրդին կողմէ համակրութեան բուռն ցոյցերու աւարկայ զայ ձան, և «Հուրրա»ներ արձակուեցան Գարատաղցոց համար, որոնց անդրանիկ յաղթանակները մեծ ոգեւորութիւն յառաջ բերած էին նաև Աւստրօ-Հունգար Կայսրութեան այդ Սլաւ ոստանին մէջ: Բայց Գարատաղցոց յաղթանակները ամէնէն աւելի ուրախութիւն պատճառեցին Սերպիոյ, Պուլկրասի մէջ՝ լրագիրներու խմբագրատունները, նախարարութիւնները, Երեւոյ. Ժողովը կատարելապէս պաշարուած էին մանրամասնութիւններ խմանալու անհամբերութենէն խթանուած ստուարաթիւ բազմութեան մը կողմը: Յոյցեր տեղի կ'ունենային մայրաքաղաքին և զլիաւոր քաղաքներու մէջ, երգերով ու խանդավառ ազադակներով կը տօնէին դաշնակից քոյր ազգին յաղթանակները: Պէլկրասի Թէրազիթէ հրապարակին վրայ, այդ ուրախ

ցոյցերուն անձնատուր թափօր մը հանդիպեցաւ աւելի քան ութսուն



Շիւքանի թափօր մը տակ գտնուած Մարանաթի վրայ

տարեկան ձերունի Գարատաղցի մը որ իր ազգային տարազը կը կրէր, և սկսաւ ծափահարել զայն խելայեղօրէն: Ծերուկը իր կարգին գրականեաց


վեր, և մէկ քանի հրահրող խօսքեր արտասանելէ վերջ, ըսաւ. «Ջաւակներս, պատերազմը աղէտ մըն է, բայց սրբազան բան մը կը դառնայ, երբ կը մղուի հարստահարուող եղբայրներու ազատագրութեան համար»: Երիտասարդները ուսամբարձ պտտցուցին զայն քաղաքին մէջ:

Գարատաղցուոց առաջին յաղթանակները մեծ ազդեցութիւն գործեցին նաև չրջակայ Ալպանացուոց վրայ: Հոթի, Կուրաի, Քասարուտի ցեղերու պետերը ներկայացան Նիքօլա թագաւորին, և հպատակութիւն յայտնելով խօստացան իրենց ցեղակիցներուն հետ միանալ Գարատաղեան զօրքերուն: Թագաւորը շնորհակալութեամբ ընդունեց անոնց առաջարկը: Շքիւղանիքի գրաւման միջոցին, այս ցեղերը, Գարատաղցուոց յառաջիւղացութիւնը զիւրացնելու համար, կրակի առին Քօլչէքոյ իսլամական գիւղը, որուն բնակիչները, վրէժխնդրութեան համար, իրենց կարգին հրդեհեցին Վրաքա օրթոսոքս գիւղը, համանուն գաշտին վրայ:

Գարատաղի յաղթանակներուն լուրերը շատ դառն, մանաւանդ շատ ալ ապշեցուցիչ տպաւորութիւն մը առաջ բերին Պալսոյ մէջ. ուր մեծ վստահութիւն կար թէ Պալքանեան պատերազմը թուրքիոյ ջախջախիչ յաղթութեամբ պիտի վերջանայ: Եթէ տարակուսողներ ալ կը գտնուէին, գոնէ չէին յուսար որ պղտիկ, տկար, աննշան Գարատաղը նոյնպէս յաղթական մնայ թուրքիոյ դէմ: Ապահովարար Նիքօլա թագաւորին շահած յաղթանակները կարեւոր բաներ չէին, բայց վերջապէս պատերազմի անդրանիկ գործողութիւններն էին, և անոնց անյաջողութիւնը կրնար բարոյական վնասութիւն առաջ բերել թուրք ժողովուրդին մէջ, և գոյացնել դժգոհութիւն մը ուրիշ ընդդիմադիրները պիտի փութային օգտուիլ անշուշտ: Այս պատճառաւ, ամէն կարելի ճիգ թափուեցաւ այդ կոիւններուն նկատմամբ բուն ճշմարտութիւնը ծածկելու համար: Մուխթար փաշայի կառավարութիւնն ու կառավարական մամուլը ձեռք ձեռքի տուին այս գործին մէջ, և արդիւնքը սա եղաւ որ մէկ օրէն միւսը նորանոր, հոգ չէ թէ անգոյ յաղթանակներու լուրեր սկսան Պալսոյ չրջանը ընել, և մոռցնել պատերազմին պատճառաւ առաջ եկած նիւթական անձկութիւնը և ապրուստի սղութիւնը(*): Հազիւ Գարատաղի հետ պատերազմը յայտարարուած, Ալեմսար արդէն իսկ կը ծանուցանէր առաջին յաղթութիւն մը, որուն մէջ 1200 Գարատաղցիներ սպաննուած էին: Ուրիշ հեռագիր մը կ'աւետէր թէ Գարատաղի գահաժառանգ Տանիլօ իշխանը գերի բռ-

(*) Էն առաջ Պալսոյ մէջ հասցը սկսաւ պոկսիլ, աշխատաւորներու զինուորագրութեան հետեւանքով: Կառավարութիւնը, այս վեճակը դարձանելու համար, դադարեցուց փռապաններու զինուորագրութիւնը: Մինչեւ այն տօնն՝ Պալսոյ 4000 փռապաններէն 2800ը դ-րօշի տակ կոչուած էին արդէն: Աղեցին նաև վառելիքայտը, ածուխը և առհասարակ Բուսէլիէն Պոլիս եկած ամէն տեսակ ուտեստեղէններ, — միս, պանիր, և այլն, — որովհետեւ առաքումները դադարած էին և դտնուածն ալ բանակն ու պաշարուելու վտանգին ենթակայ քաղաքները վար կը դնէին: Այս առիթը շահագործեցին Պալսոյ ուտեստեղէնի մեծաքանակ վաճառողները և բարձրացուցին ընդհանուր ուտեստեղէնի գիները: Կառավարութիւնը, իր սովորական անտարբերութեամբ, ոչ մէկ զսպողական միջոց ձեռք առաւ այդ չարաշահութեանց դէմ:

նուած ըլլալով, ճամբայ հանուած է դէպի Պոլիս: Հոկտ. 7ին, Իզսաւ



Սուր գերիները Բոսորդիցաի մէջ

և Թերճիսան կը հրատարակէին համանման հեռագիրներ՝ որոնց համեմատ Սիւլէյման Պաթալ անունով Ալպանացի ցեղապետ մը, բազմաթիւ կամա-



ւորներու գլուխը անցած, Գարատաղ մտած էր և Բիէքա գտնուող Գարատաղցուոց (Կեղըոնի բանակին) նահանջի գիծը կտրած: Օր մը վերջ, իբր թէ Օսմ. Արևմտեան բանակին (Սերպերուն դէմ գործող) հրամանատարէն Պոլիս կը հասնէր հետեւեալ հեռագիրը. — «Շքօտրայի արևելեան կողմը 4000 է աւելի Գարատաղցիներու վրայ յարձակում եղաւ և թըշնամին 1000ի մօտ կորուստ ունեցաւ: Գարատաղցի հարիւրապետ մը և ութ զինուորներ գերի բռնուեցան: Գրուուեցան նաև մեծաքանակ հրացան և վրաններ»: Ուրիշ հեռագիրներ կը ծանուցանէին նաև Գարատաղեան թնդանօթներու գրաւումներ: Մինք լոկ իբր օրինակ այս մէկ քանի լուրերը կը յիշատակենք, անոնց կցելով նաև բուն իսկ կառավարութենէն բղխած հետեւեալ երկու Պաշտօնական Զեկոյցները, պատերազմական անդրանիկ գործողութեանց մասին (*). —

Օգնական ոյժեր հասած ըլլալով Կուսինեէի շրջանակին մէջ գտնուող մեր զօրքերուն, այս վերջինները յարձակողականի սկսան և ետ մղեցին Գարատաղցիները մինչեւ իրենց սահմանագլուխէն անդին: Հիմայ նոյնինքն Գարատաղի հողին վրայ կը շարունակուի պատերազմը: Գարատաղցիք ահագին կորուստ ունեցան: Պէրսնայի շուրջը պատերազմը դեռ կը շարունակէ: Գարատաղցիները իրենց թնդանօթներով կրակ ըրած են Պէրսնայի հիւանդանոցին վրայ: Թուզիի մեր ոյժերը դիւցազնական դիմադրութիւն մը ցոյց տուին Գարատաղցի երկու զօրքաւժներու դէմ, սրոնց միացած էին նաև Մալիսօրներ: Պատերազմը կը շարունակուի արիւնահեղ կերպով: Հարիւրապետ Սալահէտին պէյ և Քեամիլ պէյ փառաւոր յաղթանակով ինկան պատուոյ դաշտին վրայ: Վրանիայի Գարատաղցուոց յառաջխաղացութեամբ՝ երէկ սկսող պատերազմը շատ արիւնալի եղաւ և մեր զօրքերուն յաղթութեամբ վերջացաւ: Թուզիի և վրանիայի մէջ Գարատաղցուոց կրած կորուստները ահագին եղան:

Ինչ որ կար այս զեկոյցին մէջ՝ թուրք զինուորներու քաջութեան, մասնաւորաբար իյնող երկու սպաններուն հերոսութեան մասին, ճիշտ էր, նոյնիսկ պակաս իրականութենէն: Որովհետև, ինչպէս Նիքոյա թագաւոր, իր զաւակները և առհասարակ Գարատաղցի ամէն սպայ կը հաստատէին, Օսմ. զինուորները, — Հայ զինուորներ ալ կային անոնց մէջ, — պատերազմի այդ դաշտին վրայ մեծ արիութեամբ կռուեցան և իւրաքանչիւր բաղխումէ վերջ, եկու կողմերն ալ, յաղթական կամ պարտուած, իրարմէ նախանձելու ոչինչ ունէին: Զեկոյցին մէջ՝ ճշմարտութեան հսկողակ մասերը անոնք էին միայն որոնք կը ծանուցանէին վերջնական յաղթանակ կամ Գարատաղի հողէն ներս եղած արշաւանքներ ու կռիւներ:

Ահաւասիկ նաև միւս պաշտօնական զեկոյց. —
Օտար թերթերէ ոմանք գրած էին թէ Թուզիի մէջ քանի մը հազար Օսմ. զինուորներ և բաղմաթիւ զէնքեր, ինչպէս նաև ութ թնդանօթ Գարատաղցուոց կողմէ գրաւուած են: Թուզի սահմանագլուխին վրայ ամէն կարգի հաղորդակցութենէ և ամրութենէ զուրկ փոքր գիւղ մըն է որ սահմանագլուխուն Բօտկօրիցայի գիծին վրայ հսկելու պաշտօն ունեցող ջոկատին կեդրոնն է: Պաշտօնական տեղեկութեան համաձայն, Թուզիի վրայ յարձակող Գարատաղցիներ ընդհարած են զինուորական ոյժին հետ՝ որ յաջողած է լիճին ճամբով հաղորդակցութիւնը ապահովել կեդրոնի ջոկատին

(*) Պատերազմական նախարար Նազըմ փաշա և Ա. զօրաբանակին հրամանատար Էօսէր Նավէր փաշա, Սեպտեմբերի այդ օրերուն Կայսեր կողմէ ընդունուելով, Ն. Վեհափառութեան կը ծանուցանէին թրքական յաղթանակներ Գարատաղցուոց դէմ:



ՉԻԻՆԵՆ. ՄԱՅՐԱՔԱՆԿՐ ԳԱՐԱՏԱՆԻ

Ն. Գոթրայի և Թարապոշի կատարում գործող թիւները

հետ Այս առթիւ լիճին վրայէն փոխադրուող անարժէք ու անպէտ ութ հին թնդա-
 նօթներ գրաւուած են Գարատաղցիներու կողմէ: Յարձակում գործող Գարատաղցի-
 ներուն բուն կերպով և օրերով դիմադրած Օսմ. զինուորական ոյժը զոհ գացած է
 ըմբոստ Մալխօրներու մէկ դաւադրութեան: Այս Մալխօրները Օսմ. զինուորներու
 ետեւի կողմէն վատաբար յարձակում գործած են: Այս առթիւ երկու ջոկատներուն
 հրամանատարներուն և սպաներէ ու զինուորներէ մէկ մասին սպանուելուն վրայ,
 Օսմ. զինուորները, ջոկատ մը թողլով, Հիլի ճամբով և կանոնաւոր կերպով նահան-
 ջած են: Թուզիի մէջ մնացած ջոկատը կրցած է զինուորական պատիւը պահպանելու
 պարտականութիւնը փառաւոր կերպով կատարել: Ահա ուրեմն Գարատաղցիներուն կող-
 մէ եբր թէ կարեւոր ճակատամարտ մը ներկայացուած Թուզիի դէպքը սահմանագլխի
 պարզ դէպք մըն է: Պոռտախօսութեամբ իրենց փոքր մէկ յաջողութիւնը չափազան-



Ձեթինեցի գումարտակին մեկնումը դէպի կռուի դաշտը

ցող Գարատաղցիք տակաւին չեն կրցած Օսմ. սահմանը անցնիլ, ինչ որ կը հաստատէ
 վերոյիշեալ յայտնութիւնները: Հազարաւոր Մալխօրներու օգնութեամբ կռուող երկու
 Գարատաղցի զինուորական ջոկատներ հինգ օր Օսմ. զինուորական ջոկատի մը կողմէ դի-
 մադրութիւն տեսած են, ինչ որ զինուորական տեսակէտով գնահատելն է իբրեւ զին-
 ուորական փառաւոր յաջողութիւն մը: Բուն ճակատամարտները ասկէք վերջն է որ
 պիտի սկսին:

Ներքին գործոց նախարարութիւնը որ այս զեկոյցը հրատարակութեան
 յանձնած էր՝ կամ այն է որ ճշմարտութիւնը ծածկելու կը ջանար և կամ
 իրօք գաղափար չունէր դարատաղեան սահմանագլխին այդ կարեւոր կէ-
 տին, մանաւանդ զայն պաշտպանող Շքիրչանիքի ամբողջեան վրայ:
 Բայց այդ զեկոյցին ամէնէն նշանակելի մասը այն է ուր կը ծանուցուի
 թէ «Գարատաղցիք տակաւին չեն կրցած օսմ. սահմանը անցնիլ և թէ
 բուն ճակատամարտները ատկէ վերջը պիտի սկսին»: Այն պահուն ուր այս
 զեկոյցը կը հաղորդուէր Պոլսոյ մամուլին, Գարատաղի երեք բանակները
 ո՛չ միայն Օսմ. սահմանը անցած էին միանգամայն երեք կէտերէ, այլ
 մանաւանդ, բացի Շքօտրայէն և անոր իշխող Թարապօչի ամրոցէն, քիչ

շատ կարեւորութիւն ունեցող բոլոր գիրքերը գրաւած էին արդէն և կը փութային Շքօտրայի շուրջը համախմբուելու : Չափազանցուած էին նաև Գարատաղեան կորուսաններուն նկատմամբ Պոլսոյ թերթերուն մէջ երեւցած լուրերը : Մինչև Հիւսի (որ նաև Հում կը կոչուի) առջև՝ Կեղրոնի բանակը ունեցած էր 200 մեռեալ և 600 վիրաւոր, Թուրքերու 500 մեռեալներուն և 800 վիրաւորներուն դէմ : Միւս բանակներու կորուստները պիտի տեսնենք իրենց գործողութեանց ընթացքին :

Այստեղ կ'արժէ յիշել որ զինուորական իշխանութիւնը Հոկտեմբեր 17էն սկսեալ գրաքննութիւն հաստատեց Պոլսոյ ամէն լեզուէ թերթերուն համար : Չմոռնանք յիշատակելու նաև թէ Իթիհատը, իշխանութեան գլուխ անցնելուն պէս, յայտարարութեամբ մը դատապարտեց նախորդ կառավարութեան կողմէ ճշմարտութիւնը ծածկող զեկոյցներու հրատարակութեան դրութիւնը, աւելցնելով որ մինչև այն օրը շարունակ խաբած էին ժողովուրդը :



ՅՈՒՂԱՐԿԱՌՈՐՈՒԹԻՒՆ ՄԸ

Չախ կողմէն՝ դազաղին կը հետեւին Բէթար, Տանիւօ և Միրքօ իշխանները



ԳԼՈՒԽ Գ.

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԲԱՆԱԿԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՆՆԵՐԸ

Հիւսիսային բանակը՝ որուն կը հրամայէր զօրավար Եանքօ Վուքոթիչ, և որ կազմուած էր Գ. զօրարամնէն ու Դ. զօրարամնի մէկ մասէն, պաշտօն ունէր՝

1. Յարձակողականի ձեռնարկելու Իրէքի դէմ, միանգամայն Պէրանայի և Բլավայի ճամբով :

2. Միւսնոյն ատեն Նոյի Պաղարի Սանճագին հիւսիսային մասը մաքրելու թուրք սահակախումբերէն, և միանալու Սերպերուն, որոնք սերպիական սահմանազուխը պիտի անցնէին նոյն նպատակով :

3. Իրէքէն քայելու Տիաքօվայի, յետոյ Բրիզրէնտի վրայ, ուր պիտի յանգէին իր գործողութիւնները : Բրիզրէնտէն, Գարատաղեոց տրամադրելի ոյժերը պիտի իջնէին Շքօտրա, զօրացնելու համար քաղաքը պաշարող Հարաւային և Կեղրոնի բանակները :

Պատերազմի յայտարարութեան օրը, սեպտեմբեր 25ին, այս բանակը համախմբուած էր Քօլաչինի մէջ. յաջորդ օրն իսկ մեկնեցաւ այդ քաղաքէն և Անտրիէվիցայի ճամբով սահմանազուխը անցնելով բաժնուեցաւ երկու թևի, որոնցմէ մէկը՝ հիւսիսի կողմէն՝ քալեց Պէրանայի վրայ, և միւսն ալ՝ հարաւի կողմէն՝ Բլավայի վրայ :

Պէրանա, Բլավա, Պիէլօբօլի, Բլէվլիէ՝ Թուրք նիզամիէներէ պաշտպանուած ամբողջութիւններ էին : Պատերազմի յայտարարութեան օրը, այդ կանոնաւոր զօրքին միացած էին բէտիֆներ, մուսթահֆրզներ և ալպանացի կամաւորներ : Իրենց ընդհանուր թիւը կը հասնէր տասնեակ մը վաշտի (6-8000 հոգի) : Լեռնուտ, խորտուբորտ երկիր մըն է Նոյի-Բաղարի Սանճագին այդ մասը, և քիչ մը ամէն կողմ՝ հետզհետէ բացուած փոսեր,

բնական խրամներ կը գտնուին, որոնք կը դիւրացնեն հրոսակի կռիւներն ու դարանները և անհնարին կը դարձնեն զինուորական կանոնաւոր ու մէթօսիկ գործողութիւններ: Պէրանա Սերպիական հողէն 20 ժամ հեռաւորութեամբ քաղաք մըն է, հազիւ 500 տունով, մեծ մասամբ Իսլամ: Քաղաքին շուրջը սակայն կը գտնուին աւելի քան քսան գիւղեր, ամբողջովին Սերպ օրթոտոքս ժողովուրդով մը, որ Գարատաղցոց բարբառը կը խօսի: Սերպերը բաղմամբիւ են մանաւանդ Պէրանայի կողմերը և Պիէլօբօլի (Ա.քօվա) չրջակայ մասերուն մէջ:

Պէրանայի կողմէն՝ հազիւ սահմանագլուխը անցած, Գարատաղցիք ստիպուեցան մղել շարք մը աննշան կռիւներ ցրիւ ցրիւ Օսմ. պահակա-




Նօւի Բաղարի Սանճագը և Հիւսիսային բանակին գործողութեանց շրջանակը

վերջ գտաւ, բայց յաջորդ օրը, առտուն կանուխ վերսկսաւ աւելի մոլեգնութեամբ: Թուրք պահակազօրքը սակայն բոլորովին տկարացած էր, որովհետև Բօկանայի զրաւման զիշերն իսկ՝ 1500-2000 ռէտիֆներ և այլպանացի պաշարողութիւններ բանակետող լքելով՝ փախած էին դէպի Բօճի: Գարատաղցիք հալածեցին զանոնք, բայց հազիւ 200 հոգի և երեք թընդանօթ կրցան ձեռք անցընել. միւսները, մեծ մասամբ զէնքերնին թողլով, ցրուեցան Սանճագին այլևայլ կողմերը: Պէրանայի պահակազօրքը կը բաղկանար մէկ քանի զօրախումբերէ, — ընդամէնը 700 նիզամիէ և 500 ռէտիֆ՝ 14 քրուրի թնդանօթով, — որոնք, հակառակ Գարատաղցոց թուական մեծ առաւելութեան, շարունակեցին կռուիլ զմայելի արիւնթեամբ մը: Քաղաքին մէջ գտնուող Իսլամներու գրեթէ ամբողջութիւնը, և ասոնց մէջ կիներ ու տղաք, ձեռք ձեռքի տուած էին պահակազօրքին հետ և կը կռուէին անոնց մօտ: Յերկուան դէմ սակայն, Գարատաղցիք կտրեցին զանազան դիրքերու վրայ բաժնուած Օսմ. զինուորներուն յա-

խումբերու և աւելի կամ նուազ կարևոր ամրութեանց դէմ, և շատ յամր, դժուարին ու չարչարալից յառաջխաղացութեանէ մը վերջ, յաջողեցան հասնիլ Բօկանայի լարձունքին առջև, որ Պէրանայի արևմտեան կողմը կը գտնուի, և զոր կատաղի կռիւէ մը վերջ միանգամայն երկու կէտերէ զրաւեցին հօկտմբեր երկուքին. ձեռք ձրգելով թրքական երկու թնդանօթներ, առատ ուղմամթերքով: Գիշերը վրայ հասնելով, կռիւը

րարերութիւնը, և գրեթէ ամէն կողմէ պաշարեցին զանոնք: Այդ յուսահատական դիրքին մէջ գտնուելով հանդերձ, պահակազօրքը շարունակեց դիմադրել բոլոր յարձակումներուն, և ժամը 11ին միայն, երբ այլևս պաշտպանութիւնը բոլորովին անհնարին դարձած էր, սպիտակ դրօշ պարզեց, Գարատաղցոց ձգելով 500 գերի, 14 թնդանօթ, որոնցմէ 12ը արագահարուած Քրուրներ, 7-800 հրացան և առատ ուղմամթերք, ամէնքն ալ անեղծ վիճակի մէջ: Պահակազօրքէն մաս մը միայն յաջողեցաւ խզել պաշարման գիծը և խուսափիլ, հետը տանելով մէկ քանի թնդանօթներ: Քաղաք մտնելէ առաջ՝ զօրավար Եուքօթիչ իր սպայակոյտին հետ այցելեց ձիուրճէվօ-Իւթուպօվի սերպ վանքը որ Հին-Սերպիոյ պատմութեան նշանաւորագոյն յիշտակարաններէն մէկն է և համբաւաւոր ուխտատեղի մը Սլաւ ցեղին համար: Այնտեղ պատարագ մատուցուեցաւ և ազօթքներ եղան Նիքօյա թագաւորին արեւշատութեան ու Գարատաղի բանակներուն յաջողութեան համար: Յետոյ, զօրավար Եուքօթիչ, հանդիսական թափօրով մտաւ քաղաք և մեծ խնդութեամբ ընդունուեցաւ օրթոտոքս ժողովուրդին կողմէ որ կուլար հրճուանքէն: Զինուորական մթերանոցներուն մէջ գտնուեցան երկու ամսուան բաւելու չափ պաշար և ուղմական իրեղէններ: Զօրավար Վուքօթիչ անմիջապէս առժամեայ վարչութիւն հաստատեց Պէրանայի մէջ, գարատաղցի պաշտօնատարներով նամակատունն ու հեռագրատունն ալ յանձնուեցան զինուորականներու: Յետոյ, բնակչութեան դիմումին վրայ, եօթ սակաւաթիւ վաշտեր կազմեց բնիկ օրթոտոքս ժողովուրդէն, որոնք սկսան մարզանք կատարել Գարատաղցի սպաներու հրամանին տակ:

Պէրանայի յաղթութիւնը մեծ խնդութեամբ ողջունուեցաւ թէ՛ Նիքօյա թագաւորին և թէ՛ ընդհանուր Գարատաղեան բանակներուն կողմէ, ու բոլորովին աւելցուց ժողովուրդին ոգևորութիւնը: Լուրը Բօսկօրիցա հասած էր իրիկունը: Նիքօյա թագաւոր իսկոյն հացկերոյթի հրաւիրեց Սերպիոյ, Պուլկարիոյ և Յուլաստանի ներկայացուցիչները: Արտասանուեցան խանդավառ ճառեր: Նիքօյա թագաւոր, դաշնակիցներու ներկայացուցիչներուն հնորհաւորութեանց ի պատասխան, արագ ու ջանքատէր յաղթութիւններ մաղթեց նաև անոնց բանակներուն: Յաջորդ առտուն, կանուխէն, թնդանօթի 21 հարուածներ ժողովուրդին կը ծանուցանէին յաղթանակին լուրը: Արքայական ապարանքը չրջապատուած էր մեծ բաղմութեան կողմէ: Մէկ քանին՝ թնդանօթի ձայներուն ակնարկելով՝ կ'ըսէին. «Թուրքիոյ մահուան զօղանջն է»: Յետոյ, արքայական անձնապահ զօրազունդին նուազախումբը փողոցներէն անցաւ ուղմաշունչ եղանակներ նուազելով: Քիչ ետքը յայտնուեցաւ նոյն ինքն թագաւորը, հեծած իր սպիտակ ձիուն վրայ, իրեն հետեւորդ ունենալով սպայակոյտը: Հակառակ յորդանոս անձրեւին, ժողովուրդը փողոցը կը մնար և մոլեգնութեամբ կը ծափահարէր իր սպիտակ ձիուն վրայ սիգացող ձերունի վեհապետը, որ Գարատաղցոց յամառ, խստամբեր, յանդուգն ու կռուասէր ժողովուրդին մարմնացումն է ինքնին: Պէրանայի յաղթութեան լուրը այսքան մեծ ուրախութիւն պատճառած էր անոր համար որ նախաքայն էր Սերպբա-



Թուրք զինուորներ Պէրանայի խորանային խորանային մէջ

նակին հետ գործակցութեան, և անոր շնորհիւ կարելի կ'ըլլար իրարմէ անջատել Սանճագին հիւսիսային մասին մէջ ցրուած Օսմ. ոյժերուն և Իրէքի յարաբերութիւնները (*):

Այս կարեւորութիւնը զգայուն համար է որ Իրէքի հրամանատարը փորձեց ետ առնել քաղաքը: 2000 հոգինոց զօրաւոր արշաւախումբ մը, որուն կը հրամայէր ալպանացի ահարկու ցեղապետ մը՝ Ասրմ պէյ Մահ-մուտ-Պէկօվիչ, Իրէքէն ճամբայ ելաւ դէպի Պէրանա: Հրամանատարը սակայն կը յառաջանար առանց հետազօտիչի, լոկ իր ոյժին վստահելով, ինչ որ պատճառ դարձաւ ահաւոր աղէտի մը: Արշաւախումբը հասած էր Բուկօ, Իրէքէն 15 քիլոմէթր հեռու, դէպի արեւմուտք: Այդ դիրքին հիւսիս-արեւմտեան կողմը ապառաժուտ կիրճ մը կար ուրկէ անհրաժեշտաբար պէտք էր անցնիլ, և որուն երկու կողերը բացարձակապէս անմերձենալի էին: Ասրմ պէյ անփութօրէն մխրճուեցաւ այդ նեղ կիրճին մէջ, առանց մտքէն անցընելու թէ Գարատաղցիք արդէն իսկ գրաւած են կիրճին բարձունքը և իրեն կը սպասեն անձայն անչուկ: Զօրավար Վուքօթիչ, ժամանակին լուր առած ըլլալով, զօրաւոր ջոկատի մը պաշտպանութեան յանձնած էր այդ կիրճը, ուրկէ վստահ էր թէ արշաւախումբը պիտի անցնի: Գարատաղցիք թողուցին որ Ասրմ պէյի մարդիկը ամբողջովին մխրճուին կիրճին մէջ և հասնին անոր ամէնէն նեղ անցքերուն: Այնտեղ՝ զարհուրելի տեսարան մը պարզուեցաւ: Կիրճին երկու կողմերէն միանգամայն, Գարատաղցիները դժոխային կրակ մը տեղացնել սկսան դէպի վար, յաղթական ազաղակներով զորս հրազէնի անվերջ բոմբիւնները չէին կրնար խեղդել: Վարը՝ տեսարանը բոլորովին սարսափելի էր: Ասրմ պէյ և իր մարդիկը յանկարծակիի եկած ճշմարիտ ականատի մը մէջ ուրկէ այլևս ոչ մէկ յոյս ունէին ազատելու, չկրցան ոչ իսկ հրացան մը արձակել, որովհետև չէին տեսներ թշնամին: Վերէն՝ գնդակները կը տեղային անընդհատ և մարդիկ կ'իջնային իրարու՝ ետեւէ, երբեմն տամնեակներով: Ազաղակներ, յիշոցներ, կատաղի ունոցներ կը բարձրանային ամէն կողմէ:

Արշաւախումբը մեծ մասամբ կը բաղկանար Իրէքի պահակազօրքին պատկանող թուրքերէ, որոնք «Ապիտակ թուրքեր» կը կոչուին իրենց ճերմակ գդակներուն համար, և Արնաութներէ, ամէնքն ալ ահարկու ռազմիկներ, որոնք այդ անել դրութեան մէջ կը մուչէին չղթայուած առիւծներու պէս, մինչդեռ Գարատաղցիք կը շարունակէին անխնայ զընդակ տեղացնել իրենց վրայ: Միջոց մը՝ գոռ ձայն մը բարձրացաւ:

(*) Պէրանայի յաղթանակով՝ Գարատաղցուց ձեռքը ինկած Օսմ. զերիններուն թիւը կը հասնէր 6000ի: Գարատաղցիք սովորաբար լաւ կը վարուէին անոնց հետ, հոգալով ուղղածնին: Գահատառանգը 10,000 տուփ սիկարէթ բաժնած էր անոնց: Եւրոպացի թղթակից մը՝ այդ զերիններուն ակնարկելով կը գրէր, «Թող զարմանալի չթուի թուրք զինուորներուն պէս կորովի պատերազմիկներու անձնատուր ըլլալը: Ալպանիոյ ապստամբութենէն ի վեր, Ալպանացի հրոսախումբերը շարունակ գանոնք կը նեղէին, կը կոտորէին, անոնց զրկուած դրամը կը յափշտակէին, մէկ խօսքով անոնց վիճակը կը շատ անտանելի դարձած էր, և անձնատուութիւնը փրկութիւն մը կ'երեւար: Որքան ատեն որ այս տեսակ զինուորներ ունենան իրենց դէմը, Գարատաղցիք միշտ պիտի յաղթեն:»

— Գաղղեցուցէ՛ք կրակը, խնայեցէ՛ք գնդակները, կը պոռար Գա-
րատաղցուց հրամանատարը :

Հրամանը լրացնելու պէտք չունեցաւ. որովհետեւ Գարատաղցիք հաս-



Գարատաղցուց ահաբեկ յարձակումը Բօքլինի լեռն է վեր

կցան թէ ինչ ըսել կ'ուզէ: Եւ ահա հրացանները մէկ կողմ նետելով, սկսան վերցնել խոշոր ժայռեր զորս առանց նշանառութեան կը գլորէին բարձունքն է վար: Վայրագորէն հրճուագին կանչեր կ'ընկերանային ար-
ձակուած իւրաքանչիւր ժայռի, զարհուրելի հակադրութիւն մը կազմելով

վարէն խուժող յուսահատ կատաղութեան ոռնոցներուն հետ: Եւ ժայռերը աւելի մարդ կը սպաննէին քան գնդակները: Տեղ տեղ՝ հինգ տասը հոգի իրարու վրայ կը ձգձուէին, միակ զանգուածի մը կը վերածուէին, կը դառ-
նային անձանաչ խառնուրդ մը՝ միսի, իրարու անցած ոսկորներու, հողի և հագուստի կտորուանքներու: Գութ չկար Գարատաղցուց քով. բայց վարը անյոյս մեռնողներն ալ երբեք կարեկցութեան կոչ մը, անձնատուութեան խոստում մը չըրին. և անողորմ սպանողը շարունակուեցաւ ժամերով: Երբ Գարատաղցուց վայրենութիւնը յագեցաւ, Ասըմ պէյի արշաւախումբէն 280 հոգի միայն կը մնային. մեծ մասամբ վիրաւոր: Վիրաւորներուն մէջ կը գտնուէր նաև Ասըմ պէյ: Մնացեալ 1720 հոգին մեռած էին, և կիրճը իր ամբողջ երկայնքին վրայ զարհուրելի դիակնարան մը դարձած էր:

Ապահովաբար ասիկա աւելի կարեւոր յաղթանակ մըն էր քան Պէրա-
նայի առումը, և ատոր հաւար է որ անհունապէս աւելի ոգեւորութեամբ ընդունուեցաւ Բուկոփօի կիրճին այդ բարբարոս սպանդին լուրը(*): Նիքո-
լա թագաւոր, ինչպէս իր գոհանակութեան, Գարատաղի գինուորական ամենաբարձր վարձատրութիւնը, Օպիլիչի պատուանշանը հնորեց զօրա-
վար Վուքոթիչի: Այդ յաղթութեամբ, Իրէքի Օսմ. ոյժերը այլևս անկա-
րող կը դառնային ամէն յարձակողական շարժման. չուտով իրենք ալ պի-
տի ընկճուէին արդէն: Երջակայ իսլամ Արնաութներն ալ՝ Ասըմ պէյի ձախողութեան վրայ բարոյապէս ընկճուած, տրամադիր չէին երեւար ոյժ տալու Օսմանցուց, որոնք արդէն շատ տեղեր Արնաութներուն կողմէ ա-
ւելի վաստակիւն ու լքում տեսան քան իրական աջակցութիւն:

Պէրանայի գրաւման միջոցին՝ զօրավար Վուքոթիչի բանակին աջ թե-
ւր կը քայլեր Բլավայի և Կուսինեէի վրայ: Գարատաղցիք այս կողմէն ի-
րենց դէմ արգելք ունէին Վիզիթօր լեռան ամրութիւնը, զոր հոկտեմբեր 30ին գրաւեցին՝ հակառակ Թուրք պահակազօրքին ուժգին դիմադրու-
թեան: Այս առաջին յաղթանակը իրենց ձեռքը ձգեց չորս թրքական զըն-
դաձիրներ, չորսն ալ լաւ վիճակի մէջ, թէև առանց ռազմամթերքի, ու
դաձիրներ, չորսն ալ լաւ վիճակի մէջ, թէև առանց ռազմամթերքի, ու
երկու դրօշ: Թուրքերը իրենց յետին գնդակաշարքը սպառած էին տեղի
տալէ առաջ: Վիզիթօրէն անցնելով, Գարատաղցիք իրենց յարձակումը
կեդրոնացուցին Բլավա գիւղաքաղաքին դէմ, ուր բաւական կարեւոր
պահակազօրք մը կը գտնուէր և ուր կեդրոնացած էին մանաւանդ Բակո-

(*) Ասըմ պէյ և իր արշաւախումբէն գերի ինկած մարդիկը երեք օրուան ճամբայ հետիոտն կտրելով տարուեցան Բոստորիցա Եւրոպական թերթի մը թղթակիցը հե-
տեւալ կերպով կը նկարագրէ ահաւոր սպանդին այդ վերապարողները. — «Տեսայ գա-
նոնք շատ տխուր վիճակի մէջ, վրանին գլուխնին պատռած. նստեր էին շուկան, ցե-
խի մէջ, ամէնքն ալ վեց առ վեց իրարու կապուած: Այս դժբախտներուն դէմքին վրայ
տակաւին վառ կը մնայ զարհուրելի սպանդին տպաւորութիւնը: Ոչ ոք կը հա-
մարձակի աչուքները վեր բարձրացնելու, վախնալով որ Գարատաղցուց կողմէ ար-
ձակուած ահապէն ժայռերը այդտեղ ալ կընան իրենց վրայ գլորել գլխու պոյթ
տուող անասաններ բարձրութիւններէ: Մարդ սարսուռ կը դգայ զիրենք՝ ցնցող
սարսափը նշմարելով»:

զբաւել երկու բարձունքները և հոկտեմբեր 18ին Իրէք մտաւ առանց դիմադրութեան: Սլաւութեան աչքին՝ բարոյական մեծագոյն յաղթանակն է որ կը տանէր պատերազմի յայտարարութենէն ի վեր: Նիքօլա թագաւոր հրճուանքով լսեց այդ յաղթութեան լուրը, հակառակ անոր որ լաւ զիտէր թէ Գարատաղցոց արիւնով գրաւուած սրբազան քաղաքը Սերպերուն պիտի մնար վերջ ի վերջոյ: Շնորհաւորական հեռագիրներ հասան Ռուսիայէն, Սերպիայէն ու Պուրկարիայէն: Թագաւորին երկու փեսաները՝ Նիքօլա-Նիքօլայէ վիչ Մեծ-Դուքան ու Պաթէնայէրի իշխանը որոնք Բոս-



Օսմ. գերիներու խումբ մը

կօրիցա հասած էին, անձամբ շնորհաւորեցին իրենց աները, որ տարուած յաղթանակին ի յիշատակ զօրահանդէս մը կատարել տուաւ: Ասդին, Իրէքի մէջ, բովանդակ բնակչութիւնը ծաղկակնորով և յաղթանակի երգերով ընդառաջ գնաց Գարատաղցի զօրավարին, որ խանդավառ ընդունելութեան մը առարկայ դարձաւ: Պղտիկ տղաք ու աղճիկներ երգելով եկան շրջապատեցին զօրավարը, որուն ձեռքերը կը համբուէին: Շատեր կ'արտասուէին ուրախութենէն: Բոլոր եկեղեցիներուն մէջ միեւնոյն ատեն գահաբանական աղօթքներ կատարուեցան և մաղթանքներ եղան ընդհանուր, դաշնակիցներու բանակներուն յաջողութեան համար:

Օր մը ետքը Սերպերը նոյնպէս Իրէք կը հասնէին Միթրովիցայէն զոր գրաւած էին հոկտեմբեր 13ին:

Մինչև Իրէք՝ բոլոր գրաւուած վայրերուն ժողովուրդը որ մեծ մասամբ Սերպերէ կը բաղկանար, իր ազատարար կ'ընդունէր Գարատաղի բանակները: Զօրավար Վուքօթիչ ամէն տեղ խսկոյն կը հաստատէր առժամեայ վարչութիւն, գարատաղցի կառավարիչներ և ոստիկանութիւն: Նիքօլա թագաւորին կողմէ եղած խիստ պատուէրներու համաձայն, յաղթականները չէին նեղեր իսլամները, ինչպէս նաև Արնաուլթ տարրը: Ընդհակառակը, կ'աշխատէին ամէն հնարաւոր միջոցներով զանոնք սիրաշահիլ: Կուռի պահուն վայրագ, անողորմ, գազանային բնազդներով և ախորժա-

կով սողորուած Գարատաղցին, դէնքը վար դնելէ անմիջապէս վերջ գարմանալի կերպով կը կերպարանափոխուէր, կը դառնար երևակայութիւնք ամէնէն անվնաս արարածը, քիչ մը կոշտ թէև, — ինչպէս ամէն լեռնական ցեղ, — բայց չափազանց հեզահամբոյր և վեհանձն: Իրէքի գրաւումէն առաջ, Զլիէթ լեռան կողերուն վրայ, անոնցմէ մէկը Օսմ. բանակին գործակցող Արնաուլթ մը ծունկին տակ առնելով, ախուսներովը խածատած էր անոր վիզը: Կուռը դադրելէն վերջ, նոյն Գարատաղցին միևնոյն Արնաուլթին վէրքերը, — իր ախուսներով բացուած վէրքերը, — անձամբ կապելով յանձնած էր վիրաւորներու փոխադրութեան յատկացուած խումբերուն, յանձնարարելով որ լաւ հոգ տանին անոր: Պատերազմի յայտարարութենէն առաջ գոյութիւն ունեցող վրէժներու հաշիւներն իսկ չէին ուզեր կարգադրել, հիմայ որ այլևս թուրք իշխանութիւն չկար գիրենք արգելող, և իրենց թշնամիները ձեռքերնին անցած էին իբր գերի:

Մինչդեռ զօրավար Վուքօթիչ դէպի Իրէք կը քալէր, հիւսիսային բանակէն անջատուած մաս մը կը յառաջանար Նօվի-Բազարի Սանճագին հիւսիսային մասին մէջ, Սերպերուն հետ ձեռք ձեռքի տալու և այն կողմերու թուրք պահակախումբերը բնաջինջ ընելու ծրագրով: Շլեսիսային բանակին այս թեւը՝ Մօյքօվայէն անցնելով, սեպտեմբեր 30ի օրը, արշալոյսին յարձակեցաւ Պիէլօրօլի (Աքօվա) թրքական ոյժերուն դէմ, և ամբողջ սասը ժամ տևող ախուսոյի կուռէ մը վերջ, հրետանին պաշտպանութեամբ յաջողեցաւ անցնիլ Լլոմ գետէն: Գարատաղցի խսկոյն բանազնայններ զրկեցին թուրք պահակազօրքին, հրաւիրելով դայն որ անձնատուր ըլլայ և երկու կողմին ալ իննպէ աւելորդ արիւնահեղութիւն մը, սակայն թուրքերը հրացանի զնդակներով ընդունեցին բանազնացները: Ատոր վրայ՝ հրամայուեցաւ ընդհանուր յարձակում, և նոյն օրը, իրիկուան դէմ, քաղաքը ինկաւ, թէև պահակազօրքին մէկ մասը յաջօիրիկուան դէմ, քաղաքը ինկաւ, թէև պահակազօրքին մէկ մասը յաջօրատաղցի ունեցան 23 մեռեալ և 86 վիրաւոր: Պիէլօրօլի բնակչութիւնը մեծ մասամբ Բրիտանիայ ըլլալով, յաղթականները ընդունուեցան զրկաբաց: Բահանաներ՝ թափօր կաղմած, մոմերով ընդառաջ եկան անոնց: Յետոյ՝ գոհարանական աղօթք կարդացուեցաւ օրթոտօքս եկեղեցիին մէջ: Ծերունի մը Գարատաղցոց մութքը տեսնելով՝ ձեռքերը վեր բարձրացուցած էր և ինկած գետին՝ հրճուազին աղաղակ մը արձակելով: Ալպանական վերջին ապստամբութեան միջոցին երկու զաւակներ զոհ տուած էր այդ ձերուկը, և անկէ ի վեր ժամանակը կ'անցընէր իր նետուած էր այդ ձերուկը, և անկէ ի վեր ժամանակը կ'անցընէր իր նետուած էր այդ ձերուկը: Արնաուլթները անիծելով: Ազատարար Գարացուկներուն արիւնը մտած Արնաուլթները անիծելով: Ազատարար Գարացուկներուն արիւնը մտած էր ուրախութենէն, ինչ որ տաղցոց յաղթական մուտքին վրայ՝ մեռած էր ուրախութենէն, ինչ որ տաղցոց յաղթական մուտքին վրայ՝ մեռած էր ուրախութենէն: Գարատաղցիք, ցոյց կուտար թէ լոկ այդ օրը տեսնելու համար կ'ապրէր: Գարատաղցիք Պիէլօրօլի մէջ առժամայ վարչութիւն և պաշտօնեաներ հաստատելով շարունակեցին իրենց յառաջխաղացութիւնը դէպի Սիէնիցա, ուր իրենց պիտի միանար սերպիական Գ. բանակը, Նօվի-Բազար քաղաքը գրաւելէ վերջ: Մինչև Սիէնիցա՝ Գարատաղցիք դժուարին ճամբայ մը ունէին իրենց


Պոյովիչի բանակին աջ թեւը բուռն յարձակմամբ մը խորտակած էր Օսմանցոց պաշտպանութեան զիծերը և մտած էր քաղաք, առանց կարենալ



Յաղթական Գարատաղցի ներս վերադարձը Բաղդադից

ընկճելու պահակազօրքը որ շարունակեց կռուիլ քաղքին մէջ, իւրաքանչիւր փողոց մարտկոցի մը վերածելով: Սերպերը ճիշտ ատենին հասան, աջակցելու համար Գարատաղցոց, և իրենց միացեալ գրոհներուն շնորհիւ

շուտով վերջ գտաւ կռիւը: Երկու կողմէն ալ կորուստը շատ մեծ եղաւ, որովհետեւ թէ Գարատաղցիք, թէ՛ Սերպերը և թէ՛ մանաւանդ թուրքերը ամենաանաւոր կատաղութեամբ մը կռուեցան: Դաշնակիցները շատ անշնչան թուով գերիներ միայն կրցան ձեռք անցընել թուրքերէն, որոնց



Գարատաղցոց և Սերպերու գործողութիւնները Նովի-Բազարի սանձագին և Ալպանիոյ մէջ

հրամանատարն էր հազարապետ Ալի Միւսթաֆ պէյ Պոլսոյ զինուորական վարժարանէն շրջանաւարտ, յետոյ Գերմանիոյ մէջ՝ Ֆոն Տէր Կոյց փաշայի մօտ մարզուած կարող սպայ մը, որ պահակազօրքէն ողջ մնացած 1380 զինուորիկներու և 77 սպաներու հետ սահմանազուխը անցնելով մտաւ Սերայէվօ, նախընտրելով յանձնուիլ աւստրիական իշխանութեանց: Ինք ու իր զինուորիկները շատ համակիր ընդունելութեան մը առարկայ դարձան և իր զինուորիկները շատ համակիր ընդունելութեան մը առարկայ դարձան և իր զինուորիկները շատ համակիր ընդունելութեան մը առարկայ դարձան և իր զինուորիկները շատ համակիր ընդունելութեան մը առարկայ դարձան

պիտի բնակէին մինչև պատերազմին վախճանը, չէզոքութեան կանոններուն համաձայն: Անոնցմէ շատերուն համազգեստը պատառ պատառ եղած էր, մեծ մասը կօշիկէ զուրկ էին, ոմանք ալ չուանէ փեռեկտուած ոտնամաններ միայն ունէին: Աւստրիացի սպաներ ու ոչ-զինուորականներ սիկարէթ նուիրեցին անոնց: Յայտնի էր որ շատ շարժարուած էին պատերազմի յայտարարութենէն ասդին, շարունակ հարածական և անապաւէն շրջելով Նովի-Բաղարի Սանճագին զանազան կողմերը, Բլէվիէ ապաստանելէ առաջ: Այլ Միւսթազ պէյ՝ Նոյե Ֆրայե Բրեւեի թղթակցին հետ ունեցած մէկ տեսակցութեան միջոցին՝ Թուրքիոյ պարտութեանց պատճառ նկատած էր բուն իսկ պետական մարդիկը, որոնք պատերազմը սկսած էին առանց անոր պատրաստուած ըլլալու: Իր պատմութիւնը կ'արժէ արձանագրել այստեղ, ցոյց տալու համար թէ Օսմ. զինուորական իշխանութիւնները ինչ հոմերական անգիտակցութեան և անխելութեան մէջ կը լողային այդ աստիճան փափուկ կացութեան մը միջոցին:—

Ճիմ գունդս, ըսած էր Միւսթազ պէյ. կը բաղկանար Անատօլէն և Բուսթիլէն առնուած երկու վաշտերէ, մէկը Բլէվիէի (Թաշլըճա) և միւսն ալ Բրէքօլիի մէջ: Բլէվիէ կը գտնուէին չորս գնդաձիրներ և ռուսական պատերազմէն մնացած չորս թնդանօթ: Երբ արպանական ապստամբութիւնը ծագեցաւ, մէկ քանի օրուան մէջ ամբողջ այդ շրջանակը զօրահանութեան վիճակի մէջ դրուեցաւ. ես իսկ, իմ գտնուած ծայրագոյն կէտիս վրայ, նոր վաշտեր ընդունեցի. ա' սնցմով՝ պատրաստ պիտի կենայինք իրր պահեստի ոյժ. արպանացի ապստամբներուն դէմ գործող բանակին օգնելու համար: Բայց երբ Պոստյ մէջ Դանլիճի փոփոխութիւն տեղի ունեցաւ(*) և նոր կառավարութիւնը Ալպանացոց հետ հաշտութիւն կնքեց, զինքի տակ կոչուած զինուորները դարձեալ իրենց տեղերը դրկուեցան: Դանլիճին փոփոխումէն ա'իս մը վերջ, այսինքն՝ պատերազմի ծագումէն մէկուկէս ամիս ա'աջ. ես ալ հրաման ընդունեցայ ինծի դրկուած օգնական զինուորները ետ դարձնելու, Այդ հրամանը գործադրելէս վերջ՝ իմ ձեռքիս տակ մնացին երեք տկար վաշտեր. իւրաքանչիւր վաշտ հազիւ 275 հոգի ունէր, անանկ որ երեք վաշտերը հաւաքաբար կը բաղկանային 600 հոգիէ, կէս առ կէս բաժնուած Բլէվիէի և Բրէքօլիի մէջ: Այդ քանն ալ սակոյն չկրցայ պահել: Պատերազմի յայտարարութենէն տաս օր առաջ՝ Սկիւպի հրամանատարութենէն հրահանք ստացայ իմ մարզուած զինուորներս այնտեղ դրկելու և անոնց տեղ մէկ քանի հարիւր նորագիրներ ստացայ: Այն կէտին վրայէն ուր կը գտնուէինք, որոշապէս կը դաշայինք թէ կացութիւնը չափազանց տագնապալից է և թշնամութեանց սկզբնաւորութիւնն ալ մօտալուտ: Երբ նորագիրները հասան, սովորական մարզանքի մէթօր մէկ կողմ թողլով, արագապէս ռազմական ամէնէն անհրաժեշտ զիտելիքները սորվեցուցի անոնց: Տասը օր վերջ՝ երբ պատերազմը ծագեցաւ, անոնք հազիւ զէնք լեցնել ու պար-

(*) Սահտ փաշայի անկմամբ և Ղազի Մուսթաբ փաշայի նախարարութեան կոչուելով:

պել միայն գիտէին, բայց էն առաջ պատերազմի ասպարէզ նետուելու բախտը իրենց կը վիճակէր: Սկիւպի հրամանատարութիւնը՝ պատերազմի յայտարարութիւնը ինծի իմաց տուաւ ճիշտ ու ճիշտ երեսօղներվեց ժամ վերջ: Բլէվիէի և Բրիքօլիի երկու վաշտերն ու ըէտիֆներու երկու վաշտեր որոնք իմ հրամանիս տակ կը գտնուէին, բնական է չէին կրնար



ԲՕՏԿՕՐԻՑԱՅԻ ՀԻՒՆԵՂԱՆՈՅԻՆ ԱՌՁԵԻ Փոխադրութիւն Գարատաղցի վերաւորներու

բաղխումին տոկալ: Առանց այս պարագան նկատի առնելու, Սկիւպի հրամանատարութիւնը հրահանք դրկեց ինծի որ վաշտերէս մէկը փութացնամ Սիլնիցա: Հազիւ ընդհարումները սկսած, ըէտիֆներն ու պաշարպօզուֆները զէնքերը նետեցին, մինչդեռ ժողովուրդը առանց ընդդիմութեան թշնամիին յանձնուեցաւ: Երբ բոլոր Սանճագը Սերպերուն և Գարատաղցին բուն կողմէ գրաւուեցաւ և Թուրքիայէն բոլորովին բաժնուեցաւ, այն ատեն որոշեցինք Պօսնա փախիլ: Ընդամենը 400 հոգի միայն ունէինք,

որոնց մեծ մասը նորագիր և բարոյապէս ընկճուած մարդեր էին, իսկ մեր առջև կային 3000 Գարատաղցիներ և 7000 Սերպ, գնդաձիրներով ու լեռնային թնդանօթներով միասին: Բլէվիէի բովանդակ հողամասը մինչև Միթրովիցա թշնամիին կողմէ գրաւուած էր. մենք Պօլիէնիք կը գրտնուէինք, Պոսնիական սահմանագլուխէն հինգ քիլօմէթր անդին: Մեզի մօտ եկան նաև ուրիշ պահականոցներէ փախած սպաներ և զինուորներ: Քսան օր անընդհատ դաշտին մէջ կեցեր էինք, և հացէ զատ ուրիշ բան չուէինք ուտելու. շատ ատեն ձիւնին մէջ կը քնանաինք: Քսան օր է ապուր մը անգամ խմած չէի, և մեր հացի պաշարը այլևս միայն մէկ օրուան կը բաւէր: Անորոշ կացութեան մը մէջ էինք: Սպաներու ժողով մը գումարեցինք: Կամ անօթութենէ պէտք էր մեռնէինք և կամ թէ 400 հոգիով 10000 Գարատաղցիներու և Սերպերու դէմ աննպատակ կռիւ մը մղէինք: Մեզի կը մնար միայն մէկ միջոց մը, այն է Պոսնա անցնիլ և գտնէ մեր 900 զէնքերն ու չորս գնդաձիրները փրկել: Եւ առաջարկեցի որ անձնատուր ըլլանք, բայց սպաները համամիտ չգտնուեցան և որոշեցին Պոսնա անցնիլ: Ասոր վրայ գրաւոր Բրօթօքօլ մը պատրաստուեցաւ, որուն տակ ստորագրեցին բոլոր սպաները»

Բլէվիէի անկամար՝ Գարատաղցիք ու Սերպերը կը տիրանային բովանդակ Նօվի-Բազարի Սանճագին, կատարեալ ազատութիւն և ապահովութիւն ընծայելով Գոսովայի, Մակեդոնիոյ և Ալպանիոյ մէջ գործող դաշնակից բանակներուն:

Զօրավար Վուքօթիչ Իրէքէն մեկնելով շարունակեց իր յառաջխաղացութիւնը դէպի Տիաքօվա որ Հիւսիսային բանակին գործողութեանց համար սահմանուած շրջանակին ծայրագոյն կէտը դարձած էր(*): Հոկտեմբեր 20ին՝ կէս ճամբուն վրայ՝ Վիզօքի-Տէքանի նշանաւոր վանքին մօտ հանդիպեցաւ թրքական ոյժերու, զորս Վասօյէվիչի գումարտակը մինակը ցրուեց կարճատև ընդհարումէ մը վերջ: Թուրքերը, 60 մեռեալ և 80 վիրաւոր ձգելով կռիւի դաշտին վրայ, հեռացան խուճապով: Գարատաղցիք ունեցան 13 վիրաւոր, որոնցմէ երկուքը մեռան: Այս յաղթանակին վրայ, ճամբան բաց էր այլևս դէպի Տիաքօվա, որուն դէմ կը քալէր զօրավար Վուքօթիչ հիւսիսի կողմէն, ի գործ դնելով պաշարողական շարժում մը, զոր Բրիգրէնտէն փութացող սերպիական գումարտակ մը պիտի լրացնէր հարաւի կողմէն: Այս վերջինը շատ զօրեղ թնդանօթներ բերած էր իրեն հետ, ինչ որ մեծապէս նպաստեց գործողութեան: Վասօյէվիչի և Քօլաչիի գարատաղեան գումարտակները որոնք զօրավար Վուքօթիչի բանակին աջ թևը կը կազմէին, կատաղի յարձակում մը գործեցին քաղքին ամրացեալ դիրքերուն դէմ, և սուլիններով վանեցին խրամներուն մէջ պատսպարուած պահակազօրքը: Յարձակման թափը քաղքին դուռներուն առջև բերաւ Գարատաղցիները: Թնդանօթը կը գոռար ամբողջ ճակտին

(*) Զօրավար Վուքօթիչի ծրագրին մէջ էր նաև Բրիգրէնտի գրաւումը, Տիաքօվայէն վերջ, սակայն Սերպիական Գ. բանակը արդէն իսկ գրաւած էր դայն և իր կարգին Տիաքովայի վրայ կը քալէր:

վրայ. մեծ աւեր կը գործէին մասնաւորաբար սերպիական թնդանօթները: Տիաքօվա ալպանական քաղաք մը ըլլալով, յարձակողները աւելի թշնամի քան բարեկամ ունէին անոր մէջ: Եւ Ալպանացուց մեծամասնութիւնը կ'օժանդակէր պահակազօրքին: Կիներն անգամ կը մասնակցէին կռիւին, ջուր տալով կռուողներուն, շատ կէտերու վրայ նաև զէն ի ձեռին կրու-



Գարատաղցի վիրաւոր մը որ կը պատրաստուի կռուի դաշտը վերադառնալու ուելով: Գարատաղցուց յարձակումը սակայն այն աստիճան բուռն ու անդիմադրելի կերպով մը տեղի ունեցաւ որ պահակազօրքին և օժանդակ Արնաութներու դիմադրութիւնը մնաց անօգուտ: Մէկ քանի ժամ վերջ Գարատաղցիք ու Սերպերը կողք կողքի Տիաքօվա կը մտնէին իրր յաղթական:

Զօրավար Վուքօթիչ շուտով շրջակաները մաքրեց Տիաքօվայի պահակազօրքին մնացորդներէն, և Արնաութներու կողմէ ըլլալիք ո՛ր և է թըշնամական փորձի համար կարգ մը կանխազգուշական կարգադրութիւններ ընելէ և քաղքին մէջ վարչական նոր կազմ հաստատելէ վերջ փութաց իջնել դէպի հարաւ, միանալու համար Շքօտրան պաշարող բանակներուն,

որ Ասիոյ խորերէն եկած ու Արեւելեան Եւրոպան գրաւած, իր յաղթական բանակները կը մղէր դէպի կեդրոնական Եւրոպա: Մեծ ազգեր տեղի պիտի տային անոր մղումին առջև. բայց այս պղտիկ ազգը երբեք չպիտի ընկճուէր: 138-ին 40,000 հոգի էին Թուրքերը Գարատաղի լեռներուն ստորոտը, բայց ստիպուեցան ետ քաշուիլ: Փաթիհի բանակներն անգամ որոնք Պոլսոյ անկումէն վերջ այլևս անպարտելի դարձած էին, 70,000 հոգիով չկրցան գրաւել Շքարան՝ զոր Իվան Սև կը պաշտպանէր մի միայն 1000 լեռնականներով. Սամ. բանակը, ծանրապէս վնասուած, հե-



Գարատաղցի կիներ կը դիմեն բռնակետո՛ւ՝
իրենց ամուսիններուն պարէնը տանելու

ռացաւ զնաց: 1613-ին և 1697-ին Գոր փորձեր ըրին Սուլթանները Եւրոպայ անօգուտ: Յետոյ, 1712 յուլիս 29-ին, 30,000 Թուրքեր ինկան Գարատաղցի մէջ: Գառասունըչորս տարի վերջ՝ 1768-ին, ուրիշ 40,000 Թուրքեր կ'իյնային կիրճերուն մէջ: Ռակուզայի Վենետիկցիներն ու Թուրքերը ձեռք ձեռքի 1768-ին 130,000 հոգի հանեցին Գարատաղցուց դէմ, որոնք հազիւ 10,000 ըլլալով հանդերձ, կասեցուցին դաշնակիցներու յարձակումը: 1853՝ էօմէր փաշայի 70,000 մարդիկը նոյնպէս հեռացան Չախախուած: Հինգ տարի հազիւ անցած, Գրահովայի կռուին մէջ 4000 Թուրքեր ինկան: 1868-ին դարձեալ կռիւ: Վերջապէս՝ 1876ի երկամեայ կռիւը՝ որ Պէրլինի Դաշնագրին պիտի յանդէր և աւելի քան 70,000 մարդ պիտի արժէր Թուրքիոյ: Պատերազմը իրօք իր տան մէջ էր այնտեղ, տեսակ մը ընական երեւոյթ. և զարմանալի չէ որ դարեւու առհաւուրենէն խթան-



Գործարար Մարտնորդի մասին խոսող խոսքի ժամանակ

Պախանեան Պատերազմ. — Յաւելուած Թիւ 9. — Տպագր. Օ. Արզուման

ուած այդ ուղիները, խաղաղութեան ժամանակ պատերազմի վրայ մտածեն, և անոր սպասեն իբր հաւատարիմ նշանածի մը:

Ահա թէ ինչո՞ւ պատերազմը ոչինչ փոխած էր Գարատաղի սովորական կենցաղէն: Մեծ շէնքը պարսպուած էին թէև, քիչ մը ամէն կողմ



Գարատաղի կիներ երեւց վերաւորին մօտ

կարելի էր տեսնել վիրաւորներ, թնդանօթը կը գոռար առանց դադար առնելու, բոց ու ծուխ կը բարձրանար բոլոր դիրքերէն, գիւղեր ու աւաններ կ'այրէին, բայց արդէն սովորական կեանքն էր ատիկա: Տղաքը միշտ արիւնի տեսարաններ ունէին աչքի առջև. նոյն խակ խաղաղութեան

ատեններ, մեծերը կարելին կ'ընէին զանոնք արիւնի ընտելայնելու համար: Մասվաճառներ, ոչխարը կամ կովը մորթելէ առաջ, իրենց մօտ կը կեցնէին սղաթիկ լաճերը, անկէ ետք միայն դանակը կը մխէին կենդանիին վիզը, որպէս զի սորվին թէ ինչպէ՛ս պէտք է մորթել. ու աղաքը՝ բացուած վի-



Շքօտրայի լեճը և իր շրջակայ գետերը

զէն կայակող տաք արիւնին մէջ կը թաթխէին իրենց ձեռքերը և անով իրենց դէմքը կ'օժէին...

Լուիկ ու ամայայած մայրաքաղաքին՝ Չէթինէի մէջ, լայն մէկ քանի պաշտօնատարներէ և հիւանդանոցի սպասարկուներէ, միայն սղաւոր կիներ ու աղաք կը տեսնուէին: Ամէն մարդ գացած էր իր պարտակա- նութիւնը կատարելու, տեսակ մը լուրջ, աղնուական, ցուցամղութենէ դերձ հերոսութեամբ: Թէ՛ Չէթինէի, թէ՛ Րիէքայի և թէ՛ Բօտիօրիցայի մէջ՝ խանութպանները սղաթիկ աղաք էին, մանկատի նարարվաճառներ, տակաւին հազիւ տասնամեայ մասվաճառներ կամ փերեղակներ, որոնք

իրենց տարիքին հետ անհաշտ լրջութեամբ մը առեւտուր կ'ընէին, մինչ- դեռ հայրերն ու մեծ եղբայրները կը կռուէին Թարապօչի առջև: Պատե- րազմին բովանդակ տեւողութեան ընթացքին Գարատաղ ոչ ուտելիքի նե- ղութիւն քաշեց, ոչ ալ ռազմամթերքի: Բայց դեղն ու բժիշկները պակ- սեցան սիրիզները մանաւանդ. բովանդակ Գարատաղի մէջ՝ բժշկական կադմակերսու թեան նմանող գրեթէ ոչինչ գոյութիւն ունէր: Տարածեթ լեռներուն վրայ, որոնցմէ կը յառաջանային Գարատաղցիք, չկար ո՛ր և է շարժուն հիւանդարան. ու տարաբախտ վիրաւորները, յաճախ լոկ իրենց կիներուն օգնութեամբ, պէտք է քաշէին մինչև Րիէքա՝ վէրքերին կա- սել սալու համար: Ընդհանրապէս երկու երեք օրուան ճամբայ կարած կ'ըլլային այդ վիճակին մէջ, և երբ Րիէքա կը հասնէին, փտախտը արդէն խակ ա՛յն բժշկական միջամտութիւն աւելորդ դարձուցած էր: Շքօտրայի պաշտպանները յաճախ իրենց թնդանօթները կը լեցնէին երկաթի կամ ա- պակիի կտորներով, որոնք զարհուրելի վէրքեր ու պատուածքներ կը պատճառէին: Վիրաւորներէն անոնք որոնց համար անհրաժեշտ էր վիրա- բուժական գործողութիւն, սղաք էին տասնըվեց քլորօթիթը ճամբայ կրտ- բելով անցնիլ Չէթինէի: Շատերը ճամբան կը մեռնէին, տակաւին բժիշկի երես չտեսած: Եթէ ընտանիքը պահանջէր, մուսալը կը յանձնուէր զին- ուորական իշխանութեանց կողմէ: Գրեթէ բոլոր սուները իրենց մեռելը ունէին և տեսարանը նոյնն էր ամէնուէն ալ մէջ: Յաճ առաստաղով պղղ- աթիկ սրահ մը, մոմի դեղահար լեզուակով մը լուսաւորուած. դիակը տա- բածուած էր գետնի սալաքարին վրայ, կոշտ քորձէ կամ անարժէք կա- սելուէ ծածկոյթով մը. մեռելին խանկը, աքրճանակներն ու կարմիր նը- շանով սև դտակը զետեղուած էին կուրծքին վրայ, փայտեայ սղաթիկ խա- չի մը հետ: Մերուէնի մայրը կը պտտէր սրահին մէջ, մեռելին քաջու- թիւնը երգելով. ուրիշ կիներ՝ մեկամաղձոտ կրկնակներով կը պատասխա- նէին իր լաօնին. ու զեանի քարերուն վրայ նստած սղաթիկ աղաք, ա- նուշաղիր իրենց շուրջը պարզուած մահուան ու սուգի տեսարանին, կը խաղային խոշոր աքրճանակներով զորս յաճախ չէին կրնար վերցնել զեանէն:

Աղնուական, լայց ողբալի՛ տեսարան. — Գարատաղի մէջ իմ ամբողջ բնակութեանս ընթացքին, կը գրէ Պ. Հէյսէ, բնաւ չտեսայ պատերազմին փայլուն կողմերը. միայն անոր տգեղութիւններն էին որ պարզուեցան աչքերուս: Առիթ չունեցայ զմայելիու բուռն ու գիրկընդխառն կռուին, հերոսական խոյանքին, երազի մը պէս արագ ու քաղցր մահուան վրայ, այն մահուան զոր պայքարէն զգլխած զինուորը կ'ընդունի իր ճակտին կամ սրտին ճիշտ մէջտեղը մխուած գնդակէ մը: Այստեղ թնդանօթին նողկալի սպանդն ու հիւանդանոցին ժանտ գաղջութեան մէջ սրտակեղէք կերպով երկարաձգուող պայքարը միայն տեսայ: Վէրքերը զորս կը դի- տէի, այլ ևս դադրած էին հոսեցնելէ անարատ արիւն մը. լոկ ապակա- նութիւն կը հոսնուր անոնցմէ: Րիէքայի հիւանդարանին մէջ ուր ամէն բան կը պակսի, ուր ոչ իսկ պարզ մաքրողական մը կարելի է տալ վիրա- ւորակներուն, որովհետև ամենատարրական անօթներն իսկ գոյութիւն չունին, իւրաքանչիւր այցելութեանս նոր տխրութեան մը հանդիսատես

կ'ըլլայի, անփութիտելի կերպով կրելով նոյն դարձուրանքի տպաւորու-
թիւնը, և հանդիսատես ըլլալով նոյն վշտազին մանրամասնութեանց ու
սոսկումն միօրինակութեան: Բոլոր վիրաւորեալները համանման պատմու-
թիւն մը ունին: Այս երկրին մէջ ուր ամէնէն խոնարհ ընտանիքն անգամ



Ձէթինեէի մէջ միայն կիներ ու տղաք կան հիւանդանոցներու շուրջը

իր փառքի տարեգրութիւնները ունի, ամէն մարդ կ'ուզէ մեծ յիշատա-
կով մը փառաւորել իր կեանքը, ու կը ջանայ դրացին գերազանցել
իր կտրիճութեամբ: Եւ ահա այդպէս տեղի կ'ունենան, երբեմն սպաներու,
երբեմն զինուորներու կողմէ, խելայեղիչ յանդգնութիւններ. անոնք կ'արհա-
մարհն ամէն զգուշութիւն, ամէն խոհեմութիւն, ու կ'անաստեն ամէն կար-
գապահական կանոններու և հրամաններու: Ատեն ատեն վիրաւորեալ մը կը բեր-
ուի, որ բացառիկ բղքատուած մը, անսովոր վէրք մը ցոյց կուտայ: Բիէքայի մէջ,
աչուրներուս առջեւ մեռաւ երեսնամեայ լեռնական մը, հիւանդութեան
ու ցաւին դէմ բոլորովին արհամարհոտ, անդդեանելի, յաղթ ու տոկուն,
այն ժայռի զանգուածներուն պէս որոնք կը ցցուին այս երկրին մէջ: Թո-
քին մէջ մխուած էին երկու զնդակներ որոնք ուռեցք առաջ բերած
էին. և թշուառ մարդուն մորթը տակաւ բարձրացեր, փչուեր, ուռեցեր
էր, օդապարիկի գունդի մը պէս: Անկողնին վրայ, ուր առանց հեծիւնի
կը սպասէր գերագոյն վայկեանին, առաջին ակնարկով ուրիշ բան չէր
երեւար, բայց եթէ տիկի նմանող ահազին ուռեցք մը որուն վրայ վեր-
մակը դմբէթի մը ձեւը առած էր: Դէմքը կ'անհետանար այդ ուռեցքին

ստորոտը: Կողին վէրքը գարշելի բան էր, տեսակ մը շարաւոտ ու պժգա-
լի բացուածք, ուրկէ սեւորակ փրփուր մը կը ծորէր մածունի թանձ-
րութեամբ: Ամէն անգամ որ շունչ առնէր, խուլ ու բեկբեկուն ձայն մը,
մօթեօթի մը տրոփիւնին պէս, դուրս կը ցայտէր այդ բացուածքէն: Եւ մահը
կ'ուշանար: Հլւանդը կը խօսէր բժիշկին հետ, իրեններուն նկատմամբ
տեղեկութիւններ կը հարցնէր: Մորֆինի երեք մեծաքանակ ներարկումներ,
ամէն օր կրկնուելով հանդերձ, չէին կրնար թմբեցնել իր չափազանց ամուր
սիրտը, մարել այդ ըմբոստ կեանքը: Եօթ օր և եօթ գիշեր, այդ վիճա-
կին մէջ, կուռեցաւ մահուան դէմ: Յուզարկաւորութիւնները նուազ
տխուր են քան այս հիւանդանոցի տեսարանները: Պատերազմի սկզբնաւո-
րութենէն ի վեր, ամէն օր Ձէթինեէի, Բիէքայի, Բօտիօրիցայի ու Նիք-
չիչի զանգակները կը զօղանչեն, մեռեալներու թաղումը ծանուցանելով:
Թափօրը երգելով կը յառաջանայ փողոցներուն մէջէն: Առջեւէն՝ աղայ
մը կը տանի սև շղարշի մէջ առնուած փայտեայ խաչ մը: Մանկատի եր-
դեցիկներու դաս մը կը հետևի անոր, ծանր ձայնով մը քաջքշելով դան-



Գարատաղ մեկնելիք անդլիական կարմիր խաչի խումբին պատրաստութիւնները
Լոնտոնի մէջ

դաղ մեղդի մը: Ծերուկ Բօբ մը, ձեռքը մետաղեայ խաչով մը, իր եր-
կար հասակը կը կքէ արծաթածածկ շուջտուի մը տակ: Սարկաւագ մը՝
ոսկեհուռ շուրջառ մը հագած, մէկ ձեռքով մոմ մը կը կրէ և միւս ձեռ-
քով կը ճօճէ հին բուրվառ մը որ կը ծխայ օդին մէջ տատանելով: Անոնց-

մէ եաք՝ ձեռնամարմն կը տանին դադաղը: Մեռելները տարածուած են ձերմակ տախտակէ դադաղներու մէջ, որոնց ներսի կողմը դունաւոր թուղթով և ոսկեղօծ խաւաքարտներով ծածկուած է: Պատանքը բաց թողած է մեռնողին դէմքը. ազգականներ՝ ուսերնուն վրայ կը կրեն դադաղին կախարիչը որ վերջի պահուն միայն պիտի դրուի գերեզմանին մէջ: Պզտիկ մատուռի մը նուիրական իֆօնաներուն առջեւ, դադաղները այդպէս շարուած են դետինը, մեռելներուն դէմքը խորանին դարձած: Արարողութիւնը երկար կը տևէ. քահանաները կ'երգեն, մարդիկ կը պառասխանեն, կիները լսիկ կ'արտասուեն: Ազօթքները աւարտելէ վերջ, նախ բօրը, յետոյ ազգականները, յետոյ բարեկամները և բոլոր ներկաները, առանց կարգի կը ծնրադրեն՝ մեռելներուն տալու համար ղերջին համբոյրը: Անկարելի է երեւակայել վիտի և յուսաբեկութեան տեսարան մը ա՛յնքան սպաւորիչ, որքան Գարատաղցոց յուզարկաւորութեան այդ պահը, երբ սղազգեստ յուզարկաւորներու բազմութիւնը՝ ծնկաչոք կը քաշքշուի ու կ'ալիծփի դադաղներուն շուրջը: Գերեզմաննոցին մէջ, օրթոտօքս ծէսին համաձայն, բօրը փոսին խորը իջուցուած մեռելներուն վրայ կը սրսկէ հաղորդութեան զինին՝ բրուն բոյրը կը խառնուի փորկրուած հողին հոտերուն ու դադաղին արտաշնչութեանց: Մարդ մը կ'իջնէ փոսերուն մէջ, կը փակէ դադաղին կախարիչը, և ամէն բան վերջացած է: Ամէն օր, և իւրաքանչիւր օր բազմաթիւ անգամներ, միևնոյն սրտայոյզ տեսարանը կը տրամեցնէ Չէթինեէն, Բիէքան, Բօտկօրիցան, Նիքչիչը, բոլոր քաղաքները, բոլոր գիւղերը, մինչդեռ անդին՝ Իբէքի կամ Թարապօչի առջեւ կ'իջնան ուրիշ մեռելներ, որոնք հասցնէպով կը թխտուին հողին տակ, և որոնց գերեզմանները լոկ ազոսաները կամ ձիւնը կը յարչարեն:

Նիքօլա թագաւոր և իր գործակիցները՝ կարելին կ'ընէին այս խեղճութիւնները ամօքելու համար: Թագաւորը, վաղնջուց սովորութեան մը համաձայն, ամէն կողմ ուր որ կրնար հասնիլ, անձամբ ընդ առաջ կ'երթար վիրաւորներու և մեռելներու թափօրներուն, կը համբուրէր զանոնք, սրտասնդիչ խօսքեր կ'ուղղէր վիրաւորներուն, կը դրուատէր անոնց հերոսութիւնը: Մերունի վեհապետին քաջալերութիւնները այնքան սպաւորիչ էին որ վիրաւորները, հազիւ ինքզինքնին գտած, խեղճ կը փարէին իրենց դէնքին և կը փութային դէպի կոտի դաշտը: Շատեր երեք չորս անգամ վիրաւորուելէ ու բուժուելէ վերջ վերստին վաղած իրենց կոտի ընկերներուն միացած էին: Որովհետեւ քիչ առ քիչ կարելի դարձած էր նոյնիսկ ծանրապէս խոցուողներու դարմանումը, շնորհիւ ուսական, Քրանսական և անգլիական կարմիր թաշի կազմակերպութեանց, որոնք փութացած էին Գարատաղ, առատ դեղերով ու զործիքներով, և զմայլելի անձնուիրութեամբ մը կ'աշխատէին ամէն կողմ ուր պէտք ըլլար: Առատ նուէրներ կը հասնէին ժամաւորաբար Ռուսիայէն, ուր Սլաւ ընկերակցութեան բոլոր ձիւղերը, արքունիքին պատկանող տիկիներ և առհասարակ ամբողջ հարուստ դասակարգը հանգանակութեան ձեռնարկած էին այդ մտքով: Նիքօլա թագաւորին աղջիկը, Քալնիա իշխանուհին,

դահաժառանգին կիներ՝ Մելիցա իշխանուհին, և ուրիշ աստիճանաւորներու կիներ ու աղջիկներ անձամբ կը սպասարկէին հիւանդանոցներուն մէջ, հաւասար դուրգուբանքով խնամելով թէ՛ Գարատաղցի, թէ՛ Մալխոր, թէ՛ Թուրք և թէ՛ Արնատի վիրաւորները: Կաթողիկ մայրատեաներ ալ կ'օժանդակէին անոնց: Բայց ակնէն աւելի մեծ դեր կը խաղային Գարատաղցի կիները, անոնք թէ՛ հիւանդապահ էին, թէ՛ սրբէնտօրիչ, թէ՛ նաև կուսոյ: Յանդուգն ու քաջ, ինչպէս իրենց այրերը, յաճախ մասնակցեցան կոտուներուն, հակառակ անոր որ պատերազմի յայտարարութեան օրը, արքայական հրամանագիր մը կ'արգիլէր կիներուն պատերազմիլ: Առաջին ամսուան ընթացքին, արդէն իսկ տասնչորս կիներ ինկած էին Շքօրայի շուրջը մղուած կոտուներուն մէջ: Իլլիւստրապիօնի թղթակիցը դարատաղեան հիւանդանոցի մը մէկ անկիւնը տեսեր էր կին վիրաւոր մը որ երեք գնդակ ունէր մարմնին մէջ, և անարտունջ կը տսկար: Ինչպէս Գարատաղի այրերուն, այնպէս նաև կիներուն համար՝ ամբողջ հերոսութեան անցեալ մը կար որ իրենց զրդէն կ'ըլլար այրերուն հետեւելու, անոնց հետ մրցելու արիւթեամբ և յանդգնութեամբ: Սօթանասնական թուականներու մեծ պատերազմին՝ Գարատաղցի մարտիկներուն մէկ քառորդ մասը կիներ էին: Անոնցմէ խուճի մը որ զիւղի մը մօտ կը կուտէր, փրկուած աշտարակ մը սպաստանած էր երբ Թուրքերը զիւղը դրուած էին, և քանի մը հին հրացաններով շարունակած էր կուտիլ ու երկար ատեն հետու պահել յարձակողները: Բայց վառօղը հատնելու վրայ էր, աշտարակը սլտի ինյար իր կարգին: Այն ատեն՝ Գարատաղցի կիներուն պետը՝ Իէլա Մարունով, իր ընկերուհիներուն հետ համախորհուրդ, մնացած ահողջ վառօղը պահելի մը մէջ լեցնելէ վերջ բացած էր աշտարակին դուռները, և ասորձանակի հալուածով մը օղը հանած էր զինքը, իր ընկերուհիները, զիւղին բոլոր երկխաները որոնք իրենց մօտը կը գտնուէին և 500 թուրք զինուորներ, որոնք դուռներուն բացուելէն վերջ աշտարակէն ներս խուժած էին յաղթութեան ազգապիներով: Բոլոր Գարատաղցի կիները չ'իյն կրնար մտնալ Իէլա Մարունովի յիշատակը: Իրենց մանկութեան ընթացքին անոր քաջապարտութեան ձոնուած երգերով օրօրուած էին, և մայրեր ո՛չ գեղեցիկութիւն կը ցանկային իրենց աղբիւրով օրօրուած էին, և մայրեր ո՛չ գեղեցիկութիւն կը ցանկային իրենց աղջիկներուն համար, ո՛չ մորթի փփփկութիւն, ալ լոկ քաջութիւն և անվեհերութիւն, որովհետեւ ատանց այս յատկութեանց՝ Գարատաղցի աղջիկներու ամէնէն գեղանին անգամ դժուար թէ ամուսին գտնէր: Ու փոխադարձաբար, Գարատաղցի աղջիկն ալ նոյն յատկութիւնները կը պահանջէր իր նշանածէն. — «Սեղիւր, սիրականս, կ'ըսէր անոր, մեծցիլ, հանջէր իր նշանածէն. — «Սեղիւր, սիրականս, կ'ըսէր անոր, մեծցիլ, ու երբ մեծ ու զօրեղ դառնաս, եկուր հօրմէս խնդրէ իմ ձեռքս: այն ու երբ մեծ ու զօրեղ դառնաս, եկուր հօրմէս խնդրէ իմ ձեռքս: այն ատեն՝ իբր ամէնէն թանկագինը նուէրներուն՝ ինձի բեր մեր թշնամիին գլուխը դոյր քու հատու ետթաղանովդ պիտի կտրես»:

Չմայլելի բան էր մանաւանդ այս կիներուն ցոյց տուած արիւթիւնը իրենց վիրաւոր կամ մեռել դաւալներուն և ամուսնին մօտ: Եկեղեցիներուն մէջ՝ դադաղներու շուրջը կրդուող հողեցունց մեղեդիները պէտք էին իրենց աշուճներէն արցունք կորզելու համար: Գուրսը, ճաւահաններուն

ու՛ր, զին զլսուեն վրայ : վերջապէս ինկած էր ձիւն, այլևս կոխը չարունակելու անկարող : Սյն ասուն՝ Գարատաղցին՝ նոյնպէս ձիւն իջնելով սրբած էր անոր վէրքերուն արևը և իր մարդոց յանձնելով պատուիրած էր որ փութով տանին Բիէքայի հիւանդանոցը : Այնտեղ ինք անձամբ պատմեց ինձի իր դարձուրելի մենամարտը ծերունի Գարատաղցին հետ : Շատ խնամով կը դարմանէին զինքը, բայց զիտէր որ դատապարտուած է, և մահուան մերձադուրութիւնը չէր խկ վրդովեր զինքը . ընդհակառակը կը կատակէր շարունակ : Օր մը, մինչդեռ իր մօտն էի, յանկարծ բեց Թարապոչի առջև դուռացող թնդանօթներուն ձայնը, և ըսաւ . «Տար Աստուած որ սուճերը խնայէին իմ ծերունի հակառակորդիս . շատ քաջ մարդ մըն է, արժանի է որ սուբով մեռնի և ս'չ թէ հրաղէնի մը՝ դաւաճան դնդակէն» :

Դար մը, երկու դար առաջ, այս տեսակ կռիւներ և այս ոգուով զեղուն մարդիկ դարձանալի չարիտի թուէին անշուշտ . բայց ներկայ պատերազմներուն մէջ՝ ուր մղաններ հեռուէն արձակուող սուճերն ու զընդակները կը խաղան մեծագոյն դերը և ուր յաճախ կռիւներուն բախտը կ'որոշուի երբ դեռ յողթուին ու պարտուողը իրար չեն տեսած որոշ կերպով, կարելի չէ առանց սքանչացման արձանադրել այդ ասպետական գուպարին երկու համակրելի հերոսներուն քաջագործութիւնը և չխոնարհիլ անոնց յիշատակին առջև : Հերոսութիւնը, թշնամիին կամ բարեկամին մօտ, հաւասարապէս պաշտելի է :




Վերաւորի մը փոխադրութիւնը



ԳԼՈՒԽ Ե.

ՇՔՕՏՐԱՅԻ ՊԱՇԱՐՈՒՄԸ




— Յստուցութիւն, լերան անդիլի կողմը . . .
 Զօրահանուձեան օրերուն՝ այս հրամայալը կը փոխանակէին Քաթա-
 րօի մէջ՝ հայրենի երկիրը մեկնող Գարատաղցիները, իրենց դօտիներուն
 աշուցուած զէնքերը շոյելով :
 — Լիճին անդիլի կողմը կ'երթանք, մնաք բարձր . . .
 Այսպէս կ'ըսէին թուրք ճամբորդներն ու վաճառականները, որոնք
 Շքօտրայի լիճին այլևայլ կողմերէն նաև կը նստէին բերդաքաղաքը վերա-
 դառնալու համար :
 Առաջիններուն քով յոյս կար, յոյս՝ աշխարհակալուած Շքօտրային
 մէջ իրար տեսնելու . իսկ վերջինները միշտ նոյն ճակատագրականութեան
 լծկաններն էին : Մնաք բարձր . . . թերևս դրուած էր որ այլևս մէյ մըն ալ
 իրար չտեսնեն : Ի՞նչ պէտք ուրիշ մանրամասնութեանց՝ երկու պատերազ-
 միկ կողմերը տողորդ մտայնութեան ծանօթանալու համար . այդ յոյսն ու
 այդ ճակատագրականութիւնը սքանչելապէս կը պատկերացնեն մէկուսն ու
 միւսին հողին :
 Լիճի մը՝ աւելի ճիշդը՝ բազմաթիւ բազմաթիւ ջրածածկ հովտի մը
 բոլորտիքը հաստատուած քաղաք մըն է Շքօտրա, իրարու խառնուած,
 իրարու վրայ ելած սև ու մեռուտ սարերու կիկոպեան շարքի մը մէջ :
 Պլաիկ է քաղաքը, սիլիտակ, կապոյտ ու սոյնեղոյն, հազիւ 30,000 ընա-
 կիչ ունի, — մէկ Գրիստոնեսայի դէմ երկու Իսլամ, — և իր ամէնէն անշուշտ
 հիւզակը ամրոցի մը երևոյթը կը պարզէ : Այդ միայնակ տունները աւելի կը
 դուշակուին քան կը տեսնուին : Յաճախ կեռիքաւոր հաստ պատեր, որոնք
 երեք քամ հինգ մէթր բարձրութիւն ունին, կը պաշտպանեն այդ տու-
 ները, անոնց պարտէզները, հորերը ու նաև հարէմը : Մէկ քանի պլաիկ

եան պղտիկ թնդանօթակիր չոգենաւ մը որ վոխադրանաւերուն կ'ընկե-
րանար, յաջող ընդհարումէ մը վերջ ետ մղեց դայն, բաւական ծանր



1




2

1. Գարատաղցիք կը քննեն իրենց ձեռք բերած պատերազմական աւարը.
2. Թուրքերուն կողմէ Թարապօշի անդրանիկ ընդհարման միջոցին
գրաւուած դարատաղեան դրօշը

վնասներ պատճառելով անոր: Աւելի դժուարութիւն կը ներկայացնէր
թնդանօթներու տեղաւորման յարմար դիրքերու ընտրութիւնը, ինչպէս

նաև թնդանօթներու զետեղումը այդ դիրքերուն վրայ: Զօրավար Մար-
թինովիչ այդ մտքով առաջին քայլ մը առաւ՝ տինամիթի միջոցաւ Սքի-
այէն ճամբայ մը բանալով դէպի Քրայա և Շիրօքա, որոնք Թարապօշի
վրայ իշխող բարձունքներ էին, թէև անկէ բաժնուած կը մնային կարգ մը
սուր ցցունքներով:

Հոկտեմբեր մէկին, մինչդեռ զօրավար Մարթինովիչ Զօկայի վրայ կը
հաստատէր լիճին ճամբով ընդունած թնդանօթները, ուրիշ պաշարման
թնդանօթներ ճամբայ հանուեցան Տուլչինսոէն: Այս վերջինները, Պոյա-



Րիէքայի արքայական պալատը

նայի ցեխուտ հովիտն անցնելով սիտի ուղղուէին դէպի Մուրիքան և
Օպլիքա, հետեւելով Հարաւային բանակի աջ թեւին, որ այդ երկու
դիրքերը պիտի գրաւէր՝ Զօրավար Մարթինովիչ յարձակման օժանդա-
կելու համար. Զօրավարը՝ հոկտեմբեր 2ին իր պատրաստութիւնները լրա-
ցուցած ըլլալով, յաջորդ օրն իսկ սկսաւ ուժբաւորել Թարապօշը, բայց չը
կրցաւ միտ արդէնք մը ձեռք բերել: Հոկտեմբեր 4ի օրը անցաւ հան-
դարտ. գիշերը միայն, Ալպանացի պաշտպօղուքներ յանկարծական յար-
կաւարտ. Գարատաղցի յառաջապահներու խումբ մը, և
ձակամաք մը ցրուեցին Գարատաղցի յառաջապահներու խումբ մը, և
անոնցմէ երեքը ձեռք անցընելով տեղին վրայ գլխատեցին: Հարաւային
բանակին աջ թեւը որ դէպի Մուրիքան կ'ուղղուէր, հոկտեմբեր 7ին գրաւեց
Պէլաթի բարձունքը, բաւական բուռն ընդհարում մը ունենալով այնտեղ
Գտնուող թուրք պահակաորջին հետ, որ ձգեց հեռացաւ, դժուարաւ
փախցնելով իր թնդանօթները: Նոյն թուականին՝ Վրաքայի մէջ համա-
խրմբուած կեղերոնի բանակը, որ լիճին ճամբով պաշարման թնդանօթներ

ընդունած էր, կը ումարկոծէր բուն իսկ Շքօտրայի բերդը, քաղքին արեւելեան կողմէն, առանց խնայելու նաև քաղախն, մասնաւորաբար խալամարնակ թաղերուն: Այդ միջոցին ձիւնը սկսած էր ծածկել չրջակայ բարձունքները. եղանակը կը խստանար, և բոլորովին կը դժուարանային պա-



Հիւանդանոցի տեսարաններ Գարատաղի մէջ

շարման գործողութիւնները: Յորդանոս անձրեւներ որոնք այդ ձիւնին հետեւեցան և չորս դին ուղղեցին, ա՛յ աւելի դժուարացուցին Գարատաղցուց գործը: Նիքօլա թագաւոր, հակառակ իր յառաջացեալ տարիքին և օղին խստութեան, միշտ մօտէն կը հսկէր պաշարման գործողութեանց: Այդ հսկողութիւնը դիւրացնելու համար, որոշուեցաւ ընդհանակետը Բօտկօրիցայէն փոխադրել Իլամիցա որ լիճին հիւսիսային կողմի եզերքին վրայ պզտիկ աւան մըն է: Եօթանասնական թուականներու կռիւներուն մասնակցած ծերունի ռազմիկ մը, հոկտեմբեր 9ին այնտեղ փոխադրեց արքայական դրօշը: Թագաւորը ամբողջ օրը հոն կ'անցընէր, չրջակայ բարձրութիւններէն ուշադիր հետեւելով պաշարման գործողութեանց, և իրիկունները, ընդհանրապէս լիճին ճամբով կը մեկնէր Բիէքա, որ Շքօտրայի ուղիին վրայ կը գտնուի, և ուր համեստ ապարանք մը ունի:

Մինչև հոկտեմբեր 9 Գարատաղցիք պարբերաբար շարունակեցին ումարկոծել Թարապօշն ու Շքօտրան, թէ հարաւէն և թէ արեւելքէն, թէև զգալի յառաջդիմութիւն մը չկրցան ընել, ոչ ալ քիչ շատ կարեւոր կորուստ պատճառել Օսմանցուց: Մինչդեռ այս վերջիններուն արձակած ռումբերը մեծ աւէր կը գործէին և շատ մարդ կը սպաննէին: Բիէքա, Չէթինեէ, և չրջակայ բոլոր գիւղերը լեցուած էին վիրաւորներով: Բաղդատմամբ կորուստներուն, ձեռք բերուած արդիւնքը մեծ բան չէր:

Շքօտրայի պաշարումը տակաւին անուանական ըլլալէ չէր դադրած. զօրավար Մարթինօվիչ չէր կրցած սեղմել պաշարման գօտին, ոչ ալ յաջողած էր գրաւել իր խոշոր թնդանօթներուն զետեղման համար անհրաժեշտ բոլոր դիրքերը: Նոյնիսկ լիճին վրայ Թուրքերը ազատ երթեւեկ ունէին տակաւին, և կը շարունակէին պարէնաւորուիլ աջէն ու ձախէն(*): Հոկտեմբեր 9ին դարձեալ ումարկոծուեցաւ Թարապօշ, չրջակայ մէկ քանի ռազմական կէտերու գրաւումը դիւրացնելու համար: Թագաւորը, թագուհին, Նիքօլա-Նիքօլայէվիչ մեծ-դուքսն ու մեծ-դքսուհին, օտար զինուորական կցորդներ և դիւանագիտական մարմինն անդամները, լիճին վրայէն, արքայական զրօսանաւին մէջէն, տկանատես եղան ումարկոծութեան, որ սակայն ապարդիւն մնաց: Երկու օր վերջ, հոկտեմբեր 11ին, Հարաւային բանակին ձախ թեւը յաջողեցաւ գրաւել Շիրօքայի ու Քրայայի սարերը, մինչդեռ աջ թեւը կը գրաւէր Մուրիքանը, և նոյն օրն իսկ կատարուեցաւ նոր ու աւելի ուժեղ ումարկոծութիւն մը: Զախ թեւը որուն անձամբ կը հրամայէր զօրավար Մարթինօվիչ, հիւսիսի կող-



Հիւանդանոցի տեսարաններ Գարատաղի մէջ

մէն դիրք գրաւած էր Շիրօքայի վրայ, արագահարուած թնդանօթներով, և Քրայայի վրայ, ամբողջ հրետաշարքով մը. իսկ աջ թեւը

(*) Հոկտեմբեր 9ին՝ Գարատաղցիք լիճին վրայ դրաւեցին թրքական շոգեմուսկի մը և հինգ առաջաստանաւեր, որոնք պարէն կը փոխադրէին Շքօտրայ


արեւմուտքի կողմէն, դիրք բռնած էր Մուրիքանի վրայ, տաննակ մը թնդանօթներով: Կեդրոնի բանակն ալ որ Վրաքայի մէջ վեց խոշոր թնդանօթներ հաստատած էր, արեւելքի կողմէն մասնակցեցաւ ու մարտնչութեան: Մինչև ցերեկ՝ թնդանօթները գոռացին անընդհատ: Յետոյ, զօրավար Մարթինովիչ պատուիրակութիւն մը զրկեց Թարապօչի Թուրք հրամանատարին, հրաւիրելով զայն որ անձնատուր ըլլայ և երկու կողմին ալ խնայէ աւելորդ արիւնահեղութիւն մը: Համանման առաջարկ մը, միննոյն ժամուն, իշխան Տանիօ կ'ընէր Շքօտայի հրամանատարին: Այդ միջոցին՝ Նիքօլա թագաւոր լինէն անցնելով գնաց Կեդրոնի բանակը ու իր երեք զուակնեցուն հետ զինուորական խորհուրդ մը գումարեց: Խորհուրդին որոշմամբ՝ իշխան Մլրքօ հրամանատար կարգուեցաւ Ձէթայի գումարտակին որ նշանաւոր հանդիսացած էր Տէտիչի և Շքիբչանիքի զրաւման միջոցին, և այդ առթիւ տեղի ունեցաւ յուզիչ արարողութիւն մը, ուրկէ վերջ, իշխանը, խօսքը իր զինուորներուն ուղղելով ըսաւ. — «Բանակին վերին հրամանատար հայրս ինծի հրամայեց որ ձեզ Շքօտա առաջնորդեմ: Հետեւեցէ՛ք ինծի. իմ արի զինուորներս, հետեւեցէ՛ք ոչ թէ մահուան ու բնաջնջման ճամբուն մէջէն, ալ այն ճամբէն ուրկէ ազատութիւնը, նոր կեանք մը և յառաջդիմութիւնը պիտի մտնեն Շքօտա: Ինքզինքնիդ արժանի դարձուցէ՛ք Գարատաղցւոց ասպետական համբաւին»: Հաւատարմական սրտագրաւ ցոյցեր եղան ամբողջ բանակին և անոր օժանդակող բազմաթիւ Մալխօրներուն կողմէ: Նիքօլա թագաւոր սրտաւնդիչ խօսքեր ուղղեց մասնաւորաբար Մալխօրներուն, զրուաւեց սնտից ցոյց տուած քաջութիւնը կոխներու ընթացքին, և յանձնարարեց որ քիչ մը «փափկութեամբ» կիրարկեն իւրենց խանդավառութիւնը. որովհետև Մալխօրները յաճախ վայրենօրէն կը կռուէին և անողորմ կերպով կը կարատէին իրենց ձեռքը ինկած վիրաւորներն ու գերիները, նոյն խակ մեռելները: Յետոյ, Նիքօլա թագաւոր հրաժեշտ տուաւ բանակին ու իր զուակնեցուն, զորս կարգով համբուրեց, ու մեկնեցաւ յաջողութեան մաղթանքներով: Թագաւորին մեկնելէն վերջ ումարակութիւնը վերսկսաւ միանգամայն երեք կէտերէն, որովհետև Թարապօչի հրամանատարը մերժած էր անձնատուր ըլլալ, ու տեւեց մինչև զիշեր: Յետոյ, Թարապօչի առջև, հարաւային բանակին ձախ թեւը բուռն յարձակում մը գործեց լերանդէմ և ամբողջ զիշերը կռիւը շարունակուեցաւ անզադրում հրացանաձգութեամբ: Առտուան մօտ, Թուրքերը ստիպուեցան թողուլ մէկ քանի յառաջացեալ կէտեր, որովհետև զօրավար Մարթինովիչի ձախ թեւը յաջողած էր գրաւել Կօրիցայի դիրքը: Յաջորդ օրը, 12 հոկտեմբեր, պաշարման զօալին քիչ մը աւելի սեղմուեցաւ, երբ Կօրիցա ժամանող Գարատաղցիք, ամենաբուռն ընդհարումէ մը վերջ, որու միջոցին Թուրքերը յուսահատական թէւեւ ապարդիւն արիւթիւն մը ցոյց տուին, գրաւեցին Օպլիքայի բարձունքը, էական դիրք մը Թարապօչի դէմ յարձակողական գործողութեանց համար: Նոյն օրը՝ Կեդրոնի բանակը ումարակոծեց Շքօտաւան և քանի մը ուումբեր որոնք քաղքին մէջ ինկած էին, շփոթութիւն առաջ բերին: Քրիստոնեայ թաղերուն վրայ սեւեռուեցան սպիտակ դրօշ-

ներ, որոնք սակայն չուտով վար առնուեցան: Թուրքերը պատասխանեցին բուռն ումարակոծութեամբ, և արձակուած ուումբերէն մէկը որ գարատաղ-



Զօրավար Մարթինովիչ կը տեսակցի ֆրանսական Կօրմեր Խաչի խումբին պետին հետ
եան բանակեղին մօտ պայթած էր, քիչ մնաց որ դառն սուգի մատնէր
բովանդակ Գարատաղը, սպաննելով Նիքօլա թագաւորին երեք զուակ-

այժերն իսկ դժուար թէ կարենան պահել իրենց հաւասարակշռութիւնը, և իրենց սուրբերը մերկացուցած, կը կռուին առանց ուշադրութիւն ընծայելու շուրջերնին սուրացող, յաճախ իրենց ականջին մօտէն անցնող կամ




(Միջին Կարգի Կոմիտեի Կողմից Կազմված Երևանի Երկրագրաբանական Մեծ Կարտայի Կտրուկ) Սպանինի Կոմիտեի Կողմից Կազմված Երևանի Երկրագրաբանական Մեծ Կարտայի Կտրուկ

իրենց հազուստը ծակծկող զնդակներուն, և ոտքերնուն տակ պայթող ուռմբերուն: Այդ անողորմ մենամարտը իր անգիր ու յարգելի կանոնները ունի. մէկ հօգի միայն պէտք է վերադառնայ իր դիրքը ողջ կամ վիրաւոր. միւսը պէտք է անշունչ տարածուի գետինը. եթէ

վիրաւոր ալ ինկած ըլլայ, միւսը չի հեռանար անոր քովէն՝ մինչև որ անկէ խլած չըլլայ կեանքի յետին հեւքը: Ու զարմանալի է որ մէկ ու միւս կողմէն արձակուող հրացանները չեն ուղղուիր անոնց վրայ, նոյն իսկ երբ մենամարտը վերջացած է, և յաղթականը իր բովանդակ հասակով դիւրին հշանակէտ մը դարձած թշնամի շարքերուն: Յաղթականը միշտ քաջ մըն է, և քաջութեան ընծայուած յարգանքը կրօնքի պէս բան մըն է այս սարերուն վրայ: Հոկտեմբեր 14ի այդ օրը՝ Կեղրոնի բանակին ձախ թեւը խոշոր թնդանօթներով բմբակոծեց Շքօտրայի արեւելեան կողմը զանուող իր քաղական մարտկոցները: Գարատաղցուց հշանառութիւնը շատ լաւ էր. միայն մէկ ուսմար ինկաւ քաղաքը, ուր կ'երեւայ թէ անձնատուութեան ի նպաստ զօրաւոր շարժում մը կար, որովհետեւ, հաղիւ բմբակոծութիւնը սկսած, քաղաքին երեւելիներէն մաս մը զաղանի դուրս ելլելով, Տանիօ իշխանին սուսնարկեց անձնատուը ըլլալ, պայմանաւ որ Գարատաղցիք, քաղաք մանելէ վերջ, հրդեհ, սպանութիւն կամ կողուպուտ չընեն և հին վրէժի հաշիւներ կարգադրելու չկրնան: Ապահովաբար դաւադրութեան մը հեռեանքով կ'ըլլար այդ դիմումը. որուն մասնակից չլին պաշտպան սպանակազօրքը և հրամանատարները: Ապանացիները՝ կռուելէ տաղտկացած, իրեւես կը մտածէին բռնի անձնատուութեան հարկադրել պահակազօրքը, և այդ էր անշուշտ պատճառը որ մինչդեռ դուրսը երեւելիներու դիմումը տեղի կ'ունենար Տանիօ իշխանին մօտ, չեւրէն ալ, քաղաքին բարձրադիր մէկ թաղին վրայ, քառասուն և աւելի սպիտակ դրօշներ կը ծածանէին, իրր հաստատութիւն երեւելիներու դիմումին: Հասան Րիզա վաչա սակայն չուստով իմացաւ խնդիրը, և որովհետեւ ձեռկերպութեանց մարդը չէր, անմիջապէս բերդին թնդանօթները ուղեց սպիտակ դրօշ պարզած թաղին վրայ և անխնայ քանդեց զայն. առաջ բերելով հրդեհ մը որ տեւեց մինչև իրիկունը ուշ ժամանակ: Յետոյ, մունետիկ պատեցնելով քաղաքին մէջ, ծանոց ժողովուրդին որ եթէ նոյն իսկ Շքօտրան յանձնեն Գարատաղցուց, Թարատաղի և Պրտիցայի բոլոր թնդանօթները պիտի ուղղուին քաղաքին վրայ, որ աւերակ պիտի դառնայ՝ սակայն Գարատաղցիք ներս չ'տած: Կորովի հրամանատարը կ'երեւայ թէ իր թախին ծանրութիւնը զգացուցած էր արդէն որ Ապանացուց պէս յաճառ, քինախնդիր ու վրիժառու ժողովուրդ մը սասանեցաւ այդ սպառնալիքէն, և անձնատուութեան տրամադրութիւնները վայրկենաբար անհետացան:

Այս դէպքերը, ինչպէս նաև Շքօտրայի երեւելիներուն դիմումը յուսադրեցին Նիքօլա թաղաւորն ու իր սպայակոյտը թէ քաղաքը իրօք նեղութեան մէջ է, և անկումն ալ մօտալուտ: Երեւելիներուն յայտարարութեան հասնաւոր, Շքօտրա սարսախի և անօթութեան մասնուած էր: Քիլօ մը հացը մէկ մէծիտի կը ծախուէր, ան ալ եթէ գանուէր սուլորաբար հացի հեռաւոր գաղափարն իսկ չարթնցնող տեսակ մը անանուս խիւս էր ժողովուրդին կերածը: Փողոցներու մէջ դեգերող շուներու և մէկ քանի կմախացած ջրիներու միսէն, կարգ մը տարրական անդեղէններէ և այդ անձանաչելի հացէն զատ ուրիշ ուտելիք չկար: Միւս կողմէ՝ Գարա-

տաղցուոց շրաքնեհները (գնդաձիր) քաղաքին վրայ կը պայթէին և հրդեհ ու մարդկային զոհ կը պատճառէին. նոյն իսկ պզտիկ տղաք սպաննուած



Նիքոլա թագաւոր կ'ը հետեւի Շքօտրաի ու գաւառի կատարէն

էին անոնցմէ: Յետոյ, յաճախ կը ծագէին մանր մուկեր ըմբոստութիւններ, որոնց կը յաջորդէին խտազոյն զսպողական միջոցներ:


Շքօտրայէն փախած երեւելիներու այս տեղեկութիւններէն զատ՝ պաշարուած քաղաքին անցուղարձերուն ու կենցաղին նկատմամբ զրեթէ ոչինչ

իմացուեցաւ(*): Միայն ժուռնալի կողմէ Գարատաղ զրկուած երկրորդ թղթակից մը որ պաշարուէն վերջ Շքօտրա կը մնար, յաջողեցաւ իր թերթին հասցնել հետաքրքրական նամակ մը, ուրկէ հետեւեալ մասերը կ'արտագրենք այստեղ. —

«Վիրրազարէն, Արթիւարիէն և աջակողմէն ալ Բօտիօրիցայէն ու Թուզիէն՝ յաղթական Գարատաղիք ոտք դրած են թրքական հողին վրայ: Կաթողիկ Ալպանացիները զորս Մալիսոր կը կոչեն և որոնք վայրագ հովիւներ, ու դէմքով՝ ասիական Թաթարներուն նմանող պատերազմիկներ են, Գարատաղցուոց միացած են թէ՛ կուռի և թէ՛ աւարի մէջ: Դուրսը, Պոյանայի ճախճախուս զարափներուն, ինչպէս Բիրիի մանուածապատ կիրճերուն մէջ, անոնք յառաջապահի զրեթէ անանցանելի զիծ մը հաստատած են: Մառերը սակաւաթիւ են, բայց առատ են սեւ ու բարձր ապառամները, պահապաններու պէս ցյուած: Անոնց ետին, պզտիկ խումբերով մարդիկ կը կենան. տասը կամ քսան հոլիւներ են, ամէնքն ալ զինուած, և Վանտէի Շուաններու կոխները կամ Սպանիոյ հրսամարտերը կը յիշեցնեն: Վայ այն միայնակ ճամբորդին որ յանդգնութիւնը պիտի ունենայ այդ տեղէն անցնելու: Թարապօչի շուրջը գտնուող թնդանօթները տակալին չին յաջողած անոր բարձունքը մազլցելու. բայց աստեղ, ամբողջ երկիր մըն է դարանած. ամբողջ անտեսանելի բանակ մըն է, որուն համազգեստները կը չփոթուին քարքարուտ հողին գոյնին հետ: Պզտիկ անխորհուրդ շարժում մը, և ահա, առանց զիտնալու, կրնաք հարիւր և աւելի հրացաններու մէկ հատիկ նշանակալը դառնալ: Տասը օր է որ պաշարուած ենք: Շքօտրա կը քնանայ առոյտ, իր դերագոյն ամբողջներուն՝ Թարապօչի և Թէփէի մէջտեղ: Ահաւոր մարտկոցներով ու ամբուլթիւններով երկու բարձունքներ են, բայց արտաքուստ միայն կանոնաւոր են. ներսը ամէն բան անկարգ է, ժանգոտած և տակնուվրայ, արեւելեան իրերու խաւնափնթորութեամբ մը լեցուն. ճիշտ ու ճիշտ միջնադարեան բերդ մը... Պահակազօրքին մեծ մասը կը բաղկանայ Ալպանացի պաշարողութեան: ասպնովաբար անոնք քաջ են և համբուրելի վարազութեամբ մը օժտուած. պատերազմը անոնց համար ապրուստի միջոց մըն է, իրենց ճակատագիրը անոր կապուած է: Իրենց համար՝ քաջութիւնն ու հերոսութիւնը այնքան բնական բաներ են որքան մահուան արհամարհանքը: Բայց իրենց մօտ բնաւ չես տեսներ ոչ մէկ խանդավառութիւն, ոչ մէկ ծիծաղ, ոչ մէկ ուրախութիւն: Պառկած ըլլան թէ կոկզած, մարդկային անսահման հօտ մը կը կազմեն և իրենց հանգիստի պահը կ'անցընեն անդադար համբիչը հատհատելով և կամ ժամերով քարի մը, ըոյսի մը վրայ ու նաև գաւաթի մը յատակը յառած պահելով իրենց նայուածքը: Իրենց հողին պատկերը աչքերնուն մէջն է, — համակերպող հողի մը: Սակայն դեռ նոր նոր կտրուած վիզերէ հոսող արիւնը, Գարատաղի լեռնականներուն հարուստ արիւնը, վաղը կ'ուրէն վերջը պիտի կրնայ զիրենք սթափեցնել: Ու ժամերը կ'անցնին՝ տենդագին մեղամաղձութեամբ մը զեղուն:

(*) Այս տողերը գրուած միջոցին Շքօտրա տակաւին պաշարուած կը մնար:

«Գիշերը ոչ ոք դուրս կ'ելլէ: Դուռերուն առջեւ քաշուած երկաթեայ շղթան կ'արգիլէ մուտքը. ու եթէ երբեք յանդգնիք մտնելու անոնց բակէն ներս, պիտի տեսնէք պահապան մը որ շուտով հրացանը կուրծքերնուդ կ'ուղղէ: Քայլ մըն ալ, և հարուածը կ'արձակուի: Վրդովիլ լուծիւն մը կը ծանրանայ քնացած քաղքին վրայ: Ու եթէ պատահամար



Օսմ. վրաններ Շքօտրայի լիճին շուրջը

չուն մը հաչէ, իր աղաղակը զարմանալի կերպով կը խորտակուի լերան կողերուն վրայ: Իբր ամբողջ կեանքի նշան՝ տուներու պատուհաններէն երեւցող լոյսերը միայն կան և այդ պատուհանները բերդի մը լուսանցքներուն կը նմանին: Լա Իսարի մը շողքը կը լուսաւորէ առաստաղ մը. վարազոյր մը կ'երեւայ, քօղարկուած ստուեր մը կ'անցնի:

«Երբ առտու կ'ըլլայ՝ ամէն մարդ ուտելիքին վրայ կը մտածէ, որովհետեւ թէ ցամաքէն և թէ լիճին վրայէն ամէն ճամբաներն ալ կտրուած են: Ութ օր կ'ընէ որ ոչ մէկ կարաւան հասած է Շքօտրա: Հեռագրական ձողերն ու կամուրջները խորտակուած են կացինի հարուածներու տակ: Թնդանօթն ու տինամիթը քաղաքը կաշկանդած են թշուառութեան զարհուրելի չրջանակի մը մէջ: Լիճին վրայ, ափէն հաղիւ մէկ քանի հարիւր մէթր անդին, ձկնորսութիւն ընող ձերուսիներ իրենց ուռկանները նետած են: Շատ աղուոր ձուկեր կ'օրսան, և անոնց շնորհիւ կրնանք ձմուռուան պահեյ մեր ժամպօնները: Ուտելիքը կը պակսի. մեր կերած հացը հաճարի ու եգիպտացորենի անձանաչ խառնուրդ մըն է: Միսը շատ հազուադիւստ ու սուղ է. հաւը ամենասուղ: Մեզի սպասարկող պանդոկապետը որ Թուրքի ու Իտալացիի խառնուրդ մըն է, կ'երեւայ թէ շատ սուղ կը գնէ զանոնք. գոնէ շատ պղտիկ մասերով կը մատուցանէ մեզի և ահագին դրամ կ'առնէ: Մենք ալ կրցածնուս չափ անուշիկէն կ'ուտենք. որովհետեւ այստեղ ամէն տուն, նոյնիսկ ամէնէն աղքատը, ահագին քանակութեամբ քաղցրաւենի ամբարած է: Տաքնալու համար կը ստիպուինք խոհանոց ապաստանի: Ամէն բան կը գործածուի կրակ վառելու համար. ոչ իսկ կը ինային տուներու վանդակապատները: Պարտէզներուն մէջ, հորերու շուր-

ջը, դեռ երէկ այնքան աղուոր ծառեր և հոտաւէտ լեմոնենիներ կային. բոլորն ալ վառելափայտի վերածուած են:

«Խնդիր է թէ ինչպէ՞ս կը մնանին զինուորները: Գաղտնի՞ք...: Բոլոր ոչխարի ու եղի հօտերը որոնք՝ սահմաններուն անդիի և ասդիի կողմէն յափշտակուած էին առաջին օրերը, մինչևեւ ոսկորները կերուած լմնցած են արդէն: Զինուորները այլևս տասերկու ժամը անգամ մը միայն կը ճաշէն: Եւ ի՞նչ ճաշ... Չուրով փիլաւ...: Յաճախ բախտաւոր օրեր կ'ունենան: Լիճին վրայ գտնուող չորս շողեմակոյկներ կան որոնք միթրայեօզներ կը կրեն: Կը պատահի որ ասոնք հօտի մը հանդիպին և զայն ումբա կոծեն: Այն իրիլունը՝ պահակազօրքը կերուխումի մէջ կ'ըլլայ: Շատ անգամ ալ կը լսենք որ ասդին անդին տուներ թալլեր են. և առաւելապէս զիսի հանող տուներն են թալլուողները:

«Ժամանցի պահեր չունինք, և աշխարհի մնացեալ մասէն բնաւ լուր չի հասնիր մեզի: Երբեմն երբեմն, զինուորներու ցանցին մէջէն Ներս կը սպրդին Տուլլինեօէն կամ Մլատուայէն եկող պստաւ կիներ, որոնք, նաւասաիներէ լսած կ'ըլլան բոլորովին հակասական լուրեր և զանոնք մեզի կը հաղորդեն: Օր մը կ'իմանա՞ք թէ Պուլկարները գրաւեր են Պոլիսը. ուրիշ օր մըն ալ կը լսենք թէ Թուրքերը զանոնք Չարդ ու փուրը ըրեր են: Հէքեաթներ կը չրջին այսպէս, և ստալուզութիւնն ու միայնութիւնը բոլորովին խոշոր համեմատութիւններ կուտան անոնց: Այլևս սկսած ենք բանի մը վրայ ալ չզարմանալ: Հարէ՛մնելու մէջ, ու քիչ մը ամէն կողմ,



Շքօտրայի մէկ տեսարանը

վախ և դեղնած մասններով բախտահմայ կիներ կ'երգեն Գուրանէն հառուածներ և իրենց անընթեռնելի թուղթերուն վրայ նայելով ապագան կը գուշակեն: Երբոր մութը իջնէ, իսկոյն կը բացուին պղտիկ սրճարանները: Արծուեռունգն ձերուսիներ կը տարածուին նստարաններու վրայ, չպոխը բերանին: Սուրճի գաւաթները կը սկսին չրջան ընել: Գրեթէ ոչ ոք կը

խօսի. պղտիկ սրահին մէջ որ շուտ մը լեցուած է ծուխով, մարդիկ կամ կ'երազեն և կամ կ'աղօթեն: Յաճախ, մտիթին մէջէն, ահաւոր աղաղակներ կը ժայթքին. պահնորդի մը կողմէ արձակուած հրամաններ են: Եւ ահա, առանց պատճառի, սրճարաններէն դուրս կը նետեն յաճախորդները, հապճէպով, իբր թէ Մահը քաղքին դուռներէն ներս մտած ըլլար: Յետոյ կը դոյնեն փեղկերը և դուռները կը կղպուին: Այս է ահա կեանքը պաշարուած Շքօտրային մէջ:

«Իսկ պատերազմը. լաւ կ'ըլլայ որ ակնարկ մըն ալ անոր վրայ նետենք: Կոխը մեր բոլորտիքն է որ տեղի կ'ունենայ, ամրացեալ լեռնաշրջվայի մը վրայ որ տասնմէկ քիլօմէթր երկարութիւն ունի: Գիշերները անձրեւոտ ու քաղցր են: Իրիկամուտին, յանկարծ թնդանօթին ձայնը կը զզրոյցնէ լեռները: Յետոյ, ժամ մը կամ երկու ժամ ալ հրացանած գութեան ձայնը կը լսուի, և անոր հետ ալ՝ միթրայեղօդներն են որ կը խօսին: Կարմիր ու կանանչ հրեղէն ժապաւէտներ կայծակներու պէս կը կտրատեն վերջալոյսը: Յանկարծական լուսթիւն մը պահ մը սիրտերը անձկութեամբ կը սեղմէ. յետոյ, անակնկալ կերպով, քսան թնդանօթ մէկանց կը գոռան: Այդ պահերուն՝ քաղաքը գերեզմանոցի մը երեւոյթը կը ստանայ: Տունկու մէջ կիներու ամբողջ բազմութիւն մը կայ որ կ'աղօթէ: Վաճառորդներ իրենց խանութիւն խորը կը քաշուին: Մերուսիներ պատէն վտար կ'առնեն իրենց հնամենի գէնքերը. հպարտութեան սարսուռով մը և կը զգուեն իրենց մէջքին ազուցուած դաշոյնին երախակալը: Ինչ հաճոյքով պիտի կտրէին արդեօք լերան անդիլի կողմի դարբար թըշնամիներուն վիզը: Աւելի ուշ, ուրախութեամբ հինգ կամ վեց ժամ ետքը, ամրոցներն ի վտար իշնող նեղ անցքերէն՝ վիրաւորները քաղաք կը բերուին ծառի ճիւղերէ շնուած նախնական պատգարակներով, Խօսէ անկողին մը և խայտարակտ գորգ մը...: Ատ է իրենց բովանդակ անկողինը և շատ անգամ ալ իրենց պատանքը...: Հիւանդանոցին սեփին վրայ կայնած է փաթթոցաւոր հօճան, և վիրաւորներուն վրայ կը կարգայ սրբազան մատեանէն կտորներ: Ոչ մէկ գանգատ, ոչ մէկ հեծեծանք կը լսուի: Մարդը կը տարածեն հանդիպած անկողինին, և կամ պարզապէս յարդի վրայ: Չկայ վիրաբոյժ մը որ լուիկ ու համակերպած վիրաւորը դարմանէ: Խեղճը իր լայնաբաց վէրքը կը դիտէ անխօսուկ. վերջը փտախտը, և աւելի վերջն ալ՝ մահը...: Եթէ այդ խեղճերէն մէկը հրաշքով ազատի մահուէնէ, մի կարծէք որ երջանիկ պիտի ըլլայ ասոր համար: Ընդհակառակը, պիտի մտածէ որ Աստուած զինքը արժանի չէ դատած իր արքայութեան...»:

Այս բոլոր տեղեկութիւնները որոշ ցոյց կուտային թէ Շքօտրայի ժողովուրդը դժգոհ է պաշարումէն, և սիրայօժար պիտի ընդունի պաշարման բարձունն ու իր հանգստութիւնը, հոգ չէ թէ ասոր համար պէտք ըլլայ Գարատաղցոց լուծին համակերպելու: Այս տրամադրութեամբ տողոր ուած ժողովուրդի մը մէջ՝ պահակազօրքին դրութիւնը անշուշտ ալ աւելի կը դժուարանար: Թշնամին լոկ դուրսէն չէր, այլ նաև ներսէն. միայն Գարատաղցոց վրայ հսկելու բռնադատուած չէին՝ որպէսզի ներս չմտնեն:

ստիպուած էին հսկել նաև ժողովուրդին վրայ, վախնալով որ միւսները ներս կը մտնեն: Ապահովաբար Նիքօլա թագաւոր իր յոյսը պահակազօրքին և անոր հրամանատարներուն այս տրամադրութեան վրայ դրած էր, երբ հոկտեմբեր 15ի իրիկունը, առտուէնէ ի վեր տիրող անողորմ ուժակոծութիւնը դադրեցնել տալով, սպիտակ դրօշ պարզեց և թշնամիին մօտ զրկեց Գարատաղցի պատգամաւորներ, որոնք իրենց վեհապետին անուսով ըսին Ռիլա փաշայի:

— Չեր դիմադրութիւնը հիացան արժանի է, բայց ձեր ճիգերը անօգուտ են. չէք կրնար սովին և եղանակին խստութեան դիմադրել: Անձնատուր եղէք. Բըրք-Բիլիսէի և Քուսուսի մէջ նոյնը ըրին ձեր եղբայրները:

Հասան Ռիլա փաշա պատասխանեց.

— Ամրոցիս մէջ ես եմ տէրը. որքան ասին որ ողջ եմ, Թարապօշ անձնատուր չպիտի ըլլայ:

Այս հոգին կրող հրամանատարներ անձնատուր չէին կրնար ըլլալ անշուշտ: Նիքօլա թագաւոր չպնդեց, մտածելով որ ինք ալ նոյն բանը պիտի ընէր եթէ անոր տեղը ըլլար, ինչպէս յայտնած էր իւր շուրջիներուն: Պէտք էր սու ինի ծայրով և կամ անօթութեամբ առնել քաղաքը: Բայց ասոր համար տակաւին շատ ու շատ ժամանակ պէտք պիտի ըլլար. և քանի՜ օրերը կ'անցնէին, այնքան կը բազմապատկուէին Գարատաղցոց կորուսաները. Շքօտրա և Թարապօշ կը սպառնային Չոնակօրայի գերեզմանոցը դառնալ: Վիրաւորներուն թիւը զարձարելի համեմատութեամբ կ'աւելնար, և դժուար կը դառնար անոնց փոխադրութեան հասնիլ: Կիներն ու տղաքը միշտ սոքի վրայ էին, ճամբաներուն երկայնքը. նոյն իսկ տասնամեայ մանուկներ կիրով լեցուն պղտիկ կառքեր կը քաշէին դէպի ընդհարման վայրերը, դիակները ծածկելու համար:

Հոկտեմբեր 16ին՝ Հարաւային բանակին աջ թեւը, բաւական դժուարին յարձակումներէ վերջ, յաջողեցաւ գրաւել Պուղաթին որ Շքօտրայի և Ս. Ժան տէ Մէտուայի յարաբերութեան կայաններէն մէկը դարձած էր: Նոյն օրը, ինչպէս նաև յաջորդ օրը՝ Թարապօշի և Շքօտրայի ուրախութեամբ շարունակուեցաւ սաստիկութեամբ: Թուրքերը նուազ տրամադիր չէին երեւաւ կռուելու, և իրենց գործած յարձակումներէն դիւրաւ կտրելի էր հասկնալ թէ՛ ոչ պաշարման խստութիւնը, ոչ նաև ներքին տաղտուկներ ու մտահոգութիւններ կրցած են խորտակել զիրենք տողորող ուղմական աւիւնը: Յարձակումները զորս կը գործէին միանգամայն թէ՛ Սպլիքայի և թէ՛ Պօքսիի դիրքերը ետ առնելու նպատակով, և որոնք շատ կորուստ կը պատճառէին իրենց, որոշակի ցոյց կուտային թէ այդ երկու դիրքերուն գրաւումը բաւական տագնապի մասնած էր զիրենք, ու քաղքին պաշտպանութեան գործը դժուարացուցած: Հոկտեմբեր 17ին՝ զօրավար Մարթինօվիչ աստիճան մը աւելի խստացուց պաշարումը, իր աջ թեւին միջոցաւ Բուլէյի դէմ գործողութեան մը ձեռնարկելով: Բուլէյ Պոյանայի աջ կողմը աւան մըն է և անկէ Թուրքերը կը պարէնաւորուէին գետին միջոցաւ, հակառակ ի գործ դրուած խիստ հսկողութեան: Բաւա-

կան կարեւոր թրքական ոյժ մը գոյութիւն ունէր այնտեղ, և ծովեզերքին երկայնքը կը մնար պատերազմի սկզբնաւորութենէն ի վեր, պաշարուած քաղքին և ծովին միջև յարաբերութիւնը պահպանելու համար: Հարաւային բանակին ս ջ թեւէն անջատուած գումարտակ մը, Հոկտեմբեր 17ի առտուն Պոյանան անցաւ գետտարեանէն և շատ բուն ընդհարումէ մը վերջ ցրուեց օսմ. ոյժերը, որոնք խառն ի խառն նահանջեցին, թնդանօթ մը ձգելով Գարատաղցու ձևքը (*): Յրուած թրքական ոյժը կը



Գարատաղցի կենտրոն գործունէութիւնը Շքօտրայի լիճին վրայ

բաղկանար գումարտակէ մը և պաշարպօղութիւններու խումբէ մը: Նոյն օրը՝ Կեղրոնի բանակը, Կօլէմի տարութեան շուրջը դառնալով, յարձակեցաւ Պարտանեօլի կարեւոր դիրքին վրայ, զոր պաշտպանող հազարէ աւելի Ալպանացի կամաւորներ ձգեցին փախան: Գարատաղցու յառաջապահ խումբ մը, որուն մաս կը կազմէին նաև բազմաթիւ Մալխօրներ, հաս-

(*) Բուլէյէն՝ Թրքական զօրքը նահանջեց Ս. Ժան տէ Մէտուա, ուրիկ ալ՝ Պարպալուչի-Պուզաթի-Պրտիցա ճամբով կը պարէնաւորուէր Շքօտրայ վերջէն, ինչպէս պետի տեսնենք, զօրավար Մարթինովիչ քաղքին պարէնաւորման սյդ միջոցն ալ կտրեց, գրաւելով Ս. Ժ. տէ Մէտուան և Ալէսիօն:

տատուեցան այդ դիրքին վրայ և սկսան դայն ամրացնել, երբ փախստականները ետ դարձան սպիտակ դրօշ պարզած: Գարատաղցիք, առանց բանէ մը կասկածելու, թողուցին որ մօտենան: Ալպանացիները սակայն



Գարատաղցու զինուորական փոխադրութիւնները Շքօտրայի լիճին վրայ

Հարաչար գործածեցին անոնց վստահութիւնը, և հազիւ մօտեցած, զարհուրելի կրակ մը բացին Պարտանեօլին գրաւողներուն վրայ, որոնք հապճէպով ետ քաշուեցան, 300 մեռեալ և վիրաւոր ձգելով: Ալպանացիք, իրենց յաջողութենէն գրգռուած, կտոր կտոր ըրին բոլոր վիրաւորները:

Յաջորդ օրը, Հոկտեմբեր 18, Պարտանեօլի դաւին վրէժը լուծելու համար, զօրավար Մարթինօլիչ անարկու ուժակոծութեան մը ենթարկեց թարապօջը: Ռմբակոծութեան հետեւանքով լերան վրայ առաջ եկաւ զարհուրելի պայթիւն մը որ չորսդէն դղրդեց: Գարատացւոց ուսմբերէն մէկը ինկած էր վառօղի մթերանոցին վրայ, որ պայթած էր, շուրջը գտնուող սակաւաթիւ պահակներու մահուան պատճառ դառնալով: Հոկտեմբեր 19ին՝ նոր ուժակոծութիւն մը աւելի յաջող արդիւնք մը տուաւ, քան դելով թարապօջի պաշտպանութեան համար շինուած մէկ քանի ահրութիւններ: Թուրքերը հակայարձակմամբ մը խոյացան իրենց դիրքերէն դուրս, բայց ետ մղուեցան, մէկ քանի մեռալ ու գերի թողլով Գարատացւոց ձեռքը: Զօրավար Մարթինօլիչ իր բանակեալը փոխադրած էր Մուրիքան, և կ'աշխատէր սեղմելու պաշարման գօտին կազմող թնդանօթներու և սուխներու կրկնակի շարքերը: Իր գործը դիւրին չէր. — «Թնդանօթները թարապօջը չըջարտող բարձունքներուն վրայ հանելու համար, կը գրէ ժողովակիցը, ստիպուեցաւ տխրամիտօվ օղը հանել անազին ցցունքներ և ճամբայ բանալ: Ան յաճախ ստիպուեցաւ աւելի քան 650 մէթր բարձրութեամբ սարերու կատարը հանել իր անագին թնդանօթները: Իսկ որ ըրին ճարտնիք՝ Բօրթ-Արթուրի առջև, այն դժուարութիւնները որոնց ենթարկուեցան, ոչինչ են բաղդատմամբ Գարատացւոց ըրածին: Անձրեւն ու ձիւնը իրարու յաջորդելով շուտով կը գոցեն մեծամեծ դժուարութիւններով բացուած ճամբաները, և ան նոր աշխատութիւն ու նոր տաժանք՝ անցանելի վիճակի մը մէջ դնելու համար գոյացած ճախճախուսաները, որոնք տեղ տեղ ճշմարիտ լիճերու երեւոյթը ստացած են: Սոււայի կատարը, ուր կը բարձանամ երբեմն, դմայելի դիտարան մըն է: Անկէ կ'երեւան Հարաւային բանակին զրաւած չորս բարձունքները, աջ կողմէն Գրայան, փիչ մը աւելի հեռուն Շիրօքան, իսկ ձախէն նախ Մուրիքանը, յետոյ Օպլիքան, որոնք թարապօջը կը չըջարտեն. հսկայ ամրութիւնը իր երկու բարձունքներով՝ կրկին կոտորով ցուլի մը կը նմանի և անընդհատ կրակ կը ժայթքէ իր անարկու թնդանօթներէն: Շուրջը՝ ոչ մէկ կողմ զինուորական շարժում կ'երեւայ: Պաշարող բանակը, հակառակ իր բազմութեան, սարերու սապատներուն ետին, կամ հաւասարապէս անմերձենալի անցքերու խորը ծածկուած կը մնայ, և իւր ամբողջ կուռի տեսարան լոկ թնդանօթներու մեհամարան է որ կը տեսնուի: Վերէն ու վարէն՝ Թուրքերն ու Գարատացիք՝ կ'աշխատին իրարու թնդանօթները լռեցնելու. իւրաքանչիւր թնդանօթի հարուած ուրիշ թնդանօթի մը վրայ ուղղուած է: Թարապօջի թնդանօթածիղները, որոնք Գերմանացւոց աշակերտներն են, գրեթէ միշտ շատ լուսնան կ'առնեն: Գարատացիք ալ յաճախ կը յաջողին նախանձելի կերպով մը գործածել իրենց թնդանօթները: Եւ ուսմբերու այդ փոխանակութեան միջոցին, զինուորները կը սպասեն իրենց թաքստոցներուն խորը, անհամբերութեամբ լրտեսելով յարձակման հրամանը որ կ'ուշանայ ու կ'ուշանայ: Եթէ Գարատացիք ուժակոծեն Պրտիցան որ Շքօտայի վրայ կը հսկէ, թարապօջը կը ուժակոծէ Մուրիքանը. այն ատեն Շիրօքա ալ կը ուժակոծէ թարապօջը. և այսպէս անվերջ»:

Եւ սակայն, քաղքին անկումը կ'ուշանար: Կեդրոնի և Հիւսիսային բանակներուն սկզբնական յաջողութեանց յարուցած խանդավառութիւնը տակաւ կը մարէր: Նիքօլա թագաւոր և իր դաւակները կարգին կ'ընէին նոր կորով ներշնչելու համար իրենց զինուորներուն: Թագաւորը, հակառակ իր տարիքին, ձիւնին ու բուքին, շարունակ մէկ դիրքէն միւսը կը փութար, վիրաւորները կը սրտապնդէր, մեռելներու տէրերը կը մխի-



Գարատացի կամաւորները կուռի դաշտը մեկնելէ առաջ կը համբուրեն Նիքօլա թագաւորին ձեռքը

թարէր: Նոր կամաւորներ կը հասնէին Ռուսիայէն, և անոնց ժամանումն ու անձնազոհութիւնը փրկարար ազդեցութիւն մը կ'ընէին բանակին վրայ: Աւելի քաջալերիչ էին հետզհետէ Ամերիկայէն երկիր վերադարձող Գարատացի գաղթականները, որոնք ազվակալից ցոյցերով կը մտնէին Անթիլարի, յաճախ նաև հրազէնի հարուածներով կը յայտնէին իրենց անհամբերութիւնը, վայրկեան մը առաջ կուռի դաշտը մեկնելու, դարաւոր թըշնամիին դէմ խիզախելու: Անոնք իսկոյն իրենց վրայէն կը նետէին եւրօպական տարազը որ զիրենք անձանաչելի կը դարձնէր, կը հազնէին զինուորական համազգեստ կամ իրենց բնիկ տարազը, և թագաւորին ներկայանալէ, անոր ձեռքը համբուրելէ վերջ կը վազէին կուռի: Հեռաւոր Ամերիկայի կենցաղը չէր չըջած իրենց հոգին, նոյն արի ուղմիկներն էին.

միշտ, նոյն անձնադոն հերոսները: Հոկտեմբեր 20ին իշխան Միրքօ հե-
տեւեալ յայտարարութիւնը ուղղեց **Զէթա-Պիէլօբալլիչի** գումարտակին,
որուն կը հրամայէր:—

Պիէլօբալլիչի զինուորներ,


Հայրս՝ Նիքօլա Թադաւոր՝ ձեր նկատմամբ տածած սիրոյն իբր ապացոյց զիս
դրկած էր հրամայելու ձեր գումարտակին, այն վստահութեամբ թէ դուք անխախտ
պիտի մնաք ձեր հնազանդութեան ու հերոսութեան մէջ: Մեկնած միջոցիս ըսած էր
ինձի.— «Լաւ պահէ Պիէլօբալլիչի իմ զինուորներս, որոնք իմ բանակիս ծաղկներն
են. թող ի դուր չլորհն իրենց կեանքը. բայց եթէ հայրենիքին պաշտպանութեան
պէտք ըլլայ, դուն ալ մեռիր անոնց հետ»: Յանձնարարած էր նաև որ քաջութեան
մրցում չընենք միւս զօրաբաժիններուն հետ, այլ կէտ առ կէտ հպատակինք թէթայի
զօրաբաժնին հրամանատարին և իմ գահաժառանգ եղբօրս հրամաններուն: Աստուած
պիտի օրհնէ մեր զէնքերն ու ճիգերը:

Ահա արդէն հասած ենք Պուլսթալիարի զօրաւոր Մահմուտ փաշային քաղաք-
ներուն և պալատներուն պարզած շքեղ տեսարանին առջեւ: Մեր արժանի նախահայ-
րերը երբեմն ոչնչացուցին Մահմուտ փաշայի զօրութիւնը, ու մեր **Զէթիներէի Ս. Պետ-**
րոսը աջակցեցաւ իրենց իր աղօթքներով, և ըսաւ փաշային.— «Դնա՛ Վէզիր, ինձի
ձգէ իմ աղքատիկ լեռներս, և ես ձիդ կը վերադարձնեմ քեզի»:—

Ոտքի ելլենք, եղբայրներ, ոտքի ելլենք մեր սուրբին օգնութեամբ և քալենք
Վէզիր Մահմուտի քաղաքին վրայ. բայց ոչ թէ թշնամիին թնդանօթներուն տակ և
արիւնոտ սուկներ ձեռքերնիս, ինչպէս եղաւ Տէտչիչի առջեւ, ուր մեր լեռներու
երիտասարդութիւնը, որոնց հրամայելու պատիւը ունէի, ցոյց առաւ մեր զէնքերուն
արժէքն ու մեր զինուորներուն հերոսութիւնը: Համբերութեամբ և խոհեմութեամբ
սպասենք մեր ճիգերուն յաջողութեան:—

Այն միջոցին ուր այս խանդավառող յայտարարութիւնը ծախերով և
«Հուրրա՛ններով կ'ողջունուէր, Գարատաղ ծանր սուզի մը կը մատնուէր
Անթիվարիի ռազմանիւթի մթերանոցին պայթմամբ: Վենետիկցիներէն
մնացած Սթարիպարի հնամենի ամրոցը, ուր ամբարուած էին ահազին
քանակութեամբ պայթուցիկ նիւթեր, ռուսք ու փախուչաւ, օդը ելած էր
յանկարծ, կանոնաւոր ճակատամարտի մը չափ նիւթական վեաս ու մարդ-
կային զոն արժեւով դժբախտ ու հերոսական երկրին: Աղէտը կրնար աւե-
լի մեծ ըլլալ, եթէ երբեք ամրոցին պահակներէն մէկը, հակառակ ծան-
րապէս վիրաւորուած ըլլալուն, անհնարին զիւցազնութեամբ մը աւալի
պարկերով չծածկէր ամրոցին այն անցքերը որոնց մէջ պահուած էր վա-
ռօդը: Յայտնի չեղաւ պայթման պատճառը: Էապէս Թուրք մնացած այդ
քաղքին մէջ, Գարատաղ պատճառներ ունէր ժողովուրդէն կասկածելու:
Այնտեղ կը գտնուէին նաև բազմաթիւ թուրք գերիներ, զորս Գարատաղի
կառավարութիւնը, Հէլլէներուն հետ կնքուած համաձայնութեամբ մը,
հետզհետէ Յունաստան կը զրկէր, որովհետև չէր կրնար իր ձեռքը զըտ-
նուող բոլոր գերիները ապրեցնել. արդէն անոնց վրայ հսկելու գործն ալ
դժուար էր իր սակաւաթիւ բանակին համար: Այս գերիներն ալ կասկա-
ծի ենթարկուեցան, բայց ոչ մէկ փաստ հաստատութիւն տուաւ այդ
կասկածներուն:

Ձմեռուան յառաջացման հետ՝ Գարատաղցոց գործը օր օրի բոլորո-
վին կը դժուարանար: Զիւնը ծածկած էր ամէն կողմ: Արդէն իսկ դժ-




Սուրբ Պետրոսի յարձակումը Պուլսթալի քաղաքի կողմէ

ԲՈՒՆՈՒՄ

ուարին ճամբաները բոլորովին անանցանալի դարձած էին. դրամը կը պահպէր, ուղւամտներքն ալ. եթէ չըլլար Ռուսիոյ կողմէ ընծայուած մանաւանդ նիւթական օժանդակութիւնը, Գարատաղցիք վաղուց պէտք է հրաժարէին Շքօտրայի պաշարումէն: Քաղաքն ալ շատ գոհ չէր իր վիճակէն. պաշարողներուն ուժերը յաճախ բաւական ծանր վնաս կը պատճառէին այնտեղ, ինչ որ բոլորովին տագնապալի կը դարձնէր արդէն իսկ ուտելիքի նուազութենէն նեղուող ժողովուրդին վիճակը: Հոկտեմբեր 21ին՝ Թուրք սպայ մը պատգամաւորի հանգամանքով Կեղրոնի բանակին ընդհանուր բանակետը երթալով ներկայացաւ Տանիլօ իշխանին, որուն նամակ մը կը բերէր Շքօտրայի Ֆրանսական իտալական, ռուս և աւստրիական հիւպատոսներուն կողմէ: Այս վերջինները, յանուն յուզուած բնակչութեան, կը խնդրէին գարատաղեան բանակներու ընդհանուր հրամանատարէն որ ուշադրութիւն ընծայուի թնդանօթածիգներու նշանառութեան. կը յայտնէին նաև որ ուժերը կ'իյնան քաղաք, կը պայթին եկեղեցիներու և ուրիշ չէզոք հաստատութեանց մօտ, ու խուճապի կը մատնեն ժողովուրդը: Իշխան Տանիլօ իր պատասխանին մէջ ցաւ յայտնելով հանդերձ, զիտել տուաւ թէ աշխարհի լաւագոյն թնդանօթածիգներն անգամ չեն յաջողիր իրենց բոլոր ուժերը բուն նպատակակէտին հասցընել. զիտել տուաւ նաև թէ Շքօտրա ամրացեալ բերդաքաղաք մըն է, և տեղւոյն իսլամ բնակչութիւնն ալ զինեալ կը կռուի պահակազօրքին հետ, ինչ որ իրեն իրաւունք կուտայ մարդասիրական նկատումները ստորագրուելու զինուորական գործողութեանց անհրաժեշտութիւններէն: Իբր միակ զիջում՝ իշխան Տանիլօ հրաւիրեց որ հիւպատոսները անձամբ սպիտակ դրօշ պարզեն չէզոք հաստատութեանց վրայ, որոնցմէ դատ ամէն շէնք պիտի շարունակէր ուժակոծել, եթէ հարկ ըլլար: Այս պատասխանը տանելու սահմանուած Գարատաղցի սպային ընկերացաւ Չէթինեկի աւստրիական զինուորական կցորդ հարիւրապետ Հիւպրա, որովհետև Տանիլօ իշխան չէր ուզեր վստահիլ Թուրքերուն, առարկելով թէ պատերազմական կանոնները չեն յարգեր, ինչպէս չէին յարգած Պարտանեօլի մէջ, և կըրնան սպաննել պատգամաւորը:

Մինչև Նոյեմբեր 3՝ փոխադարձ յարձակումները շարունակուեցան առանց կարեւոր արդիւնքի: Թուրքերը մէկ քանի հեղ փորձեցին ետ առնել իրենց կորսնցուցած դիրքերը, մասնաւորաբար Օպլիքան, փորձեցին նաև Գարատաղցիները ետ մղելու Շիրօքայի բարձունքէն, բայց իրենց ջանքերը ապարդիւն մնացին: Կեղրոնի բանակը՝ Նոյեմբեր 3ին յաջողեցաւ լուծեան դատապարտել Կօլէմի թնդանօթները և վերստին գրաւել Պարտանեօլին, զոր Հոկտեմբեր 17ին լքած էր Ալլանացուց ծանօթ դաւին հետեւանքով: Մասնակի յաջողութիւններ ունեցան նաև բանակին միւս մասերը, և ձեռք անցուցին Թուրք գերիներ: Ֆրանսական կառավարութեան պահանջման վրայ, Գարատաղցիք արածնեցին որ Շքօտրայի մէջ գտնուող Ֆրանսացիները մեկնին քաղաքէն: Այս պահանջումը ինքնին փաստ մըն էր թէ քաղքին վիճակը շատ տագնապալի է: Աւելի քան եօթանասուն հանրային շէնքեր քանդուած էին Գարատաղցուց ուժերէն:

Նոյեմբեր 6ին Շքօտրայի առջև հասաւ նաև Հիւսիսի բանակը, առաջնորդութեամբ զօրավար Վուքօթիչի, և բոլորովին խստացաւ պաշարումը: Զօրավար Չիվքօվիչի հրամանատարութեան տակ գտնուող սերպիական բանակ մը, նոյնպէս կը փութար Գարատաղցուց ոյժ տալու: Յաջորդօրը, Նիքօլա թագաւոր յայտարարութիւն մը ուղղելով բանակին, ծանոյց թէ ինք կը ստանձնէ գործօն ընդհանուր հրամանատարութիւնը, և անձամբ պիտի վարէ պաշարման բովանդակ գործողութիւնները: Նոյն յայտարարութեամբ՝ Տանիլօ իշխան կը դառնար հրամանատար Կեղրոնի ու Հիւսիսի բանակներուն, և զօրավար Վուքօթիչ ալ ընդհանուր սպայակոյտի պետ կը կարգուէր. իսկ զօրավար Մարթինօվիչ կը պահէր Հարաւային բա-



Սթարիպարի ամրոցին տւերակները Անթիվարիի մէջ

նակի հրամանատարութիւնը: Նոյեմբեր 8ին՝ մինչդեռ դարձեալ բուն ընդհարում մը տեղի կ'ուենար, պահակազօրքին մաս կազմող պաշարուողներու խումբ մը փորձեց փախչիլ քաղաքէն, բայց Թուրքերը հրացանի հարուածներով ստիպեցին դանոնք որ ետ դառնան: Անկէ ետքը, մինչև Նոյեմբեր 16, զինուորական գործողութիւնները ընդհատուեցան՝ Պոյանա և Տրին գետերու յորդած ըլլալուն պատճառաւ: Զորս զին ամէն կողմ ճախճախուտներ գոյացած էին և մեծ դժուարութիւն կը ներկայացնէր բանակներուն պարէնաւորման գործը: Նոյեմբեր 16ին ուժակոծութիւնը վերսկսաւ սաստկութեամբ. Նիքօլա թագաւորին ներկայութիւնը բանակին մէջ, խանդավառութեան նոր գրգիռ մը դարձած էր, բայց քանի հերոսաբար կը մարտնչէին Գարատաղցիք, այնքան արդիւնքը կը մնար աննշան: Թարապօջ միշտ նոյն անառիկ վիճակին մէջն էր, և իր պաշտպա-

նութեան ամէնէն անհրաժեշտ ամբողջութիւնները չէին ինկած: Պահակազօրքը կ'երեւայ թէ առատ ռազմամթերք ունէր տակաւին, որովհետեւ աւելի ուուժը կը սպառէր քան բուն իսկ պաշարողները: Նոյեմբեր 18ին թնդա-



Ամերիկայի Գարատաղցի դաղթակոմսներուն հայրենիք վերադարձը

նօթը դարձեալ գուռաց Շքօտրայի շուրջը, և շատ մեծ ուուժեր ինկան քաղքին վրայ: Դաշնակիցներուն և Թուրքիոյ միջև զինադադարի բանակցութիւնները սկսած ըլլալով, Նիքոյա թագաւոր գերագոյն ճիգ մը կ'ընէր քաղաքը ձգելու, տակաւին զինադադարը չկնքուած: Նոյեմբեր 19ին ուրմ-

բակոճութիւնը խօյական սաստկութեամբ շարունակուեցաւ պաշարման խոչոր թնդանօթներով, և տեղի ունեցան մէկ քանի յարձակումներ, միանգամայն երեք բանակներուն կողմէ: Ընդհարումը խիստ եղաւ մասնաւորաբար Շքօտրայի արեւելեան կողմը, ուր Գարատաղցիք բաւական մեծ կորուստ տուին, և ետ մղուեցան Թուրքերուն զարնուրի հակայարձակման առջև: Իրենց պարտութիւնը կրնար աղետալի դառնալ, եթէ երբեք Ջէթայի գումարտակը որուն կը հրամայէր իշխան Միրքօ՝ արիութեամբ չպաշտպանէր նահանջը որ արդէն իսկ խուճապի վերածուած էր: Նոյն օրուան գործողութեանց անյաջողութիւնը այնքան ջլատիչ ազդեցութիւն մը գործեց բանակին վրայ որ իրիկունը, Նիքոյա թագաւոր չըջեցաւ ամէն կողմ, և դրամի ու պատուանշաններու բաշխումով աշխատեցաւ զինուորներուն խանդավառութիւնը վերահաստատելու:

Յաջորդ օրը, 20 Նոյեմբեր, Չաթալճայի առջև զինադադար կը կնքուէր, և Պուլկար կառավարութեան կողմէ Չէթինէէ հասած հեռագիր մը կը հրատարակէր Նիքոյա թագաւորը որ դադարեցնէ զինուորական գործողութիւնները: Մերունի վեհապետին համար ճշմարիտ սիրտիանք մը եղաւ այս լուրը, որովհետեւ իր բանակին չափազանց յոգնած էին ո՛չ այնքան մղուած կռիւններուն սաստկութեան, որքան բնական դժուարութեանց, ճամբաներու անկանոնութեան և եղանակին խստութեան պատճառաւ: Մանուցանելով զինադադարին կնքումը, թագաւորը շնորհակալութիւն յայտնեց իր ժողովուրդին՝ հայրենիքին մեծութեան ու փառքին սիրոյն ցոյց տուած անձնագոհութեան համար, խոստանալով թէ ինչ որ ալ ըլլան հաշտութեան բանակցութիւնները, երբեք չպիտի դադրի պահանջելէ Շքօտրան, — իր «սպազայ մայրաքաղաքը», — և եթէ պէտք ըլլայ, նորէն զէնքի պիտի դիմէ զայն դրաւելու համար: Նիքոյա թագաւոր մասնաւոր շնորհակալութիւն յայտնեց նաև Մալիսորներուն, որոնք զինուորական գործողութեանց սկզբնաւորութենէն ի վեր կատարեալ անձնուիրութեամբ աշխատած էին Գարատաղցուոց ձեռնարկներուն յաջողութեան: Ապահովաբար նկարագրի շատ խոր տարբերութիւններ կային Գարատաղցուոց և անոնց միջև: Մալիսորները զուրկ էին Չանակօրայի ժողովուրդին զմայելի ասպետական ոգիէն, և կը կուռէին ծայրայեղ անողորմութեամբ մը, որ յաճախ վայրենութեան կը մօտենար: — «Չարնուրի բարեկամներ են, ըսած էր իշխան Տանիլօ թղթակցի մը, և յաճախ մեծ մտահոգութիւն կը պատճառեն ինձի. անկարգապահ են, թալանող, վայրագ, և կողոպուտի սիրոյն համար ամէն լան կ'ընեն: Շատ անգամ՝ Թուրքերուն լքած խրամներուն մէջ լեցուեցան խմբովին, առանց կարեւորութիւն ընծայելու մեր թնդանօթներուն, որոնք կը շարունակէին այդ գիրքերը ուժակոծել, և իրենց հապճէպին պատճառը ուրիշ բան չէր, այլ միայն կողոպուտի փախստականներուն թողած իրերը, զորս մէկզմէկու ձեռքէն կը յափշտակէին: Անգամ մը յարձակեցան մէկ քանի Թուրք կանոնաւոր զինուորներու վրայ, որոնք գերի բռնուած էին, և անոնց կոնակէն վերարկուները քաշեցին հանեցին: Պատմեցի զիրենք, յետոյ բանտարկել տուի, որովհետեւ մեր ցեղին բարի համբաւը կը վտանգէին: Գարատաղցիք քաջ ըլլախուն չափ

ալ պատուաւոր են և շատ նախանձախնդիր իրենց պատուին նկատմամբ» : Սակայն զոնէ քաջութեան անսակէտով՝ երկու ժողովուրդները իրարմէ նախանձելու պատճառներ չունէին : Դատի մը համար որ իրենցը չէր, Մալխօրները կուուեցան նոյնքան հերոսութեամբ որքան բուն իսկ այդ դատէն մինակնին շահելու կոչուած Գարատաղցիները, և անոնց պէս զիտցան անձերնին զո՛նել ու մեռնիլ, մեռնիլ զեղեցիօրէն : Երբ մահացու կերպով կը խոցուէին, Մալխօրները իսկոյն դազաղ մը բերել տալով մէջը կը մշտնէին հագուած, իրենց զէնքերով ու փամփշտակոյններով, առանց կենսաբաղձութեան : Ժամերնին հնչած էր, ու կը համակերպէին ճակատագրին : Երբեմն բարեկամ մը, կամ եղբայր մը կուգար անխօսուկ կը հակէր անոր գ խուռն վրայ, սպասելով որ մահը դայ և ինք՝ իր բարեկամի կամ եղբոր զերբազոյն պարտքը հատուցանէ մեռեալին աչուրները գոցելով և դազաղին կախարիչը փակելով : Յետոյ կը ձգէր կ'երթար, թողլով որ կիներն ու քահանաները հողան մնացեալը : Մալխօր կիները որոնք ահարկու ըմբիշներ են և յաճախ այրերուն հետ մրցելով կը զգեսանեն զանոնք, նոյնպէս թանկագին ռազմիկներ դարձան պատերազմին տեսողութեան միջոցին :



ԻՆՉՊԻՍ ԿՐ ՄԵՌՆԻՆ ՄԱԼԻՍՕՐՆԵՐԸ

Մահացու կերպով վերաւոր մը որ դադաղին մէջ կը սպասէ մահուան




Գ Լ Ո Ւ Խ Զ .

Գ Է Պ Ի Ա Գ Ի Ի Ա Կ Ա Ն

Շքօտրայի զիմադրութեան մէջ ապահովաբար պզտիկ դեր չէին խաղար հրամանատարներուն արժանիքն ու պահակազօրքին արի տոկունութիւնը . սակայն նոյնքան կարեւոր դեր մը կը խաղար նաև սա պարագան որ Գարատաղցիք երկար ժամանակ չկրցան իրական պաշարում մը ի գործ դնել : Բերդաքաղաքը, զինադաղարին կիքուելէն քիչ առաջ տակաւին յարաբերութեան մէջ էր Ազրիականի հետ, այդ ճամբով կը ստանար ոչ միայն առատ պաշար ու ռազմամթերք, այլ նոյն իսկ օգնական զինուորական ոյժեր : Հաւանական է նաև որ աւստրիական կառավարութիւնն ալ կ'օժանդակէր զուրսէն : Ինչպէս տեսանք, զօրավար Մարթինովիչ այդ յարաբերութիւնները խզելու համար առաջին փորձ մը ըրաւ հոկտեմբեր 17 ին, խորտակելով Բուլէյի մօտ համախմբուած թուրք զինուորական ոյժերը, որոնք բերդաքաղաքը կը պարենաւորէին : Գործը թէեւ յաջողութեամբ պսակուեցաւ, բայց արդիւնքը մնաց աննշան, որովհետև Բուլէյ թէև Շքօտրայի պարենաւորման ամէնէն մօտաւոր կայանն էր, բայց միակը չէր . կար նաև Ս . Ժան տէ Մէտուա-Պարպալուչի-Պուլաթի ճամբան, լեցուն ճախճախուտներով և մանուածապատ անցքերով, որոնց մէջ դժուար էր արթուն ու դրական հսկողութիւն մը ի գործ դնել, և ուրկէ թուրքերը կ'օգտուէին բերդաքաղաքին հետ մշտակայ յարաբերութեան մէջ մնալու համար : Միայն այս կողմէն չէր Գարատաղցեոց պաշարման տկարութիւնը . արեւելքի կողմէն ալ, Պրտիցայի և Պարտանեօլի միջեւ աւելի քան տասը քիլօմէթր երկարութեամբ շրջանակ մը պաշարման ցանցէն ազատ մնաց մինչև օգնական Սերպերու ժամանումը, և Շքօտրայի հրամանատարները միշտ զիտցան սքանչելապէս օգտուիլ այդ ազատութեան : Էն կարեւորը սակայն Ազրիականի ճամբան էր, որովհետև բոլոր

պարէնաւորիչ խումբերը անկէ կը մեկնէին՝ աղատ մնացած անցքերէն քաղաք մտնելու կամ պաշարեալներուն ձեռք տալու համար: Այս պատճառաւ, զօրավար Մարթինովիչ զարձեալ իր ուշադրութիւնը այն կողմ կեդրոնացուց:

Հոկտեմբեր 22ին՝ իր բանակին աջ թեւը ուղղեց դէպի Մէտուա և Ալէսիօ: Գարատաղցիք դժուարին ճամբաներէ յառաջանալով ժամանեցին Գուրի գիւղը, որուն շրջակաները գտնուող իրքական ոյժը զգուշացաւ կռուելէ: Բայց Պոյանա, Տրին ու Բլրի գետերը յորդած ըլլալով, յառաջ-



Ս. Ժան տէ Մէտուա

խաղացութիւնը մեծ դժուարութիւններ կը ներկայացնէր: 26ին՝ Գարատաղցիք հաստատուած էին Պարպալուչի, ու դրաւած 1000 պարկ ալիւր, որոնք Շքօտրա պիտի տարուէին: Ճակատներու գէշութիւնը սակայն արգելք եղաւ աւելի առաջ երթալու, և Գարատաղցիք, վախնալով որ իրենց նահանջի գիծը կը խզուի, ստիպուեցան լքել Պարպալուչին՝ կանոնաւոր նահանջով մը, որ սակայն դիւրաւ տեղի չունեցաւ, որովհետեւ թուրքերը մօտէն նեղեցին զիրենք նահանջի բովանդակ ճամբուն վրայ: Հաղիւ Գարատաղցիք հեռացած, թուրքերը մօտան Պարպալուչի և չուտով վերահաստատեցին իրենց յարաբերութիւնները բերդաքաղաքին հետ:

Քանի մը օր ետք, Գարատաղցիք փորձը կրկնեցին, այս անգամ աւելի յաջողութեամբ: Հարաւային բանակին աջ թեւը որ կը բաղկանար չորս վաշտերէ և երկու հրետաշարքէ, և որուն կը հրամայէր զօրավար Զուրաքովիչ, լպրծուն ու դժուարին ճամբաներէ յամբօրէն յառաջանա-

լով, նոյեմբեր 2ին հասաւ Մալկուչի, Ս. Ժան տէ Մէտուայի մօտ, և ընդհարեցաւ այնտեղ համախմբուած թրքական ոյժերուն հետ: Բուռն բայց կարճատեւ բաղխումէ մը վերջ, թուրքերը նահանջեցին, 200 վիրաւոր ու մեռեալ և երկու Գուրի արագահարուած թնդանօթ ձգելով: Գարատաղցիք ունեցան 40 մեռեալ և վիրաւոր: Զօրավար Զուրաքովիչ, յաջորդ օրն իսկ առանց ընդդիմութեան գրաւեց Ս. Ժան տէ Մէտուան, ուր խարսխած էին աւստրիական Լոյտի երկու շոգենաւեր, Բարչապաս և Շյօսրա, որոնք իսկոյն քննութեան ենթարկուեցան: Գարատաղցիք, հակառակ աւստրիական զործակալներու բողոքներուն, Մէտուայի առջեւ խարսխած աւստրիական փոխադրանաւի մը մէջ գտնուող բոլոր պարէնը գրաւեցին, առարկելով որ անոնք Շքօտրայի պաշարեալներուն յատկացուած են: Գրաւեցին նաև Մէտուայի աւստրիական նամակատան ծրարները, որոնց մէջ բաղմաթիւ նամակներ ուղղուած էին թէ՛ Շքօտրայի պաշարեալներուն, և թէ՛ բերդաքաղաքին պաշտպաններուն մէջ գտնուող աւստրիացի սպաներու: Մալխօրներու զօրախումբ մը որ յառաջապահի դեր կը կատարէր, ամէնէն առաջ մտաւ քաղաք, ուր իրքական ոյժերուն պարտութեան վրայ սպիտակ դրօշ պարզուած էր: Գաղթին անձնատուութեան պահուն, նաւահանգիստ ժամանեց Գարատաղի Բուսիա արքայական դրօսանաւը, ինչան գրաւման Շուտով Մէտուա հասաւ նաև զօրավար Մարթինովիչ, և անհրաժեշտ կարգադրութիւնները ըրաւ արշաւանքը շարունակելու համար դէպի Ալէսիօ, որ Շքօտրայի յետ յարաբերութեան մէջ գրտնուող թրքական ոյժերուն վերջին կայանն էր Տուրացօի հետ, և ուր կը դիմէր նաև Տիաքօլաչէն մեկնած Սերպ բանակը (*): Նոյեմբեր 5ին՝ Գարատաղցիք արագ ընթացքով մը մօտեցան Ալէսիօյ, ետ մղելով Մէտուայի առջև պարտուած թուրք բանակին վերջապահները: Բայց տակաւին քաղաք չմտած, 3000է աւելի օսմ. զինուորներ կատաղի հակայարձակում մը գործեցին իրենց դէմ: Արիւնալի կռիւը որ ծագեցաւ, տեւեց ամբողջ ժամեր: Օսմ. զինուորները յուսահատական արիութեամբ մը աշխատեցան կասեցնելու Գարատաղցուց յառաջխաղացութիւնը, բայց չկրցան անոնց ո՛չ նուազ արի յարձակումներուն կուրծք տալ, ու ցրուեցան խառն ի խուռն, յաղթականներուն սուլներէն խթանուած: Աւելի քան 600 թուրք զինուորներ ինկան կռուին մէջ. կռուին կատաղութիւնը կ'ապացուցուէր անով որ Գարատաղցիք միայն ութ գերի կրցան ձեռք ձգել: Իսկ այս վերջիններուն կորուստը եղաւ 6 մեռեալ և 82 վիրաւոր: Զօրավար Զիվքովիչի Սերպ զինուորները ճակատամարտէն ետքը հասան Ալէսիօյ առջև և երկու համացեղ բանակներուն միացումը ծնունդ տուաւ անկարագրելի խանդավառութեան մը: Երիտասարդներ կ'երգէին հայրենասիրական տաղեր, որոնց մէջ նաև Նիքօլա թագաւորին հետեւեալ քեր-

(* Ալէսիօ կը գտնուի Տրին ձախ եղերքին վրայ, Ալբիականին յանգող գետաբերանէն կէս ժամ հեռու, Շքօտրայի հարաւակողմը: Շքօտրայի և Ալէսիօյ հեռաւորութիւնն է՝ 36 քիլօմէթր: Իսկ Ս. Ժան տէ Մէտուա, քիչ մը աւելի հեռուի կողմը կը գտնուի, Տրին աջ եղերքէն մէկ քան քիլօմէթր անդին:

Թուածը, որ դաշնակիցներուն յաղթական գործողութեանց հետ շատ պատեն պատշաճութիւն մը կ'առնէր և իր գերագոյն աստիճանին կը հասցնէր երկու բանակները սողորող ռազմական աւելներ :

Հնչէ', հնչէ', ո՛վ սիրական զանգակ :

Դուն նշանակն ես Սերպերու հաւատքին,

Այն աստուածատուր սուրբ հաւատքին որուն համար արիւնի հեղեղներ վազած են :

Հնչէ', հնչէ', ո՛վ սիրական զանգակ :

Թող քու անուշ գանգիւններդ արձագանդեն օդին և երկինքին ընդ մէջէն :

Ողջունէ' այն հերոսները որոնց վրայ մեր դարը կը դիմելի, ողջունէ' Գարա-Նոր-կէվիչն ու Տանիւն :

Հնչէ', հնչէ', ո՛վ սիրական զանգակ :


Թող քու գանգիւններդ անոնց յայտնեն թէ քանի՛ մեծ է Խլամներու զօրութիւնը, այնքան և աւելի մեծ պիտի ըլլայ զայն խորտակող իմ ժողովուրդիս յաղթանակը :

Յաջորդ օրը, 6 Նոյեմբեր, երկու յաղթական բանակները կ'ըզ կողքի մտան Ալէսիօ, սրուն մէջ մնացած սակաւաթիւ թուրք պահակազօրքը, իշխամիներուն գերազանց ոյժերը անհերքով, անձնատուտութեան դրօշ պարզած էր : Ալէսիօ գրաւուեցաւ յանուն Նիքօլա թագաւորին, և Գարատաղեան դրօշ պարզուեցաւ բոլոր հանրային շէնքերու կատարը : Ժողովուրդը որ շատ կը նեղուէր պաշարուած քներու ներկայութեան միջոցին, զրկարաց ընդունեց դաշնակից բանակները : Սերպերը, բաւական ուժեղ զօրախումբ մը թողալին այնտեղ և շարունակեցին իրենց արշաւանքը դէպի Տուրացօ, որուն գրաւման համար ճակատայ կրած էին արդէն : Շուտով մեկնեցաւ նաև զօրավար Մարթինօվիչ, իր բոլոր զինուորներով, Շքօտրայի պաշարման օժանդակելու համար : Գարատաղցոց մեկնելէն վերջ՝ Ալէսիօ մնայած սերպիական զօրախումբին մէկ մասը գրաւեց նաև Ս. Ժան ալ Մէտուան : Վերջէն, իր ապահովութեան համար, այս զօրախումբը տարածուեցաւ Տրինի աջ եզերքէն անդին, և իր կարեւորագոյն մասը, ազրիականի երկու նաւահանգիստներուն հետ հաղորդակցութեան գիծ մը պահելով հանդերձ, հաստատուեցաւ Պարպալուչիի ու Պուզաթիի միջև, և անկէ օժանդակեց Շքօտրայի պաշարման :

Գարատաղցոց վայրէջքը դէպի Ադրիական, և Ս. Ժան տէ Մէտուայի ու Ալէսիոյ գրաւումը բնականաբար կը խանգարէին Աւստրիոյ դիտումները Սլաւոնիոյ մասին : Տակաւին ո՛չ Լոնտօնի Դեսպանախորհուրդը, ոչ ալ պատերազմիկ երկիրներու պատգամաւորները գումարուած էին, և անյայտ կը մնար թէ իրօք ի՞նչ կը պահանջէ Աւստրիա, որ պաշտօնապէս յայտարարած էր թէ Արեւելքի մէջ առաջ եկած իրերու շրջափոխութեան հանդէպ չի կրնար անշահախնդիր մնալ, մինչդեռ միւս տէրութիւնները տրամադիր էին տաղնապը լուծելու աշխատիլ, առանց իրենց համար բաժին մը պահանջելու : Որքան ալ Աւստրիոյ դիւանագէտները լուռ մնային իրենց պահանջմանց մասին, տարակոյս չկար թէ առաւելապէս Ադրիական

նի տիրապետութեան հարցն էր որ ամէնէն աւելի մտահոգութիւն կը պատճառէր իրենց, և զոր ապահովելու համար պիտի ստեղծէին Ալպանական իշխանապետութիւն մը Աւստրիոյ հովանաւորութեան տակ : Մենք այս հարցին պիտի վերադառնանք Ալպանիոյ անկախութեան պարագաները պարզած ատեննիս, այստեղ կը բաւականանանք լոկ անոր անդրանիկ նախանշանները արձանագրելով :

Հոկտեմբեր 30ին՝ երբ տակաւին ոչ Մէտուա գրաւուած էր, ոչ սլ Ալէսիօ, Չէթինեէի աւստրիական դեսպանը իր կառավարութեան անունով պաշտօնապէս յայտնեց Նիքօլա թագաւորին թէ Աւստրիա մտադրած ըլլալով պահպանելու Ալպանիոյ ահողջութիւնը, բացարձակ կերպով կը հակառակի Մէտուայի և Ալէսիոյ գէժ կատարուելիք գործողութեանց :



Օսմ. արագահարուած թնդանօթ մը Շքօտրայի մէջ

Դիտենք արդէն թէ որքան ատեն որ Ալէսիօ և Մէտուա ազատ մնային, Շքօտրա կը յաջողէր պարէնաւորուել Ադրիականի ճամբով, աւստրիական շոգենաւերու միջոցաւ, և թէ Շքօտրայի պաշարման յաջողութեան համար Գարատաղցիք անհրաժեշտաբար ստիպուած էին գրաւել այդ երկու քաղաքները : Այս պատճառաւ, Նիքօլա թագաւոր, հիմնուելով մանաւանդ չէզոքութեան կանոններուն վրայ՝ որոնց համաձայն Աւստրիոյ միջամտութիւնը բոլորովին ապօրինի կը դառնար, ծանոյց աւստրիական դեսպանին թէ չեղեալ կը նկատէ իրեն եղած զեկոյցը, ինչ որ կը նշանակէր թէ չպիտի դադրեցնէ վեքօի տակ առնուած երկու քաղաքներուն դէմ կատարուող զինուորական արշաւանքը : Յաջորդ օրը, համանման դիմում մըն ալ ըրաւ Չէթինեէի իտալական դեսպանը, յայտնելով որ Աւստրիա և Իտալիա, իբր անմիջական շահակիցներ Ադրիականի մէջ, պատերազմի յայտարարութենէն առաջ համաձայնած են անվթար պահպանել Ալպանիոյ անբողջութիւնը, որուն անբաժան մաս կը կազմեն Մէտուա և Ալէսիօ : Իտալական դեսպանը փափկութեամբ զգացուց նոյն ատեն թէ Ալպանիոյ


սրաքոս ֆուօին պահպանութիւնը օգտակար է նոյն ինքն Գարատաղի, որովհետեւ եթէ սրաքոս ֆուօն չըլտի, անխուսափելի կերպով կրնան առաջ գալ այն այդ տեսակ կնճռոտութիւններ, որոնցմէ մեծագոյն վնասուողը նոյն ինքն Գարատաղը պիտի ըլլայ: Նիքոլա թագաւոր սալայն լուծ թաց առարկել թէ պատերազմն առաջին արդիւնքներուն վրայ, մեծ տէրու-



Նիքոլա թագաւոր կը ծանուցանէ զօրավարներուն թէ այլևս ինք չը ստանձնէ գործօն ընդհանուր հրամանատարութիւնը

թիւնները ինքնարեւարար յայտարարեցին որ սրաքոս ֆուօն այլևս մեռած է Արեւելքի մէջ. հետեւաբար՝ Իտալիա ալ կրնայ չեղեալ նկատել պատերազմէն առաջ Ալպանիոյ մասին Աւստրիոյ հետ կնքած համաձայնութիւնը: Նոյեմբեր Յին, մինչդեռ Հարաւային բանակին ալ թեւը Ս. Ժան տէ Մէտուա կը մտնէր, վերոյիշեալ երկու ղեկավանները նոր դիմումներ կատա-

րեցին Նիքոլա թագաւորին մօտ, որ դարձեալ յայտարարեց թէ Մէտուա և Ալէսիօ պէտք է Գարատաղի մնան, և թէ այդ պայմանով միայն պիտի հաւանի Ալպանիոյ անկախութեան մասին Աւստրիոյ կամ տէրութեանց կողմէ ըլլալիք ամէն կարգադրութեան: Շքօտրայի խօսքը չկար տակաւին,



Փոքրամէջ ճեղքաւորները զինուորի մէջ

և Նիքոլա թագաւոր չէր ուզեր անոր սեփականութեան պարագան ալ խնդիր ընել, թէև շատ լաւ գիտէր որ Աւստրիոյ վերօն լոկ Մէտուան ու Ալէսիօն կորզելու չի միտիր, այլ կ'ուզէ Ալպանիոյ ամբողջութեան մէջ պարփակել նաև Շքօտրան: Վերջէն, Աւստրիա դիմակը բոլորովին պիտի

նետեր, և ուղղակի վեքօի պիտի ենթարկէր նաև Շքօտրայի տիրապետութիւնը, նախ պահանջելով որ Գարատաղցիք ու Սերպերը վերցնեն պաշարումը, յետոյ՝ քաղքին անկումէն վերջ՝ բռնադատելով Նիքօյա թագաւորը որ անպատճառ պարպէ զայն, և ասիկա հակառակ հաղարաւոր զոհերուն որոնք ինկած էին պաշարման ընթացքին:

Երբ սկսան հաշտութեան բանակցութիւնները, չորս դաշնակիցներէն ամէնէն աւելի մտահոգը Գարատաղն էր: Իր մղած կոիւններուն մէկ հատիկ նպատակակէտը, Շքօտրան, չէր ինկած տակաւին, ոչ իսկ մարած էր պահակազօրքին զիմադրութեան ուժգնութիւնը. միւս կողմէ, վախ կար որ տէրութեանց շահերուն հակամարտութիւնը, և միջազգային տագնապէ մը խուսափելու անտեղիտալի անհրաժեշտութիւնը Գարատաղի ակնկալութեանց շրջանակէն անջատեն բաղաքը: Այս պատճառաւ, Լոնտոնի մէջ կատարուելիք հաշտութեան բանակցութեանց մասնակցող Գարատաղցի պատուիրակները (*), հրահանգ ստացան թագաւորէն ոչ մէկ գնով տեղի տալու Շքօտրայի մասին: Յունուար 5ին՝ Լոնտոնի դեսպանախորհուրդին մատուցին յիշատակագիր մը, որուն մէջ պատմական, անտեսական ու աշխարհագրական ցուցմունքներով կ'ապացուցանէին թէ Շքօտրա աւելի Սերպիական, քան Ալպանական յաւակնութեանց սահմանին մէջ կ'իյնայ, և թէ անոր տիրացումը անհրաժեշտ է Գարատաղի ազատ ու ապահով բարգաւաճման համար: Շքօտրան և իր շրջանակը, ստորին Զէթան, միշտ Սերպիական հող եղած էին. Գօսօվայի ճակատամարտին՝ Շքօտրայի և Զէթայի Սերպերը, միւս բոլոր Սերպերուն հետ կը կուռէին Թուրքին դէմ: Աւելի ետքը՝ իսլամական յարձակմանց պատճառաւ, Վենետիկցիներուն լուծը նախընտրեցին թրքօ-ալպանական լուծէն: Սուլթաններու բանակները երեք անգամ պարտուեցան Շքօտրայի Սերպ ժողովուրդէն զոր Վենետիկ կը զինէր ու կը վարէր: Թուրքերը լոկ բանակցութեանց չնորհիւ կրցան տիրանալ քաղքին: Բայց նոյն իսկ Թուրքական տիրապետութենէն վերջ, Սուլթանները ամբողջ Շքօտրայի դաշտին վարչութիւնը յանձնեցին Գարատաղի վեհապետին երկու զաւակներուն՝ Իվան Զէրնօիէ-վիչի և Սթանիքա Զէրնօիէ-վիչի, որոնցմէ վերջինը, նոյն շրջանակին ինքնավարութիւնը պահպանելու համար, մահմէտականութիւնը ընդունեց: Յետոյ՝ Շքօտրա և Զէթա միւս Սերպ երկիրներու բախտին ենթարկուեցան. Ալպանական հորթաներ տիրեցին անոնց, կողոպտեցին և բնիկները վանեցին բռնութեամբ. հակառակ սակայն այդ բռնադժբաւման, ինքնավար Սերպ ժողովուրդը չանհետացաւ Շքօտրայէն, և երբ զարհուրելի Պուքաթի շարդեց ալպանացի անդրանիկ աշխարհակալները, շուտով Սերպերը բազմացան այնտեղ: Շքօտրա միշտ սերպիական թաղ մը ունեցած է Սերպ եկեղեցիով և դպրոցներով: Շքօտրայի լիճին մէջ՝ սերպ ձկնորսներու կայք մը կը գտնուի, և

(*) Պատուիրակութեան պետն էր նախկին նախարարապետ և նախկին արտաքին գործոց նախարար Պ. Լազար Միուշքօվիչ, նախկին արդարութեան նախարար և թագաւորին գաղտնի դիւանին պետ Պ. Լուրի Վոյնօվիչ և Կ. Պոլսոյ նախկին Գարատաղեան գործակատար Պ. Եուվան Բօբօվիչ:

արուարձանին մէջ ալ կան Սերպիական գիւղեր: Արդէն բազմաթիւ խլամ ու կաթոլիկ Ալպանացիներ լոկ սերպերէն կը խօսին: Քաղքին արուարձանին մէջ՝ բոլոր գիւղերը սերպիական անուններ կը կրեն, ինչպէս Ռասթիշթէ (=Գալարիք), Քրավարի (=Անդէորդներ), Օպլիքա (=Ագարակ), Օպօտ (=Նրեզերք) Կօրիցա (=Անտառ), Պրտիցա (=Բլրակ), Բիէքա (=Գետ): Շքօտրայի ամրոցներուն տակ ալ՝ Սթարի, Պօրիչ, Կրիճ, Թու-



Գարատաղեան կեդրոնի և Հարաւային բանակներու գործողութիւնները.

րալիա, Օմարա, Քուլա, Ռօշ և ուրիշ գիւղեր ու աւաններ մինչեւ այսօր ունին սերպ օրթոտօք ժողովուրդ. ուրիշ երկու գիւղերու՝ Կօլէմիի և Տօպրիչի ժողովուրդը թէև իսլամացուած է, բայց միայն սերպերէն կը խօսի:

Պատուիրակութեան պետը, Պ. Լազար Միուշքօվիչ որ տասը տարի շարունակաբար Շքօտրայի հիւպատոս եղած է, քաղքին բնակչութեան մեծ մասամբ իսլամ ալպանացիներէ կազմուած ըլլալը պատճառ մը չէր նկատեր

Շքօտրան Գարատաղէն կորզելու: Նախ որ՝ այդ խորամ բնակչութիւնը
բռնի կրօնափոխութեան հարկադրուած Սերպերու սերունդն էր. յետոյ՝
Գարատաղի թոյլատու օրէնքները Ալպանացւոց աւելի ազատութիւն կըր-
նային չնորհել, քան նոյն ինքն թրքական օրէնքները, որոնցմէ արդէն
դժգոհ էին Ալպանացիք, դժգոհ այնքան որ մինչև անգամ ստիպուած
էին ապստամբութեան դիմել, երբ տակաւին Պալքանեան պատերազմի մը
հաւանականութիւնն իսկ գոյութիւն չունէր: Գալով այն առարկութեան
թէ Գարատաղցիք տակաւին Շքօտրան առած չըլլալով, Իրաւունք չունին
անոր տէր մնալու, Պ. Միուշքովիչ կատարեալ վստահութեամբ կը պա-
տասխանէր թէ բերդաքաղաքը դուրսի հետ ամէն յորարկումնէ զըր-
կուած և խստագոյն սրշարման մը ենթարկուած ըլլալով, անխուսափելի
կերպով պիտի իյնայ:

Շատ ուշ, բայց շատ ալ վճռական բոպէի մը մէջ միայն պիտի
պահուէր Գարատաղցի ղեւանագէտին այս վստահութիւնը:



Յուզարկաւորութիւն մը



ԳԱՐԱՏԱՂԻ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ

(ԶԻՆԱԴԱԴԱՐԷՆ ՄԻՆՉԵՒ ՇՐՏՐԱՅԻ ԱՆԳՈՒՄԸ)

Գ Լ Ո Ւ Խ Է.


Մ Ի Շ Տ Շ Ր Տ Ր Ա Յ Ի Ա Ռ Ջ Ե Ի

Յողնած ու ջախջախուած Գարատաղը չկրցաւ Նոյեմբեր 20ի զինա-
գաղարէն օգտուիլ և իր միասնները դարմանել, որովհետեւ պաշարուած
բերդաքաղաքին պաշտպանները մերժեցին զինադադարը ճանչնալ, առաք-
կելով որ Բ. Գրան կողմէ ուղղակի կերպով իրենց չէ հաղորդուած: Հա-
սան Բիզա փաշա ոչ իսկ ընդունեց Գարատաղեան բանակին կողմէ զինա-
դադարը իրեն ծանուցանելու համար զրկուած պատգամաւորը, տեղակալ
ձօրձէվիչը, և իր սպայակոյտի պետին միջոցաւ անոր ծանոյց թէ օտար
կառավարութեան մը կողմէ եղած զինադադարի ղեկոյցը պաշտօնական
չի նկատեր, և թէ չպիտի դադրեցնէ զինուորական գործողութիւնները:
Հազիւ պատգամաւորը մեկնած, Բիզա փաշա գործադրեց իր խօսքը: Թա-
րապօչի բարձունքէն դարձուելի թնդանօթաձգութիւն մը սկսաւ Գարա-
տաղեան զիրքերուն վրայ. միեւնոյն ժամանակ, օսմ. հետեւակազօրքը,
միանգամայն մէկ քանի կէտերէ յարձակման ձեռնարկեց: Գարատաղցիք,
զինադադարի պայմանները յարգելու համար նախ չպատասխանեցին
Թուրքերու կրակին, բայց տեսնելով որ անոնք կը սպառնան Օպլիքայի
ու Շիրօքայի, ստիպուեցան կրակել իրենց կարգին: Թուրքերը յամառ
դիմադրութենէ մը վերջ միայն քաշուեցան իրենց զիրքերը, բաւական
ճանր կորուստ կրելով: Նոյեմբեր 27ին և 28ին, Թարապօչի ու Պրախցա-
յի թնդանօթներուն պաշտպանութեամբ Թուրքերը դարձեալ խոյացան
Շիրօքայի և Օպլիքայի զիրքերուն վրայ, բայց իրենց այս փորձն ալ ան-

ցաւ անյաջող: Դեկտեմբեր 5ին թրքական ջոկատ մը նոր յարձակում մը ըրաւ հարաւի կողմէն, և մօտաւորապէս 10 քիլօմէթր յառաջանալով, անցաւ Տլին գետը, ետ մղեց սերպիական տկար ոյժեր որոնք այն կողմէ ու հակողութեան յատկացուած էին, թալանեց Տրինի եղերքը զըտնուող Սթաժքա, Բուլդի, Հայմէլի և Բիսթուլի կաթոլիկ գիւղերը, և ասանցմէ Բիսթուլին բոլորովին հրկիզեց: Սերպերը սակայն օգնական զօրք ստացան Ալէսիօէն, ու դեկտեմբեր 9ին յաջողեցան ետ մղել Թուրքերը, որոնք կատաղութեամբ կռուելէ ետք միայն Տրինի միւս ափը անցնելով վերադարձան իրենց զիրքերը: Սերպերուն կորուստը եղաւ 6 սպայ և 200 զինուոր մեռեալ կամ վիրաւոր:

Մինչև դեկտեմբեր 24՝ Թուրքերը շարունակեցին իրենց յարձակումները, միշտ դանազան կէտերէ, առանց զրաւուած զիրքերէն ո՛ր և է մէկը ետ առնել կարենալու: Այդ թուականին, Գարատաղցիք ստիպուեցան նորէն պատգամաւոր զրկել Շքօտրա, ծանուցանելու համար թէ զինադադար կնքուած է, բայց գարատաղցի պատգամաւորներուն ընդունելութեան յատկացուած թուրք պատգամաւորներու պետը, Թալադ պէյ, յայտնեց թէ իրենք Բ. Գրան կողմէ ու է տեղեկութիւն ստացած չեն զինադադար կնքուած ըլլալու մասին, և հրաւիրեց Գարատաղցիները որ փութով հեռանան քաղաքէն: Դեկտեմբեր 28ին Թուրքերը դարձեալ յարձակեցան Օպլիքայի վրայ, և ամբողջ օրը տեւող բուռն ընդհարումէ մը վերջ որ շատ սուղ արժեց իրենց, ետ քաշուեցան: Նոյնպէս ապարդիւն անցաւ յունուար 15ին կատարուած յարձակում մը Թարապօջը պաշարող Գարատաղցիներու յառաջապահներուն դէմ: Յաջորդ օրը, 16 յունուար, Լոնտոնի մէջ կը խզուէին հաշտութեան բանակցութիւնները Պալքանեան Պետութեանց և Թուրքիոյ պատուիրակներուն միջեւ, ու զինադադարի Բրօթօքօլին համաձայն, չորս օր ետքը, յունուար 20ին, թշնամութիւնները կը վերսկսէին: Գարատաղցիք, զինադադարին բարձման վրայ, ընդհանուր յարձակում մը սկսան ծրագրել Սերպերուն հետ: Յունուար 23ին, մինչդեռ Գարատաղցիք այդ յարձակման պատրաստութիւններով զբաղած էին, Շքօտրայի հրամանատարին կողմէ պատգամաւորներ ներկայացան Գարատաղցի բանակետը, իրենց հետ բերելով նամակ մը՝ որուն մէջ էստատ փաշա կ'ըսէր թէ զինադադար մը կնքուած ըլլալը իմացած ըլլալով, կը խնդրէ Գարատաղցի բանակներուն ընդհ. հրամանատարէն որ այդ մասին բանակցելու համար պատգամաւորներ զրկէ քաղաք: Այս վերջինները, Թուրք պատգամաւորներու հետ խորհրդակցելով, երկու բանակներուն համար չէզոք՝ գօտի մը պիտի հաստատէին և պիտի որոշէին զինադադարի պայմանները: Գարատաղցիք քաղաք զրկեցին հազարապետ Ուրպիցան և պատերազմի յայտարարութեան միջոցին Գարատաղցի Պոլսոյ գործակատարը եղող Պ. Բլամէնացը, որոնք պաշտօն ունէին յայտնելու թէ զինադադարը վերջացած և թշնամութիւնները վերսկսած ըլլալով, երկու կողմին համար ալ այլ ևս աւելորդ է պատգամաւորներու գումարումը: Գարատաղցուց պատգամաւորները Շքօտրայի մէջ ընդունուեցան լոկ էստատ փաշայի կողմէ, որ անոնց ծանոյց թէ Հասան Բիզա

փաշա հիւանդ է, մինչդեռ քաղաքին մէջ չըջող զրոյց մը որուն արձագանգը մինչև Գարատաղցուց հասած էր, կը հաւատէր թէ Հասան Բիզա փաշա սպաննուած էր այդ թուականին (*):



Նիքօլաթաղաւոր 2էթինեէի հիւանդանոցին մէջ


էստատ փաշայի կողմէ կատարուած այս զիմումը Գարատաղցիներուն համար փաստ մը դարձաւ թէ բերդաքաղաքին պաշտպանութեան միջոց-

(*) Հասան Բիզա փաշայի մահուան մասին շքնող զրոյցը սա էր թէ յունուար 17ի երեկունը, ժամը 9ին, երբ միմակը դուրս կ'ելէր էստատ փաշայի բնակարանէն, երեք անձանօթ անձեր զէնք պարպեցին իր վրայ: Բիզա փաշա վերաւորուեցաւ միանգամայն երկու զնդակէ, և եօթը ժամուան հողեկարքէ մը վերջ մեռաւ: Մեռնելէ առաջ պաղատադին խնդրեց էստատ փաշայէ և միւս սպաներէն որ Շքօտրան չյանձնեն և կռուին մինչև իրենց արիւնին վերջին կաթիլը: Լուր կար նաև թէ Հասան Բիզա փաշայի հետ սպաննուած է նաև անոր զէնքի ընկերը, հրամանատար Մահմուտ Գեամիլ պէյ, որ Թարապօջի պաշտպանութեան հօգին էր:

ները տկարացած են, և զրգիւ մը եղաւ իրենց որպէս զի աւելի ոգեւորութեամբ առաջ տանին ընդհանուր յարձակման պատրաստութիւնները: Թագաւորը տկար էր այդ միջոցին, բայց չէր դադարեր բանակներուն զործողութեանց վրայ հսկելէ: Կատարուելիք յարձակման վրայ ինք ալ մեծ հաւատք ունէր, և ապահովաբար Հասան Րիզա փաշայի մահուան լուրը բոլորովին վստահ դարձուցած էր զինքը այդ մասին: Յունուար 23ի այդ օրը Գարատաղցիք ու Սերպերը տենդաղին զործուելութեամբ մը լրացուցին: Կիներն ու պզտիկ տղաքը նոյնպէս աջակցեցան իրենց աշխատութեան, ռազմամթերքի, պարէնի և ուրիշ անհրաժեշտ իրերու փոխադրութեամբ: Մեծ խանդավառութիւն կար բոլոր բանակներուն մէջ և վստահութիւն յարձակման յաջողութեան մասին:

Յաջորդ օրը, 24 Յունուար, գնդապետ Բօրօլիչի հրամանատարութեան տակ գտնուող 15,000 Սերպեր Պուզաթիէն առաջ խաղալով, յաջողեցան հարաւակողմէն Շքօտրայի մօտեկայ մինչև Խօթը մղոն և զրաւել այդ կէտին վրայ գտնուող զիրքը, որ Պուզաթիի ահրացեալ զիծին վերջին կայանն է: Հետեւեալ օրը, գնդապետ Բօրօլիչ իր զօրքերը մղեց Պրաիցայի դէմ, մինչդեռ զօրավար Մարթինօվիչ այդ զիրքը, ինչպէս նաև անոր իշխող Թարապօշը բուռն կերպով կը ուժակոծէր, զաշնակիցներուն գործողութիւնը զիւրացնելու համար: Միևնոյն ժամանակ, Քիլիի արևելեան կողմը համախմբուած 30,000 Գարատաղցիք, զօրավար Վուքօթիչի հրամանատարութեամբ, հիւսիսի կողմէն յարձակեցան Մեծ-Պարտանեօլիի դէմ, որպէս զի այն կողմը գտնուող Թուրք զինուորները զբողեցնեն: Հակառակ Գարատաղեան հրետանիին արձակած ուռմերուն, Թուրքերը ահաւոր զրոհով մը խոյացան Գարատաղցուց խրամներուն վրայ, և իրենց յարձակումը այնքան արագ, այնքան մանաւանդ անտիկալ կերպով տեղի ունեցաւ որ Գարատաղցիք պահ մը սկսան ընկրկել, թէև շուտով վերագտան իրենց պազարիսութիւնը և յաջողեցան կասեցնել թրքական արշաւը: Այդ միջոցին, զօրավար Վուքօթիչ իր բանակին մէկ մասին հրաման տուաւ որ յարձակի Մեծ-Պարտանեօլիի բարձունքը, ինչ որ շատ դժուարին գործ մըն էր: Գարատաղցիք ստիպուած էին մագլցելով բարձրանալ դժուարամերձ սարէն, և ասիկա՝ անդադրում հրացանածգութեան մը ու ուռմերու տարափի մը տակ: Թուրքերը լաւ պաշտպանուած էին խրամներով, հողէ պահպանակներով և աւաղի պարկերով: Այդ պաշտպանութեանց զիծէն անդին պէտք կար տակաւին կտրելու երկաթեայ փշապատ թելերու երրեակ ցանց մը: Գարատաղցիք, աստիճանաբար բարձրանալով սարին կողերն ի վեր, զիրքը յարձակմամբ առնելու չափ մօտեցան Թուրքերուն: Գերագոյն բաղխումը տեղի ունեցաւ վերջապէս և երկու կողմն ալ կռուեցաւ անհնարին զիւցազնութեամբ: Նախ Գարատաղցիք ետ մղուեցան, բայց անմիջապէս կրկնեցին յարձակումը և հաջողեցան Թուրքերը վանել իրենց զիրքերէն: Այս վերջինները, նոր հակա-յարձակմամբ մը իրենց կարգին Գարատաղցիները վանեցին և վերագրաւեցին սարը: Յետոյ դարձեալ Գարատաղցիք տիրացան անոր, քիչ վերջը նորէն Թուրքերուն ձեռքը ձգելու համար: Երկու օր և մէկ զիչեր տեւող

ձակատամարտին ընթացքին, զրեթէ տասն անգամ Թուրքերն ու Գարատաղցիք առին ու տուին այդ զիրքը. արիւնալի մաքառումներով, որոնց




Իրաւի ծոխէն վերջ գրաւուած թրքական պաշտպանաց մը

մէջ սուինը մեծագոյն դերը կը խաղար, և որոնք երկու կողմին ալ մեծ կորուստ պատճառեցին: Ի վերջոյ, Թուրքերը, բոլորովին ուժասպառ ինչպէս Գարատաղցիք, սարին արեւմտեան կողմէն նահանջելով քաշուե-

ցան և դիրք բանեցին Քիրի դետին երկայնքը: Մինչդեռ Շքօրայի հիւսիսային կողմը այս փոխադարձ յարձակումները տեղի կ'ունենային, զօրավար Մարթինովիչ ալ համանման գործողութեան մը կը ձեռնարկէր ուղղակի թարապօչի դէմ: Յունուար 25ին, ցերեկէն վերջ, սկսաւ պատրաստուիլ մեծ յարձակման մը, որ յաջորդ օրը տեղի պիտի ունենար: Ատոր համար սակայն անհրաժեշտ էր խորտակել երկաթեայ փշապատ թելերու ցանցերը զորս թուրքերը հաստատած էին իրենց պաշտպանութեան խրամներուն առջև: Զօրավար Մարթինովիչ՝ այդ թելերը խորտակելու վտանգաւոր գործին համար կամաւորներու կոչ ուղղեց. իսկոյն 100 հոգի ներկայացան: Զօրավարը անոնցմէ խրաքանչիւրին յանձնեց ուժանակով լեցուն մետաղեայ տփածակ պոմպաներ, որոնք որոշեալ ժամանակէ մը ետքը կրակ կ'առնէին պատրոյգով. կամաւորները, — աւելի ճիշդ կ'ըլլայ ըսել՝ անձնազոհները, — կասարեալ պողարիւնութեամբ յառաջացան մինչև թելերու ցանցը և կրցան զետեղել պոմպաները, որոնք թելերու մեծագոյն մասը օղը հանեցին: Գործողութեան ընթացքին կամաւորներէն 20ը ինկան թուրքերուն գնդակներէն: Նոյն գիշերը՝ երկուստեք հրացանաձգութիւնն ու ումբակոծութիւնը շարունակուեցաւ: Յաջորդ առտուն, զօրավար Մարթինովիչ ձեռնարկեց թարապօչի դէմ յարձակման, այն յոյսով որ Սերպերն ալ յաջողելու վրայ են Պրատիցայի առջև: Իր բանակին մէկ մասը՝ Զօհայիի ճամբով յառաջացաւ լիճին եզերքէն, մինչդեռ միւս մասը Շիրօքայի ճամբով՝ կը խոյանար թարապօչի կողերն ի վեր: Շիրօքայի (Շիրօքքա-Կօրա) և Սալիքայի վրայ հաստատուած հրետանին կը պաշտպանէր այդ կրկին գործողութիւնները: Թուրքերը, այս կրկին յարձակման առջև տկարանալով ետ քաշուեցան, լքելով թարապօչի պաշտպանութեան դիրքերէն կարեւոր մաս մը, զոր դարատաղեան վաշտ մը և անոր հետեւող օգնական երկու վաշտեր գրաւեցին իսկոյն, թէև չկրցան դանոնք պահել, որովհետև Պրատիցա ինկած չըլլալով, թուրքերը յաջողեցան Գարատաղցոց վրայ տեղացնել գնդաձիւրի ուումբերու ճշմարիտ կարկուտ մը որ ահագին կորուստ պատճառեց անոնց: Գարատաղցիք՝ յունուար 26ի գիշերն ու յաջորդ օրուան մէկ մասը յամառեցան կեցան իրենց գրաւած դիրքերուն վրայ, անյոյս դիւցազնութեամբ մը պատասխանելով թուրքերու կրակին, բայց վերջ ի վերջոյ, իրենց կորուստին մեծութենէն ահաբեկ, լքեցին այնքան ծանր զոհողութեամբ ձեռք բերուած դիրքերը և հեռացան: Սերպերը նոյնպէս ձախողութեան մատնուած էին Պրատիցայի առջև, որուն պաշտպանութեան միջոցներուն նկատմամբ բնաւ տեղեկութիւն չունէին արդէն, ոչ ալ հաշիւի առած էին թրքական թնդանօթներու հեռարձակութիւնը: Իրակին ստորոտը՝ իրար խաչաձեւող ջրանցքները զորս թուրքերը շինած էին իբր պաշտպանութեան գիծ, կամ գիւղացիները շիներ էին աւելորդ ջուրերը գէպի լիճ հոսեցնելու համար, անկարելի դարձուցին գիշերային յանկարծակի յարձակումներ: Յերեկ առեն կատարուած յարձակումներն ալ արդիւնք մը չտուին, որովհետև Սերպերը լոկ լուսային թեթև թնդանօթներ առած էին իրենց հետ, մինչդեռ թուրքերը՝ աւելի հեռարձակ թնդանօթներ ունենալով, յաջողեցան անոնց արշաւը խորտա-

կել և տէր մնալ իրենց դիրքերուն: Այս եռօրեայ ճակատամարտին մէջ՝ թուրքերուն կողմէ կուուեցան մօտաւորապէս 25,000 հոգի. Գարատաղ-



1. Կիտաւորներու փոխադրութիւն: 2. Կիտաւորներ որոնք կը պատրաստուին պատերազմի դաշտը մեկնելու:

ցիք աւելի քան 40,000 հոգի էին զօրավար Մարթինովիչի և Վուքօթիչի

բանակներուն մէջ, իսկ Սերպերը՝ 15,000: Երկու կողմին ալ կորուստը շատ մեծ եղաւ՝ բաղդատմամբ մանաւանդ մինչև այն ատեն մղուած կռիւներուն: Զօրավար Վուքոթիլի բանակը ունեցաւ 2,500 մեռեալ և վիրաւոր: Վիրաւորներուն մէջ կը գտնուէր նաև Գարատաղի Թագուհին եղբայրը՝ Թագուհին եղբորորդիներէն երկուքը, ինչպէս նաև 126 սպաներ ալ մեռեալներուն մէջ կը գտնուէին: Զօրավար Մարթինովիչի համեմատապէս սակաւաթիւ բանակէն մեռան կամ վիրաւորուեցան 1000 հոգի, և Սերպերէն ալ աւելի քան 600 հոգի: Թուրքերուն կորուստը եղաւ 4000 մեռեալ և վիրաւոր: Զեռք անցուեցան շատ սակաւաթիւ թուրք գերիներ միայն, որոնք յայտարարեցին թէ Շքօտրայի մէջ տակաւին առատ պաշար և սղմամթերք կը գտնուի:

Գարատաղիք չվարանեցան Լիւլէ Պուրկազի Պուլկարական յաղթանակին հետ բաղդատելու այս եռօրեայ ճակատամարտը, որու միջոցին լոկ Մեծ-Պարտանեօլին կրցած էին ձեռք անցընել: Կը յուսային սակայն որ այդ զիրքին հնորհիւ կը յաջողին ձգել Շքօտրան, երբ պաշարման թընդանօթները ան ր բարձունքը հաստատուէին: Բայց ինչ որ ալ ըլլար յաղթանակին նշանակութիւնը, Գարատաղիք չէին կրնար ուրանալ որ չտիրազանց սուղի նստած էր իրենց: Զէթինեէ կատարեալ հիւանդանոցի մը վերածուած էր. մօտաւորապէս 2000 վիրաւոր կը գտնուէր այդ քաղքին մէջ, որուն ընդհանուր ժողովուրդին թիւը 5000ը չէր անցներ խաղաղութեան ժամանակ: Բոլոր հանրային շէնքերը, և անոնց հետ ալ շատ մը մասնաւորներու բնակարաններ հիւանդանոցի վերածուած էին: Ամէն Գարատաղիի տուն իր մեռելու կամ վիրաւորը ունէր, որովհետեւ բոլոր այրերը, ինչ որ ալ ըլլար իրենց տարիքը, պատերազմի դաշտը կը գտնուէին. և անոնց մէջ ալ 9—10ը մեռած կամ վիրաւորուած էր: Կարմիր Սաչի մարմինները չէին կրնար հասնիլ վիրաւորներուն: Արքունիքի տիկիները, օտար ղեսպաններու կիները, կարելին կ'ընէին անոնց աջակցելու համար:

Գարատաղիք ուժրակոծութիւնը վերսկսան փետրուար 1ին, և շարունակեցին մինչև 14, առանց սակայն նշանակելի արդիւնք մը ձեռք բերելու: Բերդաքաղաքն ու Թարապօշ որոնց վրայ ահագին քանակութեամբ ձիւն իջած էր, շատ տկար կել պով կը պատասխանէին պաշարողներու ուղեմերուն: Քաղքին կացութեան վրայ այդ միջոցին կարելի եղաւ լուր ստանալ Բօրիէրա սէլլա Սերայի թղթակցէն, որ յաջողեցաւ իր թերթին հասցնել հետաքրքրական նամակ մը: Այդ նամակէն կը քաղենք հետեւեալ մասերը. — «Լաճառքները տակաւ կը պակսին խանութներու մէջ, և եթէ կարելի ըլլայ՝ անոնց տեղ նորեր կը դրուին: Շաքարին տեղ բիսմէկ կը գործածուի, իսկ թրքական դասական խահուէն կատարելապէս անհետ եղած է. կարագի տեղ կը գործածուին ճարպ և կամ իւղի նմանող ուրիշ նիւթեր: Իբր բանջարեղէն՝ միայն կաղամբ և կարգ մը խոտեր կան, որոնք սալաքա կը կոչուին, ինչպէս նաև շոմին (սպանախ): Գետնախնձոր չկայ, և հրամանատարը ամէնէն աւելի ասկէ կը նեղուի...: Հասան Րիզա վաչա որ իր զինուորական ուսումը Գերմանիոյ մէջ առած



Պիզգանտոթոթի վիրայի սահմանատակ

է (*), այնտեղ վարժուած է գեանախնձորին և անոր չգոյութենէն յաճախ
 կը գանգատի իր խոհարարին: Այս վերջինը շատ անգամ ամբողջ քաղա-
 քը կը շրջի միակ գեանախնձոր մը գտնելու յոյսով ու չի յաջողիր»: Նոյն
 թղթակցին մէկ ուրիշ նամակը որ Յունուար 26 թուականը (Ն. Տ.) կը
 կրէ, կը ծանուցանէր. «Մէկ քանի շարաթէ ի վեր չենք գիտեր թէ ի՞նչ
 կ'անցնի կը դառնայ աշխարհի մէջ: Յաճախ լուր մը կուզայ, բայց վա-
 ւերականութեանը մասին վստահութիւն չկայ. արդէն այդ լուրն ալ մէկ
 ամսուան չափ հին կ'ըլլայ միշտ: Այսօր կ'իմանամ թէ Յունուար 3 թուա-
 կիր լրագիր մը մտեր է Շքօտրա, խտայական թերթի մը կէսը, երկու էջ:
 Գլխաւոր լուրը այն է եղեր թէ Աւստրիա կ'ընդդիմանայ Գարատաղցոց
 կողմէ Շքօտրայի զրաւման: Ոչ ոք կարդաց այս լուրը, բացի լրագրին
 տիրոջմէն: Քսան ֆրանք առաջարկուեցաւ՝ քսան վայրկեան լրագիրը
 կարդալու համար, այսինքն մէկ վայրկեանին համար մէկ ֆրանք, բայց
 թերթին տէրը չհաւանեցաւ»: Աւելի ետքը, Կագեթ Տը Լօզան հրատարա-
 կեց էստտ փաշայի կողմէ Պոլիս զրկուած հետեւեալ նամակը որ լաթի
 կտորի մը վրայ գրուած էր. —

ՇԳՕՏՐԱ, 18 ՓԵՏՐՈՒԱՐ

Առողջութիւնս շատ լաւ է, երբեք այսքան աղէկ չէի դպացած ինքզինքս: Իմ
 մտահոգութեանս գլխաւոր առարկան դուք էք, որովհետեւ մենք աւելի կը մտածենք
 Ձաթալճայի քան մեր կուրններուն վրայ: Վերջին շաբթուան կուրններուն մէջ անգամ
 մըն ալ շարդուկտոր ըրինք լեռնականները: Իրեթէ ամէն օր մեր գէնքերը յաջողու-
 թեամբ կը պսակուին: Կը վստահացնեմ ձեզ որ այս լեռնականներուն հետ կուրիւր
 հաճելի մտրզանք մըն է մեզի համար: Ձէի կարծեր որ այս աստիճան վախկոտ են:

ՁՐՐԱՎԱՐ ԷՍԱՏ ՓԱՇԱ

Նիքօլա թագաւոր կ'աճապարէր վայրկեան մը առաջ ձեռք անցընելու
 իր ըզձանքները պսակելու կոչուած քաղաքը, զոր դիւանագիտութիւնը
 կը սպառնար կորդել իրմէ: Փետրուար 14ին, Սերպիա որոշեց նոր օգնա-
 կան բանակ մը զրկել Շքօտրայի առջև: Այդ զինուորներով, որոնք Սելա-
 նիկէն յունական փոխադրանաւերու միջոցաւ Տուրացօ, Ս. Ժան տէ Մէ-
 տուա և Անթիվարի պիտի փոխադրուէին, Շքօտրայի առջև գտնուող
 Սերպերու թիւը պիտի հասնէր աւելի քան 30,000ի, որոնք իրենց տրա-
 մադրութեան տակ ունէին պաշարման 10 խոշոր թնդանօթներ, 24 դաշ-
 տային թնդանօթներ, ամրաչէն զինուորներու գումարտակ մը և առատ
 ռազմամթերք: Արդէն Նիքօլա թագաւոր, Յունուար 24ին սկսած ե-
 ոօրեայ ճակատամարտէն ասդին, դաշնակից բանակներու ընդհանուր
 հրամանատարութեան պարտաւորութեանց մեծ մասը յանձնած էր սերպ
 զօրավար Պոյօվիչի որ Շքօտրայի առջև գտնուող Սերպերուն կը հրա-
 մայէր:

Փետրուար 20ին՝ Սելանիկէն հեռագիր մը կը ծանուցանէր թէ յու-
 նական նաւերով դէպի Գարատաղի նաւահանգիստը մեկնած են սերպիա-

(*) Քօրիկրաի Թղթակիցը այս նամակը կը կրէ հին թուական մը, 16 Յունուար (Ն. Տ.): Այդ թուականին՝ Հասան Բիզա փաշա ողջ էր տակաւին:

կան օգնական սյժերու անդրանիկ հատուածները, իրենց հետ ունենալով
 պաշարման թնդանօթներ և առատ ռազմամթերք: Փոխադրութիւնը տեղի



Նիքօլա թագաւոր կը հեռուի զինուորական գործողութեանց
 գրքերէն

կ'ունենար մեծ զգուշութեամբ, որովհետեւ օսմ. Համիտիե յաճախուր որ

յունական նաւատորմին հսկողութեան հակառակ, յաջողած էր դուրս ելլել Տարտանէլէն և սկսած էր ասպատակել թշնամի եղերքները, այդ ատենները կը յածէր Ադրիական ծովուն մէջ: Փետրուար 26ին՝ օգնական Սերպերուն մէկ մասը Մէտուա ցամաք ելաւ: Փոխադրանաւերը սակայն կարելի չեղաւ ամբողջովին պարպել նոյն օրը: Յաջորդ օրը, ցերեկին, Համիսիէ յանկարծ երեւցաւ Տուրացոյի առջեւ, և սկսաւ ուժակոծել քաղաքն ու սերպիական բանակետը որ քաղքէն դուրս հաստատուած էր: Ամբողջ ժամ մը տեւող գրեթէ ասպարդիւն այդ ուժակոծութենէն վերջ, Համիսիէ ուղղուեցաւ Մէտուա, և անոր առջեւ կանգ առնելով, չորսուկէս քիլոմէթր հեռաւորութենէ մը սկսաւ ուժակոծել նաւահանգիստն ու այնտեղ խարսխած յունական փոխադրանաւերը, որոնք տակաւին չէին պարպուած: Երեսուն խոշոր ուռմբեր արձակելէ վերջ, Համիսիէ քիչ մը աւելի հեռացաւ, Սերպերուն կողմէ արձակուած ուռմբերէն զերծ մնալու համար, և 100 նոր ուռմբեր նետեց նաւահանգիստին և յունական փոխադրանաւերուն վրայ: Այս վերջիններէն Խրիստալիս, Սիֆնայու, Վերեհիօթիս այրեցան թրքական ուռմբերէն: Մանիս ընկղեցաւ, էլլիս եօթը ուռմբերէ ծակծակուեցաւ և Թրիփիլիս ալ երկու տեղէն վնասուեցաւ: Ռեյակոծութեան միջոցին մեռան չորս Հելլէններ, որոնց մէկ երկուքը Թրիփիլիսի մեքենավարներն էին: Իսկ Սերպերը ունեցան մօտաւորապէս յիսուն մեռելու ու վիրասոր: Փոխադրանաւերուն մէջ կը զբաղուէին ձիու կազմածներ, ռազմամթերք և երեսուն ձիեր, որոնք ամբողջովին կորան: Այս փայլուն գործողութենէն վերջ՝ Համիսիէ հեռացաւ գնաց: Գարատաղիք իրաւամբ կասկածեցան թէ Համիսիէի յարձակումը աւստրիական զրդուսի մը հետեւանքն է, և թէ թրքական զրահաւորը որ ուժակոծութենէն առաջ Տարտացոյի եղերքը կը գանուէր, և հակառակ չէզոքութեան կանոններուն՝ ազատ համարձակ կը պարէնաւորուէր արտաւանական իշխանութեանց քիթին տակ, նոյնինքն աւստրիական կառավարութենէն իմացած էր սերպ զինուորներու փոխադրութեան օրն ու ժամանման վայրը: Արդէն Աւստրիա, զիւանագիտական ճամբով բողբօսած էր սերպ օգնական զինուորներու առաքման դէմ, առանց անոնց ճամբայ հանուիլը կարենալ արգիլելու: Միւս կողմէ, Յոյները կը պնդէին թէ հելլենական մարտանաւեր, որոնք Մէտուայի ուժակոծութենէն առաջ Ադրիականը կը խուզարկէին Համիսիէն դանելու համար, անոր նմանող մարտանաւի մը հանդիպած էին, բայց չէին ուղած մօտենալ, որովհետեւ աւստրիական զրոջ պարզած էր, և իր մօտ կը գտնուէին աւստրիական բազմաթիւ մարտանաւեր: Մէտուայի ուժակոծութենէն քիչ առաջ՝ իշխան Միրքօ արքայական զրօսանաւով Անթիփարիէն Տուլչինեօ՝ զօրավար Մարթինօվիչի բանակետը կ'երթար, երբ ճիշդ ատենին նշմարեց Համիսիէն և փութաց մօտակայ ծովեղերքը ասպաստանիլ, առանց անկէ տեսնուելու: Բախտի զործ էր իր ազատումը. եթէ հանդիպումը մէկ քանի վայրկեան ետքը տեղի ունենար, իշխանը ասպանով կերպով գերի բռնուած էր Օսմ. յաճանաւէն: Մէտուայի ուժակոծութիւնը արգելք մը չեղաւ որ Սերպերը չչարունակեն նոր օգնական զորքեր զրկել Շքօթրա՝ Սելանիկի ճամբով:

Միայն թէ, զգուշութեան համար, հելլէն մարտանաւեր կ'ընկերանային փոխադրանաւերուն:

Հակառակ Աւստրիոյ բուն բողբօսներուն, և յարուցած միջադէպերուն, հակառակ նաև իրարու յաջորդող սպառնալիքներու, Նիքօլա թա-



1, 2. Գարատաղի վերաւորներ Ռիէքայի մէջ. — 3. Բուժուած վերաւորներու վերադարձը կուռի դաշտը. — 4. Վերաւոր Մալտոսներ

գաւոր չդադրեցուց Շքօթրայի ուժակոծութիւնը: Մարտ երեքին, թէ քաղաքը և թէ Թարապօլ ամենասաստիկ ուժակոծման մը ենթարկուեցան Գարատաղցուց և Սերպերու բոլոր թնդանօթներուն կողմէ: Ուռմբեր ինկան Շքօթրայի Աւստրիական հիւպատոսարանին վրայ և անոնցմէ մէկը վրաւորեց հիւպատոսին աղջիկը: Ուրիշ ուռմբեր խալալացի մայրապետներու հաստատութիւնը քանդեցին մասամբ: Այրեցաւ նաև Շքօթրայի ամ-

բողջ մէկ թաղը: Կատարուեցան նաև աւելի կամ նուազ կարեւոր կարգ մը յարձակումներ, որոնցմէ մէկուն միջոցին իշխան Տանիւօ Թուրքերուն կողմէ լարուած գայլի թակարդի մը մէջ իյնալով վիրաւորուեցաւ: Այդ միջոցին Սերպիա որոշեց օգնական զօրքեր զրկել Շքօտրայի առջև, պաշարուած խօտացնելու համար, անանկ ատեն մը ուր Աւստրիա ոգի ի բռին կ'աշխատէր Շքօտրայի դէմ կատարուած գործողութիւնները կասեցնելու և բերդաքաղաքը վերադարձնելու ինքնավար Ալպանիոյ, որուն անբաժան մաս հռչակուած էր Լոնտոնի դեսպանախորհուրդին կողմէ: Բոլոր տէրութիւնները, ծանր գժտութիւններու առաջը առնելու համար, համաձայնած էին այս մասին: Ռուսիա նոյնպէս հաւանած էր որ Շքօտրա մնայ Ալպանիոյ, և անոր փոխարէն Գարատաղի ըլլան ուրիշ հողային, նոյն իսկ դրամական փոխարինութիւններ: Բայց Նիքօլա թագաւոր թէ՛ անձամբ և թէ՛ իր ներկայացուցիչներուն միջոցաւ կը յայտարարէր թէ ինչ որ ալ ըլլան դէպքերը, բնաւ չպիտի հրաժարի Շքօտրայէն, որովհետեւ՝ այնքան զոհողութիւններէ վերջ եթէ երբեք չկարենայ Գարատաղի ապահովել բերդաքաղաքը, պիտի ստիպուի տեղի տալ ներքին ծանր դժգոհութեանց առջև և հրաժարիլ դահէն: Աւստրիա, տէրութեանց համամտութենէն քաջալերուած, նոր խնդիր մը յարոյց, պահանջելով որ Շքօտրայի ոչ-պատերազմիկ բնակչութիւնը արտօնուի քաղաքէն մեկնելու: Առնուած տեղեկութեանց համաձայն, քաղաքին մէջ պաշար չէր մնացած ու սով կը տիրէր: Էսատ փաշա տակաւին բաւական պարէն ունէր իր տրամադրութեան տակ, բայց չէր ուզեր բանակին յատկացուած և քաղքին պաշտպանութեան տեսակէտով մեծագոյն դերը խաղալու կոչուած ուտեստեղէնէն բաժին հանել ոչ-պատերազմիկներուն, որոնք շատ կը նեղուէին քանի շաբաթէ ի վեր: Նիքօլա թագաւոր սկիզբները կարեւորութիւն չընծայեց այս պահանջման, բայց վերջէն, երբ միւս տէրութիւններն ալ Աւստրիոյ ոյժ տուին, ստիպուեցաւ ճկիլ, և այդ մտքով լուր զրկեց էսատ փաշայի, որ սակայն չարտօնեց բնակչութեան մեկնումը: Տէրութիւնները դիմեցին Պոլիս, և Բ. Դրան միջոցաւ հրահանգ զրկել տուին փաշային որ արձակէ ոչ-պատերազմիկները, բայց այս փորձն ալ մնաց անօգուտ:

Ուրիշ միջադէպեր յարջորդաբար բռնորովին սուրբուցին այս տագնապը, զոր տէրութիւնները ի դուր կ'աշխատէին օր առաջ անհետացնել: Նախ կաթոլիկ քահանայ մը, Տ. Բալիչ, որ քիչ մը չափազանց անշրջահայեաց կերպով Աւստրիոյ նկատումներուն կը ծառայէր Իբէքի կողմերը, սպաննուեցաւ խորհրդաւոր պարագաներու մէջ: Գարատաղցիք, Աւստրիոյ պոռչտուքներուն վրայ, առարկեցին թէ Տ. Բալիչ, որ պետն էր Ալպանիա հաստատուած Ֆրանչիսկեաններուն, յայտնաբար Գարատաղեան Կառավարութեան դէմ ապստամբութիւն կը քարոզէր Իբէքի մէջ, թէ իրենք զայն ձերբակալելէ վերջ Տիաքօվա զրկեցին, բայց ճամբան, փախչիլ փորձելով, սպաննուեցաւ: Գարատաղի Կառավարութիւնը կը պահանջէր որ Աւստրիա գոհանայ այս բացատրութեամբ, և Տ. Բալիչի սպանութեան քննութեան առթիւ հրաժարի իր կողմէ անպատճառ ներկայացուցիչ կարգելու պահանջումէն: Աւստրիա տակաւին կը մեղադրէր Գարատաղը թէ

հիւսիսային Ալպանիոյ մէջ բռնի օրթոտքսութեան կը պարտադրէ Կաթոլիկ կամ Իսլամ Ալպանացիները, նոյն կողմերը Ալաւ տարրին յաւակնութիւնները արժեցնելու համար, և թէ այս կրօնափոխութեանց առթիւ Գարատաղի գործակալները ոչ մէկ ծայրայեղ միջոցի, նոյն իսկ սպանութեանց ու խոշտանգումներու առջև չեն կասիր: Ասոնցմէ զատ՝ Շֆօսրա նաւուն հարցը կար դեռ: Այս աւստրիական շոգեհաւը Մէտուայի առջև վար դըր-



Գարատաղի բոլոր քաղաքներուն մէջ լսկ կեներ, վերաւորներ ու պղտիկ տղաք մնացած էին

ուած էր Գարատաղցուց կողմէ, որոնք ո՛չ միայն աւստրիական դրօշը անարգած էին անոր վրայ, այլ նաև բեռը գրաւած էին, այն առարկութեամբ թէ Շքօտրայի պաշարեալներուն յատկացուած է:

Ապահովաբար արդարացի կէտեր չէին պակսեր Աւստրիոյ այս պահանջումներուն մէջ. սակայն ակներեւ բան մըն էր որ արտաքոյ կարգի կարեւորութիւն կ'ընծայէր անոնց, և թէ իր սպառնալիքները ո՛չ այնքան այդ միջադէպերուն կարգադրութեան, որքան Շքօտրայի պաշարուած բառնալու համար կ'ըլլային: Ուժասպառ բերդաքաղաքը կրնար իյնալ մէկ օրէն միւսը: Գարատաղիք ու Սերպերը խօտացուցած էին պաշարուած: Նոր օգնական Սերպեր, անաւոր թնդանօթներով ճամբայ ելլելու վրայ էին, անոնց ոյժ տալու համար: Էսատ փաշա վերջ ի վերջոյ կրնար տեղի տալ: Եւ Աւստրիա, անոր հետ ալ միւս տէրութիւնները, չէին ուզեր կատարուած իրողութեան մը առջև գտնուիլ: Տագնապը անհետացնելու համար

աւելի լաւ էր որ Գարատաղցուց խօսք հասկցնէին տակաւին Շքօտ-
 րա չինկած, որովհետեւ անհունապէս աւելի դժուար պիտի ըլլար Նիքօլա
 թագաւորը համոզել, եթէ այս վերջինը Շքօտրոն առած ըլլար: Հասնելու
 համար այս արդիւնքին, Աւստրիա նոր զիջողութիւն մըն ալ ըրաւ: Իր
 սկզբնական ծրագիրը Ալպանիոյ հիւսիսային սահմաններուն մասին, բացի
 Շքօտրայէն, կը պարփակէր նաև Բրիդրէնտը, Իրէքը, Տիաքօվան ու Տիպ-
 րէն: Աւստրիա յայտարարեց թէ կը հրաժարի այդ քաղաքները պա-
 հանջելէ և կը հաւանի զանոնք դաշնակիցներուն թողուլ, պայմանաւ որ
 Շքօտրա մնայ Ալպանիոյ: Սակայն Գարատաղ դարձեալ տեղի չտուաւ: Ա-
 պարդիւն անցան նաև Տէրութեանց կողմէ Պէլկրատ եղած դիմումները,
 որոնցմով Սերպիա կը հրաւիրուէր ետ քաշելու Շքօտրայի առջև գտնուող
 իր զինուորները: Այս կամակորութիւնը դաշնակիցներուն կողմէ, կը
 սպառնար շատ ծանր կացութիւն մը առաջ բերել, որովհետեւ Աւստրիա
 տրամադիր կ'երեւար առանձին գործելու և անհամաձայնութիւնը անձամբ
 կարգադրելու ուղղակի Գարատաղի հետ, ընական է ըռնական միջոցներով:
 Աւստրիական նաւաբաժին մը շոգիի վրայ էր, Գարատաղի ծովեզերքները
 մեկնելու համար. Պօսնայի և Տալմացիոյ սահմաններուն վրայ ալ զին-
 ուորական համախմբութիւն կը կատարէր Վիննայի դահլիճը, սպառնալով
 թէ՛ ծովէն և թէ՛ ցամաքէն զարնել Գարատաղը: Աւստրիական առանձին
 գործողութենէ մը ծագելիք հաւանական վտանգներուն առաջքը առնելու
 համար է որ Լոնտոնի Դեպարտամենտը մարտ 18ին որոշեց միջազգային
 նաւային ցոյց մը կատարել Գարատաղի ծովեզերքներուն առջև, և ի հար-
 կին պաշարման ենթարկել զանոնք, ստիպելու համար Նիքօլա թագաւորը
 որ հպատակի տէրութեանց որոշման ու վերցնէ Շքօտրայի պաշարումը:



Թնդանօթներու փոխադրութիւն դէպի Թարապօշ



Գ Լ Ո Ւ Խ Ը .

Շ Գ Օ Տ Ր Ա Յ Ի Ա Ն Ձ Ն Ա Տ Ո Ւ Ո Ւ Թ Ի Ի Ն Ը

Սուանց կարևորութիւն ընծայելու տէրութեանց սպառնալիքին և
 որոշուած նաւային ցոյցին, Նիքօլա թագաւոր շարունակեց պաշարման
 գործողութիւնները Շքօտրայի դէմ, որ նոր ռազակոծութեանց ենթար-
 կուեցաւ: Ռուսիոյ, Իտալիոյ, Աւստրիոյ սլաւահանգներուն և առ հասա-
 րակ բովանդակ Սլաւ սչխարհին մէջ՝ Գարատաղի ի նպաստ կատարուած
 համակրութեան ազմկալից ցոյցերը քաջալերութիւն մը կը դառնային ի-
 րեն: Իտալիոյ և Ռուսիոյ կառավարութիւնները հաւանած էին Շքօտրայի
 Ալպանիոյ թողուելուն ու նաւային ցոյցին, բայց երկու տէրութեանց ժո-
 ղովուրդները կը մնային համակիր Գարատաղի, և անձնատուր կ'ըլլային
 հակաւստրիական ցոյցերու, զորս հարկ կ'ըլլար ոստիկանական ոյժերով
 ցրուել, ծանր ու անդարմանելի միջադէպերու ծնունդ չտալու համար:
 Դժուարին մանաւանդ Իտալիոյ Էլէնա թագուհին, Նիքօլա թագաւորին
 աղջկան դրութիւնն էր: Իտալիա՝ Ալպանիոյ մէջ ունեցած մեծ շահերուն
 սիրոյն, ստիպուած էր Աւստրիոյ հետ կողք կողքի քաշել ընդդէմ Գարա-
 տաղի. և Էլէնա թագուհին՝ դիւրամբօրնի ցաւով մը միայն կրնար դիտել
 զինքը թագուհի հռչակող երկրին կողմէ իր հարազատ հօրը հանդէպ բըւ-
 նուած ընթացքը: Բայց քաղաքականութիւնը զգացման գործ չէ. Նիքօլա
 թագաւոր և իր թագուհի աղջիկը, լոկ խնամութեան տեսակէտով մը չէին
 կրնար Իտալիոյ մոռցնել տալ Ալպանիոյ մէջ ունեցած ահագին շահերը:
 Նաւային ցոյցին՝ միայն Ռուսիան էր որ չէր մասնակցեր գործնականապէս,
 զինքը ներկայացնելու հօգը յանձնած ըլլալով Նորհակ Համաձայնութիւնը
 կազմող միւս երկու տէրութեանց՝ Անգլիոյ և Ֆրանսայի:


Մարտ 18ին՝ մինչդեռ տէրութիւնները տակաւին իրենց մէջ չէին հա-
 մաձայնած նաւային ցոյցին մանրամասնութեանց նկատմամբ, Գարատաղ-
 ցիք ու Սերպերը դարձեալ ընդհանուր յարձակում մը կատարեցին Շքօտ-

րայի դէմ: Զօրավար Մարթինովիչ՝ քաղքին պաշարումէն ասդին իր մեծագոյն յաջողութիւնը ձեռք բերաւ այդ և յաջորդ օրը, խորտակելով թարապօշի թրքական աճրութեանց բոլոր կենսական յենակները ու գրեթէ տիրանալով ահարկու լեռան: Ստացուած արդիւնքը այնքան մեծ էր որ պահ մը հաւատաց թէ վերջնականապէս զգետնած է բերդաքաղաքը, և թէ այլևս ժամերու խնդիր մըն է անոր անկումը: Հեռագիրներ իսկոյն ծանուցին յաղթանակը. լուր ելաւ նաև թէ քաղաքը ինկած է, բայց նոյն իսկ թարապօշի կարեւորագոյն պաշտպանութեան յենակները կորսնցնելէ վերջ, էսատ փաշա կը յամառէր դիմադրել: Գարատաղցւոց շատ սուղի նստաւ այդ երկօրեայ յարձակումը (*), ուրկէ Նիքօլա թագաւոր աւելի վճռական յաջողութիւն մը կ'ակնկալէր, քանի որ արդէն իսկ անուանած էր Շքօտրայի քաղաքապետը և պատրաստել տուած էր պղտիկ նշանատախտակներ, դարատաղեան արձանագրութիւններով, որոնք Շքօտրայի հանրային հաստատութեանց թուրքերէն վերտառութիւններուն տեղը պիտի բռնէին:

Մարտ 20ին՝ մինչդեռ այս նոր յարձակման լուրը կը տարածուէր, և աւելորդ փաստ մըն ալ ինք կը դառնար թէ Նիքօլա թագաւոր տեղի չպիտի տայ, աւստրիական նաւարածինը կանխեց եւրոպական նաւերը և ժամանեց Անթիվարիի առջև: Գիշեր էր երբ լուրը հասաւ Չէթինեէ, ու թագաւորը կը քնանար: Արքունի մարաշխատը փութով արթնցուց զինքը, ցոյց տալով աւստրիական նաւաբաժնին դալը ծանուցանող հեռագիրը, սակայն Նիքօլա թագաւոր, առանց անկողնէն ելլելու, «Քնացած ատենս զիս անհանգիստ մի՛ ընէք», ըսաւ անտարբերութեամբ և գլուխը ծածկեց վերմակին տակ: Այդ թուականին՝ սերպ զօրքերու առաքումը դէպի Գարատաղի նաւահանգիստները, կը շարունակուէր տակաւին: Հակառակ կիրարկուած զգուշութեանց, Հաւիթիէ յաժանաւր Ադրիականի մէջ ձեռք անցուց փոխադրութեան ծառայող հէլլէնական Լեռու շոգենաւր, որ Սերպ զինուորներ Մէտուա փոխադրելէ վերջ Յունաստան կը դառնար, և զայն ընկղմեց զերի բռնելով նաւապետն ու նաւազները: Փութով Ադրիական ժամանեցին նաև միւս տէրութեանց մարտանաւերը, և Անթիվարի հասան մարտ 23ին: Աւստրիա Գարատաղի շուրերը զրկած էր Էրձիեթձօլ Յրաւնց Ֆերսիւանս, Ռասեցիի, Յրիկնի զրահաւորները, փոքր յաժանաւ մը և երեք թորփիլանաւ, որոնց պիտի գործակցէին Քաթարօի առջև կեցող Սան Կեոյի և Քայզեր Քարշ VI մարտանաւերն ու մէկ քանի թորփիլանաւ: Անգլիա զրկած էր Քիկկ Էսուրտ և Տարնաուք զրահաւորները, որոնց պիտի միանար Տրֆենս յաժանաւր: Ֆրանսա զրկած էր Էսկառ Քիկկ զրահապատ-յաժանաւր: Իտալիա զրկած էր Ամիրալիօ Տի Սան Պօն և Էնկուսուէլե Ֆիլիպերթօ զրահաւորները, որոնց պիտի միանար Ֆերուչիօ զրահապատ-յաժանաւր: Իսկ Գերմանիա ալ զրկած էր Պրեսնաու զրահապատ-յաժանաւր: Այս մի-

(*) Գարատաղցիք պաշտօնապէս 600 զինուոր և 27 սպայ մեռեալ ցոյց տուին: Ուրիշ աղբիւրէ տեղեկութիւններ 2000ի կը բարձրացնէին Գարատաղցւոց կորուստը:

Չազգային տորմիդին, երկցութեան իրաւունքով, կը հրամայէր Անգլիացի դեր-ժովակալ Թրուպրիչ, որ փութաց Գարատաղի կառավարութեան շրկել հետեւեալ ղեկոյցը, հեռագրի միջոցաւ. —



Շքօտրայի շուրջը թրքական գեւղի մը ու մեակոծումը Գարատաղցւոց կողմէ

Հրամանատար ծովակալը կը տեղեկացնէ Գարատաղեան կառավարութեան թէ Եւրոպայի մեծ տէրութեանց մարտանաւերէն բազկացած միջազգային նաւատորմի մը համախմբուած է Անթիվարի նաւահանգիստին բացերը, իբր բողոքի ցոյց այն մերժման դէմ որով Գարատաղ չուզեր հպատակիլ տէրութեանց փափաքին:

Երևակալը դիտել կուտայ թէ միջազգային նաւատորմին ներկայութիւնը կ'ապա-
ցուցանէ ո՛չ միայն տէրութեանց համամտութիւնը, այլ նաև անոնց մտադրութիւնը
Գարատաղը առանց այլևս յապաղման հպատակած տեսնելու իրենց փափաքին:


Հետեւաբար, ծովակալը կը խնդրէ Գարատաղի կառավարութեանէն որ իրեն անմի-
ջապէս ղեկուցանէ թէ պատրաստ է տէրութեանց փափաքը գոհացնելու:

Գարատաղի կառավարութիւնը փութաց պատասխանել իրեն ուղղուած
հեռագրին՝ բողոքելով նաւային ցոյցին դէմ, զոր բացէ ի բաց չէզոքու-
թեան կանոններու բռնաբարում մը կը հռչակէր, և յայտնելով նոյն ատեն
թէ տէրութեանց այդ ընթացքը չլիտի զօրէ փոխել տալու իր ընթացքը:
Գարատաղի կառավարութիւնը իր պատասխանին մէջ դիտել տուաւ տա-
կալին թէ իրենց ցաւ պատճառած է մասնաւորաբար անգլիական և ֆրանս-
սական մարտանաւերու ներկայութիւնը միջազգային տորմիզին մէջ: Յա-
ջորդ օրը, Նիքոլա թագաւոր, իր արքունի մարաջախա Պ. Կրէկովիչի
միջոցաւ թանկ Ռէթերսպոյ րկի թղթակցին կը զրկէր հետեւեալ հեռագիրը. —

Յուսաբն յուզումով մը կը լսենք թէ ֆրանսական էսկառ Բիլնէ զրահաւորը կը
մասնակցի փոքրիկ Գարատաղի դէմ ձեռնարկուած նաւային ցոյցին, հարկադրելու
համար զայն որ հրաժարի Շքօտրայի պաշարումէն, հակառակ Եւրոպայի այն յայտա-
րարութեան թէ չէզոք պիտի մնայ պատերազմին ընթացքին: Խորապէս կը ցաւենք որ
զառն հեզնութեամբ մը, ազատսխոհ հեղինակին և իրենց միութեան ու անկախու-
թեան համար կուտող ազգերու պերճախօս թարգմանին անունը (Էտիառ Բիլնէ) խառ-
նուեցաւ այս արշաւանքին, ուղղուած պաշտանան անկախութեան փոքրիկ այլ քաջարի
ախոյեանին դէմ, որ իր դարաւոր ազատ գոյութեամբը պատրաստեց վերջնական
վրէժը Արեւելքի Բրիտանացիութեան կրնանք ըսել թէ հակառակ Եւրոպայի կողմէ
իրեն դէմ ձեռք առնուած ճնշողական միջոցներուն, Գարատաղ լոկ բռնութեան առ-
ջեւ միայն տեղի պիտի տայ Եւրոպա թող իր անարդարութեան վրայ աւելցնէ բըռ-
նութեան մը ծրծաղելիութիւնը:

Յայտնի չէ թէ տէրութիւնները հախատեսած էին Գարատաղի կա-
ռավարութեան այս մերժումը: Ամէն պարագայի մէջ, իրենց սարքած
նաւային ցոյցը, իր անկարողութեամբ, տեսակ մը բարեկենդանային ար-
շաւանքի տպաւորութիւնը կը թողոյր: Նիքոլա թագաւոր, գերման թեր-
թի մը ուղղած մէկ հեռագիրով կը հաստատէր թէ արտակարգ բռնական
միջոցներ միայն պիտի կրնան զինքը ետ կեցնել Շքօտրայի պաշարումէն,
ինչ որ կը նշանակէր թէ նաւային ցոյցը իր այդ կասկած կաշկանդուած
հանգամանքով չպիտի կրնայ կացութիւնը փոխել: Տէրութիւնները աւելի
բարեբախտ եղան Սերպիոյ կողմէն, զայն վերջ ի վերջոյ համոզելով որ
ո՛չ միայն ետ կենայ նոր օգնական զօրք զրկելէ Շքօտրայի առջեւ, այլ
նաև բերդաքաղաքին պաշարման գործակցող իր զինուորները ետ քաշէ:
Սերպնիկի առջև՝ Տուրացո մեկնելու համար նաև նստած սերպ զինուոր-
ները նորէն ցամաք վերադարձուեցան, որովհետեւ եթէ ճամբայ ելլէին
ալ, մարտանաւերը պիտի արդիւլէին զանոնք: Սերպիա իր պատերազմները
լրացուցած ըլլալով, բնական է աւելի շահ ունէր տէրութեանց հետ հա-
մերաչխ մնալէն, որպէս զի կարենայ պահել իր գրաւած տեղերը: Իր
դաշնակցի պարտաւորութիւնները թէև զինքը կը ստիպէին օգնելու Գա-
րատաղցոց, բայց թշնամին այլևս Թուրքիան չէր որ Սերպիա ինքզինքը
բռնադատուած նկատէր իր զինակցին հաւատարիմ մնալու. որքան ատեն

որ կուր թուրքիոյ հետ էր, ամէն զոհողութիւն ըրած էր Գարատաղցոց
համար. բայց հիմայ Թուրքիա չկար, և Շքօտրայի դէմ կատարուող
գործողութիւնները չիտկէ չիտակ Եւրոպայի դէմ ուղղուած էին, քանի որ
Եւրոպա իւրացուցած էր Ալպանիոյ կազմութեան գործը, և կը պահանջէր
ամէն գնով Շքօտրան ղերծ պահել ո՛ր և է ոտնձգութիւնէ:



Տէրութեանց ձեւած Ալպանիան և իր շրջականները

Տարակոյս չկայ որ Սերպերուն այս տրամադրութիւնը ծանր հարուած
մը եղաւ Նիքոլա թագաւորին բանակներուն համար: Շքօտրայի առջև
գտնուող Սերպ բանակին հրամանատար զօրավար Պոյօվիչ ժամանակէ մը
ի վեր թանկագին օժանդակ մը դարձած էր իր զինուորական հմտութեամբ.
նուազ թանկագին չէր նաև Սերպերու գործակցութիւնը իրենց զօրեղ
թնդանօթներով: Սակայն անոնց ձեռնպահութիւնն ալ չկրցաւ յուսահա-
տութեան մասնել Գարատաղի ժողովուրդը որ նոր կորով ստացած էր
կարծես այդ օրերուն: Ամիսներու արիւնալի ու բազմազոհ ձախողանքները

չէին կրցած խախտել իր վստահութիւնը թէ ուշ կամ կանուխ անպատճառ իբր յաղթական պիտի մտէ Շքօտրա: Տէրութեանց խաղերը ոչ իսկ կը հետաքրքրէին զինքը, կը բաւէր որ թագաւորն ու կառավարութիւնը պաշարու մը բառնալու կողմը չըլլային: Նոյն իսկ եթէ Նիքօլա թագաւոր օտար ճնշման և սպառնալիքներու առջև տեղի տար, դժուար պիտի ըլլար Գարատաղի ժողովուրդին քակել տալ Շքօտրայի շուրջը քաշուած պաշարման գօտին: — «Առտու մը, կը դրէ Գօրիհրա Տէրայի թղթակիցը, պտոյտ կը կատարէի Մուրիքանի կողմերը, երբ սպայ մը որ Չլթիննէն կու գար, քանի մը խօսք վտխանակեց իր ընկերներուն հետ: Տեսայ որ անոնց դէմքերը տխրեցան, և բարկաճայթ խօսքեր լսեցի: Անոնցմէ մէկը խտրեցէն ըսաւ. — «Ուղղը թո՛ղ երթայ, Գարատաղցիները պիտի մնան հոս»: — Սպան մեկնեցաւ: Պատմած էր թէ Սերպիա, տէրութեանց ճնշումին վրայ, որոշած էր իր զինուորները ետ քաշել: — «Հող չէ, եթէ նոյն իսկ թագաւորը և մեր կառավարութիւնը ճնշումի տակ ընդունին Սերոպայի առաջարկը, մենք՝ Գարատաղցի սպաներս՝ չպիտի ընդունինք. նախապատիւ կը սեպնք մտնել քան Շքօտրան թողուլ»: — Երբ սպան այսպէս կը խօսէր իր ընկերներուն, բակը լեցուած էր զինուորներով, որոնք ամէն կողմէ վազած եկած էին և մտիկ կ'ընէին առանց հասկնալու: Սպայ մը անոնց դառնալով հասկցուց անցած դարձածը: Միմուռ մը բարձրացաւ: Բոլոր զինուորները բարկութեան շարժումներ ըրին. — «Պիտի դառնա՞ք եթէ հարկ ըլլայ տեղի տալ, հարցուց սպան, ձենէ ո՞վ Գարատաղ պիտի դառնայ առանց յաղթական կերպով Շքօտրա մտնելու»: — «Ոչ ոք», պատասխանեց լազուրթիւնը: — «Կը տեսնէ՞ք, պարոն, ըսաւ ինձի սպայ մը, դուք իսկ լսեցիք թէ ոչ ոք կ'ուզէ ետ դառնալ: Մեղի կ'ըսեն թէ թագաւորը մտաղիր է Շքօտրայէն հրամարելու, բայց մեր ազազակը սա է՝ կա՛մ Շքօտրա, կա՛մ մահ»: — «Բայց եթէ Սերոպայի կամքը այս ըլլայ և ձեր կառավարութիւնը ստիպուի համակերպիլ, եթէ վերջապէս ձեր պետերը հրամայեն ձեզի, ձեր զինուորի պարտականութեամբ չը՞ պիտի հնազանդիք»: — «Պարտականութենէն առաջ մեր պատիւը կայ», պատասխանեց սպան: — «Մեր կառավարութիւնը, աւելցոց ուրիշ մը, չորս հոգիէ կը բաղկանայ, մինչդեռ մենք հազարաւորներ ենք»: — «Մեր պետերը մեզի հետ են, ըսաւ երրորդ մը, և եթէ չըլլան՝ իրենց համար գէշ է: Գալով Սերոպայի, թող ձեռքէն եկածը չխնայէ. զօրք ցամաք պիտի հանէ և մեր վրայ պիտի դրկէ. թո՛ղ դրկէ. մենք որոշած ենք այստեղ մեռնել քան թէ զինաթափ ըլլալ. Թուրքերը պիտի ունենանք մեր առջև, Սերոպացիներն ալ մեր կռնակը, ու պիտի ջարդուինք, պիտի վճանանք. բայց հոգ չէ. ամէն Գարատաղցի զինուոր հրացանը պիտի առնէ և իր հաշուին պիտի կռուի. Գարատաղ պիտի անհետանայ, և ասիկա աւելի լաւ է»:

Ժողովուրդը ցաւած էր սակայն՝ Ռուսիան ալ տեսնելով նաւային ցոյցին և Շքօտրայի Ալպանիոյ թողման համաժիտ: Նոյն ցաւը կ'արտայայտուէր նաև Ռուսիոյ ժողովուրդին, ինչպէս ընդհանուր սլաւասէրներու կողմէ. և ապահովաբար՝ որքան Գարատաղը իր յամառութենէն ետ

կեցնելու, այնքան նաև Սլաւ տարրին այդ յոռի տպաւորութիւնը ցրուելու համար էր որ Բէթերսպուրկի արտաքին գործոց նախարարութիւնը մարտ 28ին հրատարակութեան յանձնեց հետեւեալ պատմական զեկոյցը. —

«Պալքանեան զինակիցներու զինուորական յաջողութիւններուն հանադէպ ուռու կառավարութեան կողմէ հետապնդուած գլխաւոր նպատակն էր կարելի եղածին չափ յաղթողներուն ապահովել իրենց յաղթանակներուն պտուղները: Կնճռոտ ու բազմաշխատ բանակցութիւններ թոյլ տուին հասնիլ այս նպատակին, որովհետև զինակիցները տէրութեանց չմիջամտելուն շնորհիւ միայն կրցան իրենց յաջողութիւնները իրականացնել: Այս կերպով Ռուսիոյ կողմէ Պալքանեան Պետութիւններուն մատուցուած ծառայութեան կարեւորութիւնը իր իսկական արժէքով գնահատելու համար պէտք է վերահասու ըլլալ միջազգային կացութեան և հակամարտ շահերու բաղխումին բովանդակ բարդութեանը:

«Պատերազմին սահմանափակումը երկու պայմանով միայն հնարաւոր էր.

«Ա. Մեծ տէրութեանց հրամարումը հողային և ուրիշ ամէն առաւելութենէ՝ իրենց մասնաւոր հաշուին համար.

«Բ. Հրամարում անոնց կողմէ ամէն մասնակի գործողութենէ:

«Այս երկու բացասական պայմանները իրե՛ց հետ կը բերէին երրորդ պայման մը, այս անգամ դրական, որ հետեւեալն է. —

«Գ. Վերաքննել պատերազմին առաջ բերած կացութիւնը և դայն հաշտեցնել մեծ տէրութեանց շահերէն անոնց հետ որոնցմէ անոնք չէին կրնար հրամարիլ:

«Ասիկա եւրոպական համերաշխութենէն միայն կրնար կախում ունենալ, որուն որոշումը պէտք է արուէր ամբողջ Սերոպայի անունով: Նոյնպէս, մասնակի գործողութիւնները այն ատեն միայն կրնային կանխարգելուիլ երբ համերաշխաբար ճանչցուէր Սերոպայի որոշման պարտադիր գելուիլ երբ համերաշխաբար ճանչցուէր Սերոպայի որոշման պարտադիր գելուիլ երբ համերաշխաբար ճանչցուէր Սերոպայի որոշման պարտադիր գելուիլ երբ համերաշխաբար ճանչցուէր Սերոպայի որոշման պարտադիր գելուիլ: Սրաբոլ պահանջուածը կ'ենթադրէր նաև ալպանական նահանգի մը ղեկավարութիւնն իսկ, ուրկէ առաջ կուգար ձգտումը կարելի եղածին չափ ընդլայնելու հողային սահմանները Ալպանիոյ մը՝ որ ալպանական ծագում ունեցող միատարր բնակչութիւն մը ընդգրկէ իր մէջ:

«Երկար ու յարատեւ բանակցութիւններէ ետք կարելի եղաւ յանգիլ համաձայնութեան մը որ արդիւնքը եղաւ վտխադարձ զիջումներու: Բրիդընտ, Իրէք, Տիաքովա և Տէպրէ քաղաքներուն պահպանումը

Սլաւներուն համար ապահոված ըլլալով, Ռուսիա անհրաժեշտ համարեց ընդունիլ Շքոտրայի Ալպանիոյ կցումը: Այս զիջումը եղաւ խաղաղութեան պահպանման շահուն համար, որուն խախտումը եթէ այդ զիջումը եղած չըլլար, այդ տեսակ պատճառի մը համար յայտնապէս անմիտ բան մը պիտի թուէր, քանի որ Շքոտրա կաթոլիկ արքեպիսկոպոսութեան մը



ԱՅՆՆԵՐԻ ՄԻՋՈՒԿԱՆԻՍՏԱՆԻ ՄԱՐԿՆԵՐԻ ԿԱՅՐԱՆԻ ՄԱՍԻՆ

աթուանիստ քաղաքն է՝ ըլլալով զուտ արպանական կեդրոն մը: Ասիկա կատարելապէս կը հաստատուի Շքոտրայի ռուսական դեր-հիւպատոսէն հասած տեղեկագիրներով, որոնց մէջ ան փաստերով կը բացատրէ Գարատաղցիներու էսպէս զինուորական դերը, ապացուցանելով որ անոնք անկարող եղան իրենց մէջ ձուլելու այն մէկ քանի հազար կաթոլիկ և իսլամ Ալպանացիները, որոնք ասկէ 35 տարի առաջ միացուեցան Գարատաղի


թագաւորութեան, և թէ հետեւապէս Շքոտրայի Սանճագին մէկ մասին կցումը մեծապէս պիտի փոքրաթիւ Գարատաղցիներուն վրայ աւելցնելով 100,000 Ալպանացիներ, որոնք իրենց օտար են՝ կրօնքով, արիւնով ու լեզուով, և որոնք պիտի սպառնան Գարատաղը դարձնել գարատաղեան Ալպանիա մը: Մեր ներկայացուցիչը կը կարծէ նաև որ մեծ թիւով կաթոլիկներու Գարատաղի միացումը կրնայ անոնց առիթ տալ իրենց կապերը աւելի սերտ դարձնելու արտասահմանի հետ և այսպէս դիւրացնելու արտաքին ազդեցութիւններու մուտքը երկրին մէջ:

«Նիքոյա թագաւոր զանց ըրաւ յարգել այն յանձնառութիւնը զոր ըրած էր՝ պատերազմի պարագային կանխաւ Ռուսիոյ լուր տալու և անոր հաւանութիւնը ստանալու մասին: Այսուհանդերձ կայսրը վեհանձն աջակցութիւն մը ընծայեց անոր, միջոցներ հայթայթելով գարատաղցի ընակչութեան օգնելու համար: Երբ Շքոտրայի խնդիրը վճռուեցաւ, Նիքոյա թագաւորին տեղեկութիւն տրուեցաւ բարեկամաբար: Միեւնոյն ատեն ցոյց տրուեցաւ այն ծանր պատասխանատուութիւնը որուն պիտի ենթարկուէր եթէ շարունակէր դիմադրութիւնը: Աւելի ետքը, յորդոր ուղղուեցաւ անոր զգուշանալու իր վրայ ամբաստանութիւններ հրաւիրել թէ՛ անձնական նպատակներ կը հետասնդէ՝ Գարատաղցիները դատապարտելով անօգուտ կոտորածներու:

«Բայց Նիքոյա թագաւորին մօտ կատարուած այս բոլոր դիմումները ապարդիւն մնացին: Այլևս որոշ էր որ ան իր հաշիւները կը հիմնէր Ռուսիոյ և միւս մեծ տէրութեանց կողմէ միջամտութեան մը և եւրոպական պատերազմի մը վրայ: Այս պայմաններուն մէջ ռուս կառավարութիւնը չկրցաւ ընդդիմանալ որ միջոցներ ձեռք առնուին, որոնք հարկադիր դարձան տէրութեանց կամքին հպատակելու մասին Նիքոյա թագաւորին մերժումին հետեւանքով: Բայց կայսերական կառավարութիւնը կը յօսայ միշտ թէ Գարատաղ պիտի հրաժարի իր յամառութենէն, բաւարար նկատելով իր անձնասիրութեան գոհացման համար այն ստիպումը որ կը հարկադրուի իրեն՝ զինքը հպատակեցնելով Եւրոպայի կամքին, որուն ոյժ կուտայ պատկառաղղու նաւատորմ մը: Այդ պարագային՝ Եւրոպա պիտի կրնայ միջոցներ գտնել ամուքելու համար կացութիւնը Գարատաղեան ժողովուրդին, որուն վրայ ծանրացած են Շքոտրայի պաշարման պատճառած ծայրայիտ զսնողութիւնները:

«Կայսերական կառավարութիւնը չի կրնար աչքէ հեռացնել ռուս ժողովուրդին հանդէպ իր աւագ պատասխանատուութիւնը որ իր վրայ պարտականութիւն կը դնէ ռուսական կաթոլի մը արիւն խսկ չթափելու եթէ հայրենիքի շահերը չպահանջեն ատիկա: Ռուսիա, ըլլալով սլաւ օրթօտոքս մեծ տէրութիւն մը, միշտ պատրաստ է ինքզինքը զոհողութիւններու ենթարկելու իր եղբայրներուն համար: Ան երբեք անոնց հետ սակարկութեան չպիտի մտնէ իր տուած օգնութեան և օժանդակութեան համար: Բայց այս վերջինները, իրենց կարգին, մասնաւորապէս պարտականութիւն ունին — զոր մեր մամուլը չի կրնար միշտ յիշեցնել — յարգել այն խորհուրդները զորս իրենց կուտայ Ռուսիա՝ առանց չարաչար գործածելու:

ինչպէս նաև յիշել որ եթէ մենք հպարտ ենք իրենց յաղթութիւններով, այդ յաղթութիւնները չպիտի կարենային ձեռք բերուիլ առանց Ռուսիոյ, որ իրենց կեանք տուաւ և որ կը շարունակէ իրենց անհրաժեշտ ըլլալ երջանկութեան մէջ, ինչպէս դժբախտութեան, և մանաւանդ իրենց փոխադարձ համաձայնութեան համար, որմէ դուրս այս ժողովուրդները չպիտի կրնան երբեք ստանալ ոյժ և զօրութիւն: Այսուհանդերձ Ռուսիոյ և սլաւ ժողովուրդներուն միջև գոյութիւն ունեցող այսպիսի յարաբերութիւնները թշնամութիւն չեն ենթադրեր միւս պետութիւններու և ազգերու հանդէպ: Յեղերու տարբերութիւնը անխուսափելիօրէն չառաջնորդեր ցեղերու



Գարատաղի ծովեղերքներուն պաշարումը

հակամարտութեան մը: Դժուար է ընդունիլ որ խաղաղութեան դատը կը շահի՝ ցեղերը մէկը միւսին դէմ հանելով:

«Իրտակից իր իրաւունքին և ներքին ոյժին, Ռուսիա պէտք չունի մտահոգութենէն անցնելու սպառնալիքներու, որոնք երբեք չեն արդարացներ ժողովուրդի մը ոյժը:»

Գարատաղի կառավարութիւնը փութաց պատասխանիլ այս զեկոյցին, յայտնելով որ ինք ո՛չ միայն չէ ուզած իր շահուն համար եւրոպական պատերազմ մը զրգռել, այլ նոյն իսկ երկիցս պաղատած է Ռուսիոյ որ չըլլայ թէ պատերազմի լոկ Գարատաղի օգնելու համար: Ի վերջոյ, Ձէթինեէի կառավարութիւնը շնորհակալութիւն կը յայտնէր Ռուս կառավարութեան որ պատերազմին տեւողութեան միջոցին անընդհատ ալիւր հասցուցած էր Գարատաղի ժողովուրդին, և նոյն ատեն կը զգացնէր թէ

հակառակ ամէն բանի, չպիտի հրաժարի Շքօտրայէն, ինչպէս յայտարարած էր արդէն միջազգային տորմիդին հրամանատարին: Այս վերջինն ալ շատ տանելի դրութեան մը մէջ չէր գտնուեր: Գարատաղի կառավարութեան մերժման վրայ, անհամաձայնութիւնը շուտով յայտնուած էր զանազան ազգերու ծովակալներուն միջև: Երբեակ Զինակցութեան ծովակալները, մասնաւորաբար Աւստրիացիներն ու Գերմանները, կը պահանջէին բռնական միջոցներու դիմել, իսկ Պրանսացի և Անգլիացի ծովակալները կ'ընդդիմանային, որովհետև դժուար էր որոշել թէ ի՞նչ պայմաններու մէջ պիտի կատարուէին այդ բռնական միջոցները և ո՛ւր պիտի կասէին: Եթէ գոհացուէր լոկ Գարատաղի նաւահանգիստներուն ուժակոծմամբ, ատիկա չպիտի զօրէր Նիքոլա թագաւորին կամակորութիւնը ընկճելու, որովհետև կատարուելիք ուժակոծութիւնը նշանակութենէ զուրկ պիտի մնար: Երկու նաւահանգիստներն ալ Աթիլարին և Տուլչինիօն, գրաւուելով կամ ուժակոծուելով, չէին կրնար ազդել Շքօտրայի շուրջը կատարուող զինուորական գործողութեանց վրայ: Աւելի ծանր բան մըն էր ցամաք արշաւախուժ մը հանելով Գարատաղցիները Շքօտրայի առջևէն բռնի վանելու խնդիրը: Եւ այս հաւանականաբար Գարատաղցիք պիտի դիմադրէին, և այն ատեն...

Սոպակելով դէպքերուն, ծովակալները որոշեցին նաւային պղատոնական ցոյցին քիչ մը աւելի ազդեցիկ նշանակութիւն մը տալ, պաշարման ենթարկելով Գարատաղի ծովեղերքները: Մարտ 28ին, ճիշտ այն օրը ուր Ռուսիոյ արտաքին գործոց նախարարութիւնը վերոյիշեալ զեկոյցը կը հրատարակէր, միջազգային նաւատորմին հրամանատարը հետեւեալ Ծանուցագիրը ղրկեց գարատաղեան նաւահանգիստներու կառավարիչներուն.

Յանուն Մեծ Տէրութիւնները ներկայացնող միջազգային նաւատորմին, կը յայտարարեմ ծովեղերքներու պաշարումը ընդմէջ Անթիլարիի նաւահանգիստին և Տրինի գետաբերանին: Պաշարումը կը սկսի 1913 ապրիլ 10, աւտուան ժամը Տրին Պաշարուած են ծովեղերքները՝ ընդմէջ հիւսիսային լայնութեան 42°6ին և 41°45ին: Պաշարուած են այս շրջանակին մէջ գտնուող բոլոր նաւահանգիստներն ու գետաբերանները, ինչպէս նաև նոյն ծովեղերքին հանդիպակաց կղզիները: Պաշարումը ուղղուած է ամէն նաւերու դէմ, ի՛նչ դրօշ ալ կրեն անոնք: Պաշարման այս սահմաններուն մէջ գտնուող նաւերը պիտի կրնան մինչև 48 ժամ, այսինքն մինչև 1913 ապրիլ 12 աւտուան ժամը 8 մեկնիլ պաշարման գիծէն:

Քիմկ ԷՏՈՂՐՅ մարտանաւին մէջ, 1913 ապրիլ 10:


Պաշարման յայտարարութեան հիման վրայ, քիչ ետքը վար դրուեցաւ Գարատաղի թագաւորին գրօսանաւը, Բուլիան, որ Մէտուա ուղղուած երեք ալիւրաբարձ առագաստանաւերու կ'ուղեկցէր: Այս միջոցներն ալ օգուտ չունեցան: Շքօտրայի ուժակոծումը կը շարունակուէր պարբերաբար: Գարատաղցիք շուտով լեցուցած էին Սերպերուն պարպած ղիրքերը, և զօրավար Մարթինովիչ գերագոյն յարձակման մը պատրաստութիւններով զլաղած էր: Թարապօջի վրայ գրաւուած ղիրքերուն շնորհիւ, Գարատաղցիք կը յուսային այս անգամ անպատճառ յաջողիլ: Նիքոլա թագաւոր որ այս վստահութեամբ լեցուած էր, յայտարարեց Ամերիկայէն հայրենիք դարձող Գարատաղցիներու թէ Զատիկը անպատճառ Շքօտրայի մէջ

բարեկամութիւն կը յայտնէր. ուրիշ օր մը յաւասարեկամ. երբեմն կը սպաս-
նար ամբողջ աշխարհի կամբք ստալ, երբեմն ալ լուր կը հանէր թէ պիտի
ստիպուի գահէն հրամարիլ, և այս գանապան խաղերան ստաջ բերած չփո-
թութենէն օգտուելով կը շարունակէր իր գործը, կուսկով կամ բանակ-
ցելով Շքօտարայի պաշտպանին հետ: Եւ ահա բերգաքաղաքը ինկած էր:

Առաջին հետապիլնները սրանք այս նշանատար իրողութիւնը ծանու-
ցին, կ'երեւայ թէ դարձեալ Նիքօրա թագաւորին ճարտիկ գիւտնադի-
տութեան պատգններն էին, որովհետեւ այնպէս ցոյց կուտային թէ Գա-
րաստղցիք բերգաքաղաքը զրուած են դարձուրելի յարձակումէ մը
վերջ, և թէ սուինի ծայրով ձեռք բերած այդ արդիւնքը ահաւոր
զոհողութիւններ արժամ է պղտիկ ժողովուրդին: Հետապիլններ հազա-
րաւոր զոհերու խօսքը կ'ընէին: Ուրիշներ կը սրբազէին յարձակման ար-
խանայի զրուսպներ, մէկը միւսէն սարսաղային. և այս ամէնուն նպա-
տակը անշուշտ ուրիշ բան չէր, այլ միտցն քիչ մը աւելի համակրութիւն
արթնցնել Գարաստղի համար լսի բարիք խորհող տէրութեանց մօտ, և
զանոնք զրգուել՝ աւելի կորովով ու հաստատակամութեամբ գիտնողբե-
լու Աւստրիոյ պահանջումներուն: Իբր իրողութիւն՝ սա միտցն յայտնի
էր որ Նիքօրա թագաւոր բանակցութեան շնորհիւ ձեռք ձգած էր քա-
ղաքը, էստա փաշայի պարզելով հրապարիչ հետանկար մը, Ալպանիոյ
թագաւորութիւնը, սրան կրնար տիրանալ իր ձեռքին սակ զանուտ
մեծ մասամբ Ալպանացի գիտնորներուն շնորհիւ, օգտուելով այն անիշ-
խանական զրութենէն, որ Ալպանիոյ բախարը եղած էր պատերազմի
յայտարարութենէն սողին: Նիքօրա թագաւորին համողիչ խօսքերը կրցած
էին իրականացնել այն՝ ինչ որ ամիսներէ ի վեր գուտայող թնդանութիւնը
չէին կրցած յաջողցնել: Սակարկութիւնը, զոր Նիքօրա թագաւորին ա-
նուտով կատարած էին զօրովար Վալթօթիչ և Պարսոյ նախկին գարա-
ստղեան զորձակատար Պ. Բլամէնաց, երկիցս բերգաքաղաք մանկելով
և էստա փաշայի հետ բանակցելով, այս վերջինն իրաւունք կուտար
զինուորական պատիւներով մեկնելու քաղաքէն, իր բոլոր զինուորնե-
րով, սողմամբերքով ու թեթև գաշտային թնդանութիւններով: Էստա
փաշա ընդունած էր պայմանները, և Գարաստղեան զրօշը, Ապրիլ 9ի
գիշերը կը ծածոնէր արդէն Թաշտարօշի ու Պրախցայի աճրութեանց վրայ:
Յաջորդ օրը, 10 Ապրիլ, Գարաստղցիք կը մանէին Շքօտար, մինչդեռ
պաշտպանն բովանդակ գիծին վրայ գաւաղող թնդանութիւնը ուրախով
աւետարը կուտային բանակին: Նոյն օրը, էստա փաշա իր բանակին
հետ կը մեկնէր Շքօտարայէն, անցնելով իր ծննդավայրը, Թիրանա, ուր
անմիջապէս ինքզինքը Ալպանիոյ թագաւոր պիտի հռչակէր, շատ զըժ-
ուարին կայսրութեան մը մասնակցով տէրութիւնները, սրանք ամիսներու
չարչարազին բանակցութեանց, վէճերու և սպառնալիքներու շնորհիւ
հաղիւ հող կրցած էին համաձայնիլ Ալպանիոյ ձախտողրին նկատմամբ,
և սրանց բոլոր հաշիւները այսպէս յանկարծ տակն ու վրայ կ'ըլլային:

Էստա փաշա, որ Պարսոյ մէջ շատ ծանօթ դէմք մըն էր, իբր և
ընտրութեան Տուրացօի և յայտնի ընդգիւմադիր Իթիհատի, պեան էր ալ-

պանական Թօփտան ընտանիքին որ մեծ ազդեցութիւն կը վայելէ Թի-
րանայի և շրջականերուն մէջ: Իր աւստապետական շահատակութեանց
շնորհիւ տիրացաւ հողային մեծ հարստութեան և ձեռք բերաւ ահաչին
նշանակութիւն մը իր բնիկ երկրին մէջ, ինչ որ զինքը շատով Համիտի
բարեհաճութեան ստարկայ գարձուց: Ակիզրները ստիկան-գօրքերու



Շ Բ Օ Տ Բ Ա Յ Ի Բ Ե Բ Դ Ը

պարզ սպայ էր, բայց հեղհեղ աստիճանի արող բարձրացմանց ա-
ռարկայ ելաւ, մինչդեռ իր եզրայնն ալ, կ'անի պէյ, կը դառնար ար-
քունի թիկնապահ: Վերջէն՝ կ'անի պէյ սպաննուկցաւ Բեբա, մանալի-
պիւնի մը խանութին մէջ, բայց իր մարդիկը շատով վրէժը լուծեցին,
Ղալաթիոյ կամարջին վրայ սպաննելով մեծ-կարգաւ Խալիլ-Բիֆաթ
փաշայի գաւակը, իբր զրդիչ կ'անի պէյի սպանութեան: Ապահովարար
էստա փաշա օտար չէր այս վրիժառութեան: Խալիլ-Բիֆաթ փաշա սա-
կան չկրցաւ պատմել սող զայն, և մնաւ սրտին ցաւէն, երբ Համիտ
էստա փաշայութեան բարձրացուց: Սահմանադրութենէն վերջ, պահ
մը Իթիհատին յարկով երևախոսան ընտրուեցաւ Տուրացօէն: Այդ հան-
գամանքով է որ մարտ ՅՂի դէպքերէն վերջ պետ նշանակուեցաւ այն
պատուիրակութեան որ երբորը երթալով Համիտի պիտի ծանուցանէր
թէ գահընկեց եղած է. էստա փաշա՝ որ վերջին սարիները գժամ էր
Կարմիր Սուլթանին հետ, հեշտանքով կատարեց այդ պաշտօնը և ինք
էր որ գահընկեցութեան լուրը Համիտի ծանոյց, ըսելով. «Ազգային ժո-
ղովը այսօր քեզ գահնկեց ըրաւ»: Քիչ ետքը գժտեցաւ նաև Իթիհատի
հետ, այս վերջինն կողմէ Ալպանիոյ մասին ձեռք սանուած գիտնորա-
կան միջոցներուն պատճառաւ, ու Խորհրդարանին մէջ շարունակեց
պայքարիլ անոր դէմ, իբր պետ ալպանական-ազգայնական խմբակին:
1912ին Իթիհատը փորձեց սիրաշահիլ զայն, և դարձեալ երեսփոխան
ընտրել տուաւ, բայց հաղիւ Բօմիթէն ինկած, յարեցաւ Մուխթար փա-

չայի Դահլիճին, և Սորճրգարանին հողեւարքի օրերուն մեծ սպանուկ հա-
նեց իր ճառերով. պահ մը նոյն իսկ սպառնաց սպաննել նախապահ ին-
քի պէջը, և այդ սպառնաւու սասիկանական սյծով դարս հանուեցաւ
ժողովարանէն: Շքօտրայի անկրանն առթիւ կասկած յայտնուեցաւ թէ
քաղքին ճակատադրին տէր մնալու համար ինք սպաննել տուած է բեր-
դաքաղքին պոչսպան հերոսը՝ Հասան Բիզա փաշան, որ արդէն իր
ընակարանէն մեկնած միջոցին զարնուած էր:

Նիքօլա թագաւոր Ապրիլ 10ին Չլթինեէ կը դանուէր, երբ գահա-
ժառանգ Տանիօ իշխանին մէկ հեռագիրը ծանոյց իրեն Շքօտրայի անձ-
նատուութիւնը: Լուրը շատով տարածուեցաւ մայրաքաղաքին մէջ,
թնդանօթի հարուածներով և բոլոր եկեղեցիներուն զանգահարութեամբ:
ժողովուրդը, արքայական սպարանքին առջև խանուած, խանդավառ-
ցոյցեր կատարեց ի պատիւ թագաւորին: Թէ՛ գահնակից ազգերէն և
թէ՛ ընդհանուր Ալա երկիրներէն շտրճաւորական հեռագիրներ կը հաս-
նէին անընդհատ: Թագաւորը, պալատին պատշգամբ ելլելով ճառ մը
արտասանեց, յուսադրելով ժողովուրդը թէ տէր պիտի մնայ այնքան
ծանր զոհողութիւններով զրուսուած քաղքին ու շտրճակալութիւն
յայտնեց ընդհանուր ազգին՝ Գարատաղի փառքին ու մեծութեան սի-
րոյն տարած անասնման տուայտանքին ու զոհողութեանց համար: Նոյն
օրը, Նիքօլա թագաւոր Շքօտրայի զինուորական կառավարիչ անուանեց
զօրավար Վուքոթիչը, և Պ. Բլամէնոյն սը Բաղաքային կառավարիչ:

ՎԵՐՋ Բ. ՄԱՍԻՆ



Հացի բաշխում
Գարատաղ գտնուող Թուրք գերիներուն



Գ. ՄԱՍ

ՍԵՐՊԻՈՅ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ

ԳԼՈՒԽ Ա.

ՓՈԽԱԳԱՐՉ ՈՅԺԵՐԸ

Պատերազմի յայտարարութեան լուրը անասնման խանդավառու-
թեամբ ընդունուեցաւ Սերպ ժողովուրդին առ հասարակ բոլոր դասա-
կարգերուն կողմէ: Արտադրու առտարաններ պարզուած էին երկրին
ամէն կողմը: Ծեր, կին, ազազ, բոլորն ալ միեւնոյն աւիւնով կը պատ-
րաստուէին «փրկարար» պատերազմին. անոնց հետ նաև Մակեդոնացի
օսմ. հպատակ Սերպերը, որոնք խուժը խուժը սահմանը անցած էին,
ոմանք նոյնիսկ օսմանցի զինուորի ստրագով, իրենց արեւակիցներուն
հետ միտան թուրքին դէմ քալելու: Ամէն օր զիւղացիներու երկար
կարաւաններ կը հասնէին համախմբութեան զլխաւոր կեդրոնները,
կայսան առջևնին, ընկերակցութեամբ կիներու և աղջիկներու, որոնք,
ճամբաններուն երկայնքը, հայրենասիրական երգերով այրերուն ուղմա-
կան աւիւնը կը զրգուէին: Բոլոր զինուորները աւելի սիրական տօնոյ-
թի մը քան պատերազմի երթալու երեւոյթը ունէին: Տեսարանը մեծ-
վայելուչ էր մասնաւորաբար Նիշի մէջ, ուր կը ճիւղաւորուին Պէլկրա-

Տեսնել՝ Պատկեր, էջ՝ 12, 16, 40, 66, 68, 72, 83, 144, 149, 165, 177, 188, 197,
212, 213, 225, 270, 278, 281, 297, 316, 369, 502, 545: Բարսկու, էջ՝ 22, 23, 49,
99, 112, 129, 152, 163, 174, 227, 280, 289, 292, 350, 389, 415, 422, 473, 547,
580, 593, 651: Յաւերաւած, թիւ 4:

Սեւանի և Պէլլրատ-Սօֆիա դիճերը, և որ զինուորական համախմբութեան զլիսաւոր կեդրոնն էր: Օրական 40 կառավարման իրար կը խաչաձեւէին այդ կայարանին վրայ, անթերի կարգապահութեամբ մը որ նոյնիսկ Եւրոպացիներու զմայրանքը կը շարժէր: Նոյնքան անթերի էր շարժան հիւանդարաններու կազմակերպութիւնը, որոն մէջ կը զբաւնուէին 200է աւելի սուս կիներ: Ռուս սասանարդ մը, Ապրամովիչ, և մէկ քանի ֆրանսացի սուսանարդներ, նոյնպէս Նիշ կը զանուէին: Գրոշի սակ մանկուս համար ներկայացողներու թիւը այնքան մեծ էր որ սերպ կառավարութիւնը ստիպուեցաւ մերժել բազմաթիւ կամաւորներ: Համադրեալ չէր մնացած, և նոյն իսկ Գ. կարգի զինուորներէն շատեր՝ զինուորական բլրակով լակ իրենց ձեռքի հրացանն ու զիւզական տարազին ազուցուած ստիւնը ունէին:

Բէլթար թագաւորին պատերազմի յայտարարութիւնը որ կարգացուեցաւ Նիշի մէջ համախմբուած զինուորներուն, ու ապուկով տարածուեցաւ բովանդակ ժողովարդին և բոլոր բանակներուն մէջ, Մակեդոնիոյ բարենորոգման համար թափուած անօգուտ ճիւղերը թուելէ, և դրական արդիւնք մը ձեռք բերելու մտքով կազմուած Պալքանեսան Գաշակցու թեման պատերազմի զխմելու բռնադատուած բլրակ յայտնելէ վերջ, պատմական երկար տեսութեամբ մը կը բացատրէր Հին Սերպիոյ նշանակութիւնը Սերպ ազգին համար. — «Ան մեր թագաւորութեան նշանաւոր ու անբախտ մայրն է, Սերպ պետութեան կորիզը, վազընջուց թագաւորներու և կայսրերու սրբանը, և իր մէջ կը պահէ Նէմանիչներու Հարսուութեան հոշակաւոր մայրաքաղաքները, Նովի-Բաղար, Բրիշթինա, Սկիւպ, Բրիդրէնա: Մեզի համարիւն, մեր լեզուն խօսող, մեր սովորութիւնները պահպանող ժողովարդ մը կ'ապրի այնտեղ, և մեզի հետ նոյն իր ձեռքն ու նոյն ձգտումները ունի: Աշխարհակալ ստարամերժ Օսմ. կառավարութիւնը, անցեալ դարերու ընթացքին բնաջինջ ըրած է մեր եզրայրները»: Յայտարարութիւնը, Օսմ. կառավարութեան դէմ արիշ զանազան զանգամաներ շարելէ և նորագոյն բրնձաւորութեան թուումն մտասնեցէ մը վերջ, կը յարէր. —

Աստուծոյ օգնութեամբ, հրամայեցի իմ քաջարի բանակիս որ ոտքի ելլէ սրբազան պատերազմը մղելու, մեր եղբայրներուն համար ապահովելով աղաւտութիւնն ու լաւագոյն կեանք մը, և Սերպիոյ թագաւորութեան համար ալ աւելի յառաջդիմութիւն: Մեր Գարատաղցի եղբայրները արդէն իսկ թարմ դափնիներով պատկած են իրենց յաղթական դրօշները, և մեզի հետ գրոհ կուտան նաև դաշնակից Պուլկարական և Յունական քաջարի բանակները:

Նոյն դարաւոր տառապանքներուն ենթարկուած ըլլալով, ամէնուս շահն ալ նոյնն է: Թող Պալքանեսան Թերակղզիին բարօրութեան և աղատութեան դործն ալ նոյն նշանակութիւնը ունենայ ամէնուս համար: Իմ բանակս, Հին-Սերպիոյ մէջ, քրիստոնէոյ Սերպերու կողմին պիտի դանձ իսլամ Սերպեր, որոնք հաւասարապէս սիրելի են մեզի, և անոնց մօտ ալ Գրիստոնէայ կամ իսլամ Ալպանացիներ, որոնց հետ մեր ազգը տասերեք դարէ ի վեր կը կենակցի, գրեթէ մշտ անոնց հետ բաժնելով որքան բարօրութիւնը, աչքան նաև դժբախտութիւնը:

Մենք անոնց ասէնուն ալ կը տանինք նոյն աղատութիւնը, նոյն եղբայրութիւնը և նոյն հաւասարութիւնը, որոնցմով կ'ուզենք օժտել Սերպերը Մեր Սերպիան՝ այն

տեղ պիտի ներմուծէ բաղձացուած անդորրութիւնը և այն յառաջդիմութիւնը որուն հասցուցած է 1877 — 78ին ազատուած նահանգները: Ազատ, գիտակից ու երջանիկ քաղաքացիներ կ'ապրին այս վերջիններուն մէջ: Այդ կենցաղը կ'ուզենք հաստատել Լապի, Սիէնիցայի, Հարի, Տրիսի և Վարտարի տփուքներուն վրայ:

Եղբայրներ, ձեզ կը հրաւիրեմ որ ձեր բոլոր սրտով ու բովանդակ կամեցողութեամբ օգնէք իմ քաջարի բանակիս: Կեցցէ՛ իմ սիրական Սերպ ազգս:


Համիմատ յայտարարութիւն մըն ալ, միանգամայն Սերպ, Ալպանական, Ռուբր, ու Յրամտական լեզուներով, ուղղուեցաւ Մակեդոնիոյ բնիկ հանար ժողովարդներուն, անոնց խոստանալով ազատութիւն և բարօրութիւն:

Հակակերտ Տին, պատերազմի յայտարարութեան օրը, Բէլթար թագաւոր՝ ընկերակցութեամբ ժօռ իշխանին, նախարարապետին ու իր զինուորական տան, մասնաւոր կառավարով մը Նիշ մեկնեցաւ և խանդավառ ծափահարութեանց առարկայ դարձաւ բազմամբիւ ժողովարդի մը կողմէ: Ռուսիոյ, Պալքարիոյ և Յունաստանի ներկայացուցիչները կայարանի սրահին մէջ կը զանուէին: Թագաւորը անոնցմէ հրամայեց անտեղ, հետեւեալ խօսքերը արտասանեց. «Պարսներ, կը մեկնիմ միանարս իմ քաջարի բանակիս, և վստահ եմ որ յաղթական պիտի գտնուիմ»: — «Աստուած յաջողէ», ըսին միաբերան բար ներկաները: Մինչև կառավարման երթալը՝ թագաւորը անընդհատ ծափահարուեցաւ: Մէտապօլիար գայն օրհնեց՝ երեք անգամ խաչակրէր: Թագաւորը վախճան մտաւ, տրիշ յայտնարար յազուած, ապակիին հետեւն բարեկեց ժողովարդը: Կայարան երթալէ առաջ Ս. Յարութիւն եկեղեցիին մէջ ներկայ զանուած էր պատարազին: Մէտապօլիար յիշատակազիր մը ուղղեց ժողովարդին՝ յազուած տողերով սպեկոչելով Սերպ ազգին պատմական անցեալը, և յոյս յայտնելով որ ժողովարդին ամբողջութիւնը ամէն գոհարութիւն պիտի ընէ՝ յաջողութեամբ պատկելու համար երկրին ձեռնարկած մեծ դարձը: Բարս խոնարութեան ու գրտակենակները դոցաւած էին, որպէսզի իրենց պաշտօնականները կարենան ներկայ զանուիլ գոհարանական ազօթքին: Պէլլրատի և բովանդակ Սերպիոյ մէջ գոհարանական ազօթքներ կատարուեցան Սերպ բանակին յաջողութեան համար: Պատերազմը կը սկսէր:

Սերպիոյ զինուորական կազմակերպութեան հիմն է 1886 նոյեմբեր 13ի օրէնքը, որ անկէ ի վեր զանազան փոփոխութեանց ենթարկուած է: Վերջին փոփոխութիւնը կատարուած է 1901ին, և անոր համաձայն, զինուորական ծառայութիւնը պարտաւորիչ է 17-50 տարեկան բոլոր Սերպերու համար. — 21 - 31 տարեկանները Ա. կարգ, 31 - 38 տարեկանները Բ. կարգ, 38 - 45 տարեկանները Գ. կարգ: 17-21 և 45-50 տարեկաններն ալ կը ծառայեն երկրապահ բանակին մէջ: Գործօն բանակին մէջ զինուորական ծառայութեան շրջանն է՝ հեծերազօրքին համար՝ երկու տարի, և միւս զինուորներուն համար՝ 18 ամիս:

Զօրահանութեան միջոցին բանակը կը բաղկանար հինգ դարձօն

զօրարամինէ (Ս. Կարգ), որոնցմէ իւրաքանչիւրը ունի երկու գումարտակ՝ չորսական վաշտէ բաղկացած երկու զօրազուեղով, երեք խումբի բաժնուած հեծկազօրքի զօրազուեղ մը, ինը հրետաշարքով լինդանօթածիղներու զօրազուեղ մը, ամբաշէն զօրազուեղ մը, և սպա-



Տանիւօ շշխան գոյլի թակարդի մը մէջ կ'ենայ Շքօտրայի առջեւ (էջ 666)

սարկաթեանց խումբեր, որով իւրաքանչիւր զօրարամին կը բաղկանայ 17,000 մարդոցմէ, 530 ձիերէ և 36 կասր լինդանօթի:

Բանակին մաս կը կազմեն տակաւին պահեստի զօրարամին մը որ կը բաղկանայ զործօն զօրարամիններուն մէջ չտանուած և մօտաւորա-

պէս սնանց համանման կազմակերպութեամբ մը օժտուած արահետներէ,

Հեծկազօրքի զօրարամին մը, բաղկացած երկու գումարտակէ, որոնցմէ իւրաքանչիւրը ունի չորս խումբի բաժնուած և երկու հրետաշարքով օժտուած երկու զօրազուեղեր,

Բ. Կարգի գինուորներու հինգ զօրարամիններ, իւրաքանչիւրը հետևակազօրքի երեք ու հեծկազօրքի մէկ զօրազուեղով և լինդանօթածիղներու դասակով մը,

Գ. Կարգի հինգ զօրարամիններ, իւրաքանչիւրը հետևակազօրքի երեք զօրազուեղով և հեծկաթումբով մը,

Լեւնային լինդանօթածիղներու զօրազուեղ մը,

Ռմբակարձակներու զօրազուեղ մը,

Սպասարկութեանց յատկացուած զօրազուեղ մը, որ շատ քիչ կազմակերպութեամբ մը օժտուած է և ունի 20,000 մարդ՝ 600 սպաներով:

Հեծկազօրքին հրամանատար նշանակուած էր Սերպիոյ թագաւորին եղբայրը, իշխան Արսէն Գարակօրիկիչ, որ յարաբերութեանց խզման վրայ Բարիկէն փաթացած էր Սերպիա:


Ս. Կարգի գինուորները ունէին Մալգէր հրացաններ, 1900ի կօթ միլիմէթրնայ օրինակէն. Բ. Կարգինները՝ Մալգէր-Քօքս հրացաններ 1880ի օրինակ. Գ. Կարգինները՝ Պէրսան հրացաններ: Թնդանօթները Ծնայտէր-Քրէօզօ սրագահարուածներ էին, 75 մ/մ, 1908ի օրինակ:

Պէտք չէ մտնալ որ բացի կանոնաւոր գինուորներէ, Սերպիա իր դրամադրութեան տակ ունեցաւ բազմաթիւ կամաւորներ, զիխաւորաբար Մակեդոնիայէն փախած օսմ. հպատակ Սերպերէ և Ռուսերէ (*): Սերպ Նգրայցներու Հայրենասիրական Միութիւնը որ ընդհանուր Սրատշխարհին առատաձեւութեանց աւարկայ կը դառնար և որ ճիւղաւորուած էր բալկանցակ Հին Սերպիոյ մէջ, սերպ բանակներու համալիրութեան օրերուն լսկ իր միջոցներով 8500 օսմ. հպատակ Սերպերէ բաղկացած կամաւորներու բանակ մը կազմած էր: Ասանց մէջ, ինչպէս յիշատակած ենք սրղէն, կը գտնուէին բազմաթիւ կիներ որոնք կանոնաւոր գինուորական մարզանք տեսած էին և հեռախօսէ կը մարզուէին: Այդ կիներ կամաւորներէն ամէնէն ժողովրդական գէմքը դարձաւ Օրիորդ Աօֆիա Իվանօվիչ, որ իր նշանածին հետ մասնակցեցաւ սահմանազլխի կռիւներուն և մեծ դեր խաղաց իրր հետագօտիչ:

Մակեդոնիայ ռազմադաշտին վրայ թուրքերը ունէին Բ. Օրտուի (Սրեմական) զործօն ոյմերը, բաղկացած Սելանիկի Ե., Մանասթրի Զ. և Սկիւպի Ե. զօրարանակներէն, ինչպէս նաև Քօզանիի 22րդ, Եանհայի 23րդ, Շքօտրայի 24րդ անկախ զօրարամինները և հեծկազօրքի զօրարամին մը: Այս զօրութեան պէտք է աւելցնել տակաւին պահեստի ոյ-

(* Սերպ քահանայ մը, Տ. Մաքարիաս, Մակեդոնի մէջ խաչակրութիւն քարոզելով բազմաթիւ Ռուսեր հաւաքած էր, իբր կամաւոր Սերպիա առաջնորդելու համար: Սերպ կառավարութիւնը, կամաւորներու առատութենէն շփոթած, սօփալուեցաւ հեռապրել Ռուսիա թէ առ այժմ պէտք չունի կազմուած խումբերուն:

ժերը, որոնք կը բաղկանային Ա. կարգի պահեստներու երկու զօրաբաժինէ (13րդ Մանասթրի մէջ և 15րդ Սկիւպի մէջ), և Բ. կարգի պահեստներու 11 զօրարածինէ: Բոլոր այս պահեստները կազմուած էին տեղական սարքերէ. Անասթըլէն՝ միայն մէկ պահեստի զօրարածին:



Միջնադարային նաւային ցոյցը Գարատաղի ծովափերէնքուն առջեւ

կարելի եղաւ հասցնել Արեւմտեան բանակին. այս զօրարածինը թաճախ փաշայի հետ էր անոր պարտութեան միջոցին:

Թրքական զօրահանութիւնը շատ յամբօրէն կատարուեցաւ. միւս կողմէ, երբեմն Արպանոցիք, աւելի յաճախ բնիկ Գրիսանեանները (Յոյն, Պուլկար, Սերպ, Ուլաճ, ևայլն) դատարիք եղան կամ համախմբութեան դործը յամեցուցին, ինչ որ ենթադրել կուտայ թէ Թուրքերը չկրցան իրենց տրամադրութեան տակ ունենալ վերոյիշեալ բոլոր այժերը:

Արեւմտեան բանակին ընդհանուր հրամանատար Ալի-Ռիզա փաշա՝ Յոյներուն և Գարատաղցուց զէմ թաղուց երեք անկախ զօրարածինները (22րդ և 23րդ Յոյներուն և 24րդ Գարատաղցուց զէմ), անոնց օգնական տալով պահեստներու երեք զօրարածին: Նովի-Բաղարի Մանազկին մէջ ալ, միանգամայն Գարատաղցուց ու Սերպերուն զէմ թաղուց զլիսուսբարար մուսրանփրօներէ բաղկացած աւելի կամ նոսալ զօրեղ պահակախումբեր, և իր մնացեալ բովանդակ սյւր չորս մասի բաժնելով համախմբեց Սերպերուն զէմ:

Կեղքներ՝ որ զլիսուս ար մասը կը կազմէր և որուն կը հրամայէր Չէքի փաշա, տարածուած էր Շիթիպի և Սկիւպի միջև, ու կը բաղկանար ճավիա փաշայի հրամանատարութեան տակ գանուսղ Չ. զօրարանակէն, Ֆէթի փաշայի հրամանատարութեան տակ գանուսղ երկու զօրարածիններէ (է. զօրարանակի 19րդ և 21րդ զօրարածինները), Ֆայիզ պէյի հրամանատարութեան տակ գանուսղ և Քամանուօի հիստային կողմը գործող հեծկազօրքի զօրարածինէ մը, ինչպէս նաև Ա. կարգի պահեստներու 15րդ զօրարածինէն և Բ. կարգի պահեստներու Սերանիկի, Մանասթրի, Սկիւպի և Շիթիպի չորս զօրարածիններէն:

Զախակողմը, զէպի Բրիչթինա, Ֆէրիք Թէֆիք փաշայի հրամանատարութեան տակ կը գանուէին է. զօրարանակին մաս կազմուել 20րդ զօրարածինը, և Բրիչթինայի ու Կիլանի Բ. կարգի պահեստներու զօրարածինները:

Աջակողմը կը գանուէր Ե. զօրարանակը, որուն 14րդ զօրարածինը, Ալի-Նասիր պէյի հրամանատարութեամբ կը գործէր Աթրուժայի հովանին մէջ, և 13րդ ու 15րդ զօրարածիններէն ալ, Բ. կարգի պահեստներու երկու զօրարածիններով և Գալա Սախա փաշայի հրամանատարութեամբ կը մնային Բաաճիսթայի կողմը (Շիթիպի և Աթրուժիցայի միջև), ու կը կազմէին կեղքմնի զլիսուս և նոսալ զէմ թեր:

Իսկ չորրորդ խումբը որ կազմուած էր պահեստներու մնացեալ զօրարածիններէն, Բրիչթի կողմը կը մնար՝ (Բէրլէրէ) իրր վերջապահ:

Զինա սրական համախմբութեան լրանալէն վերջ, Սերպերու զինուորական սյւր կը կազմէր չորս բանակներ: Վերին հրամանատարութիւնը ստանձնած էր Բէթար թաղաւոր, իրեն սպայակոյտի պետ ունեթիւնը գործարար Բաթմիքը, որուն կ'երկրորդէր գնդապետ Միչիչ: Այդ չորս բանակներէն առաջին երեքը, արամաղբիլի ամէն տեսակ ճամբաներէ օգտուելով, համախումբ պիտի գործէին Սկիւպ-Շիթիպ շրջանակին մէջ ուր կը կեղքնանար Օսմ. Արեւմտեան բանակը:

Ա. բանակը, որուն կը հրամայէր գահաժառանգ Ազիլբանուր իչխան՝ սպայակոյտի պետ ունենալով գործարար Պոյօվիչը, համախմբուած էր վերին Մօրավայի կողմը, և Նիչէն ուղղակի Վրանիա և անկէ Սկիւպ պիտի իջնէր, երկաթուղին ընթացքին հետեւելով: Կը բաղկանար հինգ կամ վեց զօրարածինէ, որոնցմէ առնուազն երեքը Ա. կարգի:

Բ. բանակը համախմբուած էր պուլկարական հողի վրայ, զէպի

Քէօսթէնտիլ, զօրավար Սթէրանսօլիչի հրամանատարութեամբ, և նոյնպէս Սկիւպի վրայ պիտի քաղէր Եյրի-Բարանկայի ճամբով: Կը բազկանար երկու կամ երեք զօրարածինէ, որոնցմէ մէկը Ա. կարգի:

Գ. բանակը, որուն հրամանատարն էր զօրավար Եանքօվիչ, համախմբուած էր Նիչի հարաւարեւմտեան կողմը, զէպի Քարչու միլի, ուրիշ պիտի քաղէր Երիչթինա, Քաչանիքի կիրճին ճամբով Վարաարի հովտէն անցնելով: Կը բազկանար երկու կամ երեք զօրարածինէ, որոնցմէ մէկը հաւանականաբար Ա. կարգի:



Ձ Ի Ի Ն Ի Ն Տ Ա Կ

Տեսարան մը Շքօտրայի շուրջը մզուած կախներէն

Վերջապէս՝ գէպի աւելի արեւմտաք՝ Նօվի-Բազարի հիւսիսակողմը՝ Քրայիէօօօի մէջ համախմբուած էր Գ. բանակը, անկախ միւս երեքէն, զօրավար Զիվքօվիչի հրամանատարութեամբ: Այս բանակը որ Նօվի-Բազարի Սանճազը պիտի մարտէր թուրք սրահակախումբերէն, Փարաւտապցւոց հետ միեւնոյն ժամանակ, Բ. և Գ. կարգի երկու զօրարածիններէ կը բազկանար:

Տակաւին պատերազմը պոչածնապէս չյայտարարուած, սերպ սահմանազուխին վրայ տեղի ունեցան աւելի կամ նուազ կարեւոր ընդհարումներ: Օսմ. ոյժերը, յարձակողական շարժումներ բրին մէկ քանի անգամ ու մտան սերպիական հողը, թերեւս ո՛չ այնքան կանոնաւոր յաւաճխազացութեան, որքան սերպ բանակներու համախմբութիւնը խանդարելու համար: Հոկտեմբեր մէկին, զրեթէ արշալոյսին, Օսմ. Է. զօրարանակին

պատկանող զօրագունդ մը (մօտաւորապէս 3000 հոգի) Վրանիայի (*) կողմէն սահմանազուխը անցնելով ուղղուեցաւ դէպի Բիսթօվաց: Սկիզբները, բացի մէկ քանի սահմանապահներէ և մարտային դէակերէ, ուրիշ ոչ չկար այդ կողմերը, թուրքերու յաւաճխազացութիւնը կասեցնելու համար: Սերպ հետեւակառօրքերու Բ. զօրարածինը փութաց Վրանիա, զիւզին չըջակաց տարածութիւնը մարբելու և լսկ պաշտպանողական զիրքին վրայ մնալու պոչածնով: Կախը տեւեց մինչև իրիկուն ու վերջացաւ թուրքերու նահանջով: Յարձակող զօրագունդը որ մինչև չորս քիլօմէթր տեղ յաւաճացած էր Սերպիոյ մէջէն, վերադարձաւ Օսմ. հող: Սերպերը որոնք 86 մեակայ և 160 վիրաւոր ունեցած էին, սահմանազուխը անցնելու հրաման չունենալով չհարձակցին թուրքերը:

Երկու օր վերջ, դարձեալ պատերազմի յայտարարութիւնէն առաջ, թուրքերը կրկնեցին յարձակումը, այս անգամ Երիչթինայի կողմէն, Երէթօլէցի և Մէրասարի կիրճին վրայ: Լը՛ազոյն յարձակում մը այդ կողմէն, աւելի զօրեղ սլծերով, կրնար չստ կարեւոր արդիւնք մը տալ, Մօրավայի սերպիական զլխաւոր համախմբումը խանդարելով: Բայց թուրքերը սակաւաթիւ էին և իրենց բախանողակ զործողութիւնը ուրիշ բան չեղաւ, այլ միակ ընդհարում մը, որու միջոցին սերպիական թընդանօթները անդրանիկ պատահութիւնը ունեցան դաւալու և որ վերջացաւ Սերպերուն յաղթութեամբ: Թուրքերը նահանջեցին, մօտաւորապէս 200 մեակայ թողլով սերպիական հողին վրայ: Սերպերու կորուստը կրաւ 50 մեակայ ու վիրաւոր:

Միեւնոյն տակն՝ Արնատիները, մտանաւորաբար Նօվի-Բազարի Սանճազին կողմէն, զարձուրելի ծայրայեղութիւններ կը գործէին Սերպ ոտաններու մէջ: Ուրիշ կողմեր ալ Սերպ ժողովուրդը ենթակայ եղաւ անոնց վայրագութեան: Վէլէսի մօտ, խուճապէ մը վերջ, բոլոր անոնք որ չէին կրցած փախչիլ, ջարդուեցան տխրայ: Սպաննուածներէն 10 հոգի, որոնց մէջ նաև երէցը, խժգժօրէն մորթոտուած էին և սոսկալի տառապանքներու ենթարկուած: Միկիցայի մէջ զիւղացի մը զլխատուած էր, ուրիշ մը ցիցը հանուած էր, սարննուած էր նաև երէցը, որուն քիթը կտրած էին նախապէս: Մօակը, դարձեալ քահանայ մը սպաննուած էր միեւնոյն կերպով, քիթը կտրուելէ վերջ: Վլաթիվէի մէջ քանդուած էր մատուռ մը, որուն երէցն ալ քիթը վրայ տուած էր այնտեղ գլխատուած էին նաև սերպ զեղջուկ մը: Ու՛ջ մնացողը Սերպիա կը փախէր, տունն ու տեղը, անասուններն ու ստացուածքը լքելով:

Արնատիներուն այս ծայրայեղութեանց պատճառը քիչ մըն ալ Սերպ չէթէներն էին, որոնք Սերպիոյ հողին վրայ՝ Սերպ Եղբայրներու Հայրենասիրական Միութեան կողմէ սպառազինուած՝ սահմանազուխը անցած էին զանազան կէտերէ և նոյնքան անողորմ ծայրայեղութեամբ կը

(*) Ձշիոթել Գաբատաղի սահմանազլխուն վրայ գտնուող համանուն թրքական ամրութեան հետ, զոր Տանիւ իշխան գրաւեց դէպի թուրք քաղած միջոցին Այս Վրանիան սերպիական գիւղ մըն է, թրքական սահմանազլխուն մօտ:

դորձէին: Տակաւին պատերազմը պաշտօնապէս չյայտարարուած, յաջորդաբար պոմպոսներ պայթեցան Գօսովայի, Քէօփրիւլի, Սկիւպի և ուրիշ վայրերու մէջ: Սերպ չէթէները, և առ հասարակ բոլոր կամաւոր խումբերը, պատերազմական գործողութեանց ընթացքին պիտի չարունակէին այդ ծայրայեղութիւնները, շատ անգամ նոյն իսկ խմբական ջարդեր, կոչուած և աւարտութիւն կատարելով:

Պատերազմը պաշտօնապէս յայտարարուեցաւ Հսկանքեր ճին: Նոյն օրն իսկ սերպիական չորս բանակներն ալ խոչոյցան վէպի սահմանադրութիւն, սառձին երեքը իրենց նպատակակէտ ունենալով Մակեդոնիան և Արքանիան, աւ չորրորդն ալ՝ Նովի-Բազարի Սանձաղը: Կրօնիւնք պատմել Ա. Բ. և Գ. բանակներու գործողութիւնները որոնք իրարու դօզուած են արդէն: Այս երեք բանակներուն պիտի գործակցէր նաև պուլկարական Գ. բանակը որ Տոստիցայէն մեկնելով Մակեդոնիա կը մտնէր:



ԷՍԱՏՓԱՇԱ



Գ Լ ՈՒ Խ Բ.

ՔՈՒՄԱՆՆՈՎՈՒ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ

Երբ պատերազմը յայտարարուեցաւ և սերպիական աւարկարահան բանակները անցան սահմանադրութիւն, Օսմ. Արևմտեան բանակին համախմբու մը չէր ըստ յամ առջաին: Անշարժու ծրարքին համաձայն, Ա. Բ. և Գ. բանակները, իրենց համախմբութեան կեդրոններէն (Ա.Վրանիա, Բ.Քէօթիէնալի, Գ.Քարշումլի, կամ Քարշիովլի) պիտի քաղէին Սկիւպի վրայ: Ա. բանակը Վրանիայէն ուղղակի Սկիւպ պիտի իջնէր Մօրավայի ընթացքին հետեւելով. Բ. բանակը որ ձախ թեք կը կազմէր, Քէօթիէնալիէն մեկնելով՝ էջփ-Բալ մեկայի ճամբով պիտի յաւաստանար Քրիվայի հովտէն, իսկ առ թեք կազմող Գ. բանակը Քարշումլիէն մեկնելով պիտի իջնէր Երիշթինա և աճիկ ալ Վարտարի հովտին ճամբով պիտի հասնէր: Սկիւպ: Այս երեք լսմանները, որոնց յաւաստարարութեան ճակատները իրարմէ անջատուած էին բաւական բարձր ու մեծուս լեռներով, բն Սկիւպի առջև կրնային իրարու միանալ: Ա. բանակը որ ամենէն ուժեղն էր և որ ամենէն կարճ ճամբան ունէր, իր յաստարարութիւնը սկսելէ առաջ սպասեց որ միւս երկու բանակները բաւական ճամբայ կարեն, որպէս զի իր կողմը անպաշտպան չմնան:

Հսկանքեր ճին Գ. բանակը, գորավար Եանքովիչի հրամանատարութեամբ անցաւ Մէրասարի կիրճը, իրեն նպատակ ունենալով թըրքական ձախ թեք, որուն դէմ սկսաւ քաղել Լապի (Մարթօսովօ) հովտէն: Սահմանադրութիւնը անցած միջոցին, Գ. բանակին մէկ ջակատը դրաւ մարտից մը, անոր պահպանութեան յատկացուած Արնատիները ցիր ու ցան ընելով: Այս վերջինները խեղճ սպիտակ գրօզ պարզեցին, բա-

նագնացութեան հրաւեր ուղղելով: Սերպ գինուորները կասկածեցան անոնց ընթացքէն և զգաւապես իրենց հրամայող անգղապետ Միլան Բորովիչը, որ Բարիշի իրաւարանական վարժարանէն վկայուած փաստաբան մըն էր: Տեղակալը կարեւորութիւն չտուաւ և երկու գինուորով դնաց Արնատ թիւերուն մօտ, որոնք պիտաւ բրին ու խոտապան կզբայբանալ Սերպերուն հետ: Այն ստան, անգղապետ ստատ իր մարդիկը, զորս կշտամբեց իրենց կասկածաւ թեան համար, և զանոնք բերաւ Արնատ թիւերուն մօտ: Բայց մինչդեռ կզբայրա թեան ձեռք կը կարկատէր ստանց պետին, այս վերջինը վայրկենաբար դաշտնը քաշելով սպաննեց զայն: Միւսները, միևնոյն բողբոխ, զարնաբեկի հրացանածգութեան մը ենթարկեցին Սերպերը, որոնցմէ շատերը ինկան: Սակայն չուսով թօթափեցին իրենց շփոթաթիւնը և միթրայեօէզներաւ անխնայ կրակով մը կատրեկին բարձր Արնատ թիւերը, վրէժը լուծելով իրենց անգուկ սին: Ք. բանակին ու թուրքերու ձախ թեւին միջև ընդհարումը անլի տնեցաւ հոկտեմբեր 6ին, Բօտուէվացի (Բանիէվօ) աշև երևան կողմը, և յաջորդ օրը վերջացաւ թուրքերուն նահանջով: Բօտուէվա ի մէջ որ Սերպերու ձեռքը կ'իջնար և ուր անմիջապէս սերպ վարչութիւն հաստատեցին, քաղաքապետ մըն ալ նշանակելով, թուրքերը թողած էին զբոշ մը, 80 վրան, մեծաքանակ պարէն, անտուկներով սաղմանիւթ, 80 կգ և ուրիշ պատերազմական իրեղէններ: Ամբողջ թրքական վաշա մըն ալ գերի ինկաւ կուսին ընթացքին: Յաջորդ օրը, 8 հոկտեմբեր, Ք. բանակին յառաջապահները մասն կտակի հովտը և սկսան խոցանալ գէպի Քօսովայի սրտամական գաշար, ուր ճշմարտապէս Ղապի կիւստովէնտիկաթ Սուլթան Մուրատ Ա. մօտաւորապէս հինգուկէս գաշ սառջ ջախջախած էր Սերպ կայսրութիւնը: Հոկտեմբեր 9ին, ամբողջ Ք. բանակը ընդհարեցաւ Ֆէրիզ-Թէֆիզ փաշայի հրամանատարութեան տակ զբաւնուող բանակին մեծագոյն մասին հետ: Տխուր բան մըն է որ, թերևս Արլանայի տարրին յարապատ խառնա՛լութեան պատճառաւ, Օսմ. սյակերը չկրցան այդ պատճախն ու նուիրական գաշտին վրայ երևան բերել այնքան արիւթիւն, որքան որ Սերպերը ցոյց աւսած էին 1389ին, իրենց կայսրութեան խորակման օրը(*): Զորավար Եանքովիչի գինուորները չուսով պարտութեան մասնեցին զանոնք: Թուրքերը նահանջեցին գէպի հարաւ, թողլով երկու թնդանօթ: Սերպերուն կորուստը եղաւ 7 մեռեալ և 120 վիրաւոր: Թուրքերը եռապատիկ կորուստ ունեցան: Նոյն օրը, իրիկուան դէմ, Սերպերը մասն Բրիշթինա, ցըր-

(*): Ինչպէս կը յիշուի, Բօսովայի յաղթութենէն վերջ մինչդեռ Մուրատ Ա. ճակատամարտի գաշար կը շրջէր, իր ոտուքներուն տակ փռուած Սերպերու դիակներուն մէջէն յանկարծ վեր բարձրացաւ Միլոշ Քօպիլովիչ, և դաշտնի հարուածով մը սրտէն զարկաւ յաղթական Սուլթանը: Մինչև այսօր այնտեղ գոյութիւնը ունի Մուրատ Ա.ի շիրիմը, որուն առջև, Սուլթան Մէհմէտ Բէշատ Ե. պատմական նամակ մը նախագահեց արանական ապստամբութեան առթիւ Այդ շիրիմը որ ուխտատեղի մը դարձած է իսլամներուն համար, յաղթական Սերպերուն կողմէ զինուորական պատիւներու առարկայ դարձաւ: Մեկնելէ վերջ, Սերպերը պահակ դրին անոր մօտ:

ուելով 2000 Արնատ թիւերու յետմնաց խումբ մը, ուրիշ մաս մը քաղքին տաներան, մասաններու և գեանափորներու մէջէն շարունակեց կատիլ: Պատր կգաւ մէկիկ մէկիկ սպաննել կամ հարածել զանոնք: Բրիշթինայի զբաւումէն վերջ, Ք. բանակը շարունակեց իր յառաջապացութիւնը գէպի վերիգովիչ, Քաշանիքի ձամբով Ալիս պ իջնելու համար:

Այդ միջոցին՝ զօրավար Սիլբանովիչի հրամանատարութեան տակ զանուս Ք. բանակը, նոյնպէս յաջող յառաջապացութիւն մը կը կատարէր: Զօրավարը սահմանադրա խոր անցաւ Հոկտեմբեր 7ին, իր բանա-



Սերպ տղաք կը բարեւեն սղգային հերոսուհի Օրիորդ Սօֆիա Իվանովիչն ու իր նշանածը

կը բամբակով երկու թեւի, որոնցմէ ձախտկողմինը՝ Ռուանի բարձունքէն Քարաթօյա կ'ուղղուէր, և աջակողմինն ալ՝ Քրիվայի բարձրագիւղ գաշտէն՝ գէպի Էյրի-Բալանկա: Այս վերջին թեւը՝ գիւրին ընդհարումէ մը ետքը, Հոկտեմբեր 8ի սաստուն մտաւ Էյրի-Բալանկա, անգուցն Իսլամ ժողովարդին մէջ սառջ բերելով ս'յն սասիճան գարնաբեկի խուճապ մը, որ խեղճերը, իրենց գաւախները Քուսանովօի ձամբուն վրայ ձգելով փախեր էին: Իսկ ձախ թեւը, Օսիկովօի բարձունքէն իջնելով զբաւեց Սուլթան Թէփէի թրքական զիւրքերը, և սկսաւ յառաջանալ գէպի Քարաթօյա, մինչդեռ Պուրկարական ջոկատ մը, իր կարգին Օսիկովօի սարերէն իջնելով, Չարէվօ-Մէլօի մօտ կ'անցնէր սահմանադրուիլ և Պրէկալնիցայի հովտէն կը քալէր Քօզանայի վրայ: Բ. բանակին ձախ թեւը, Հոկտեմբեր 8ին, ցերեկէն ժամ մը սառջ

մտած էր Քարաթօլա, իսկ աջ թևեր, նոյն օրտան իրիկունը մտա-
Սթրաթչին, ամուսացն 30 քիլոմէթր հեռու Քա մանսօլօն: Երկու թև-
ւերն ալ, իրարմէ աննշան հեռաօրտ թևամբ, չարանակեցին իրենց
յառաջխաղացու թիւեր գէպի Քա մանսօլօ:

Իսկ Ա. Բանակը, գահաժառանգ Ազե. քանդը իշխանին հրամանա-
տարութեամբ, Հսկ-
աները 7ին ճամբայ
կրա Վրանխայէն, և
նոյն օրը իր յառաջա-
պահները ևս մղեցին
Պա յանսօլայի ու Ռա-
ժանի Օամ. սահմա-
նապահները, որոնք
նահանջեցին թապա-
նօլչէի վրայ, օգր
հանելով երկաթա-
ղիի կամարը: Սերպ
ամբողջէն գտնող մը,
անմիջապէս վերջ վե-
րանորոգեց գայն: Հոկ-
աները 9ին մինչդեռ
Բ. բանակը 30-40
քիլոմէթր հեռան էր
տակաւին և Գ. բա-
նակն ալ շատ աւելի
հեռու, Ա. բանակին
յառաջապահները ար-
դէն իսկ շփման մէջ
էին թուրք յառաջա-
պահներուն հետ, Քա-
մանսօլօի հիւսիսային
կողմը, քաղքէն հա-
զիւ մէկ քանի քիլո-
մէթր հեռուն: Ամէն
բան ցոյց կուտար որ
պիտի ստիպուի մինա-
կը մղել ճակատամար-
տը, որ պատերազմի
յայտարարութենէն
ասդին անդրանիկ կա-
րեւոր բաղաւժը պիտի ըլլար: Ազատարար Չէքի փաշա կրնար օգ-
տուիլ Սերպ բանակներու այդ գժուարին կացութենէն, քանի որ անոնք




Բէթար թագաւոր, եր գաւազներուն հետ ներկայ կը գտնուի բացօթեայ կրճական պաշտպաններն են

չէին կրնար իրարու ձեռք տալ: Թուրք հրամանատարը ամէն դիւրու-
թիւն ունէր խոյանալու սերպիական բանակներուն ամէնէն մերձաւորին
վրայ, և իր թուական մեծ առաւելութեան շնորհիւ գայն ջախջախելու
տակաւին մի աները անոր օգնութեան չհասած: Անմեկնիկի գանդաղու-
թեամբ մը անդարձ մնաց մինչև Հոկտեմբեր 10, և այդ թուականին
միայն ձեռնարկեց յարձակողականի: Բայց արդէն իսկ ուշ էր, որով-
հետև նոյն օրը, մինչդեռ սերպիական Ա. բանակը ձակասէն կը յարձա-
կէր իր վրայ, Բ. բանակը, Սթրաթչինէն յառաջանալով, մտակցած էր
կուռի գաշտին և կրնար ձախակողմէն պաշտպանել Ա. բանակին շար-
ժա մները, թուրքերը ենթարկելով ձախող կացութիւն մը, որ, ինչպէս
պիտի տեսնենք, ամենամանր աղէտի մը յանդեցաւ, և այլևս անդար-
մանիկ կերպով քայքայեց Օամ. Արեւմտեան բանակը:

Քա մանսօլօի ճակատամարտը սկսաւ Հոկտեմբեր 10ին, ցերեկէն
վերջ, ժամը 2 1/2ին, թուրքանօլչէի կողմէն, որ քաղքէն գէպի հիւսիս
վեց մղան հեռան կը գտնուի: Ինչպէս բահեք արդէն, Չէքի փաշան էր
որ թանկագին ժամանակ մը կորսնցնելէ վերջ յարձակողականի սկսաւ,
Է. Չօրարանակը մղելով սերպիական Ա. բանակին դէմ: Մշտա օր մըն
էր և յարգաւատ անձրև մը կը տեղար: Թուրքերը ամենազարճուրդի
յարձակում մը գործեցին էն առաջ, խանդավառութեամբ իրենց հրամանա-
տարներէն որոնք ոչ իսկ մաքերնէն կ'անցնէին թէ օամ. բանակ մը
կրնայ երբեք պարտուիլ Սերպ գինու որներէ: Անոնցմէ Ֆէթի փաշա որ
է. զօրարանակի երկու զօրարամիներուն կը հրամայէր, յայտարարած
էր Սկիւպի մէջ թէ երբ իր յաշթական գինու որներով Պէլլրաա մանէ,
պիտի նեղուի, որովհետև երկար ժամանակ օամ. դեպքան եղած է այն-
տեղ և շատ սերպ բարեկամներ ունի: Այդ ինքնավստահութեան յենած,
թուրքերը ամբողջ ժամեր յարձակման թափը չկասեցուցին, աշխատելով
պաշտրել սերպիական բանակը, որ հարթ գաշտի վրայ գանուելով չէր
կրնար ինքզինքը բաւ պաշտպանել և կը սկսէր ընկրկիլ, մինչդեռ թուր-
քերը կը գանուէին շրջակայ բարձունքներուն վրայ և շատ ամուր դիր-
քեր ունէին: Մինչև իրիկունը ուշ ժամանակ, Սերպերը մնացին պաշա-
պանողականի վրայ, և յաշտեցան կասեցնել թուրքերու յարձակումը,
բայց իրենք ալ չկրցան մտա մը տեղ յառուշանալ: Չկրցան դարձակել
նաև իրենց թնդանթները, թանձր մշուշին պատճառաւ: Գիշերը
կուռը շարունակուեցաւ առանց դադար առնելու: Թուրքերը, լուսնի
լոյսով կրկնեցին իրենց յարձակումը, բայց չուտով Սերպերն ալ յարձա-
կողականի սկսան ամէն կողմէ: Սերպ զօրագունը մը ամբողջ ժամ մը
տեւող կուռէ մը վերջ, հազիւ կրցած էր 100 մէթր տեղ յառաջանալ:
Գնդակները կը սուբային չորս գիէն, թրքական թնթանթները կը դո-
ռային ահաւոր թափով մը, և յարձակող գինու որները տակաւ կը սկսէին
կրկնել: — «Բայց ո՞ւր են մեր ֆրանսականները», կը ձայնէին ամէն կողմէ,
ակնարկելով սերպ բանակին թնթանթներուն, որոնք ֆրանսական
դարձարաններու մէջ շինուած են: Անոնց լուսնիւնը իրենց դարձանալի

կը թուէր անանկ տանն մը ուր թրքական թնդանօթները կարկուտի պէս ուռմը կը տեղացնէին սերպ շարքերուն վրայ: Սերպ թնդանօթա՝ ճիզները սակայն սակաւին յորմար գիրքեր չունէին, և կը վարանէին ամբալոծելու թրքական գիրքերը, որովհետև շատ կէտերու վրայ գիրկ գիրկի կախ տեղի կ'ունենար, Սերպ ու թուրք խառն էին, և վերջին՝



ԲՈՒՄԱՆՈՎ ԵՒ ԵՐ ՇՆԴԱՆՈՒԹՆԵՐԸ

ներուն վրայ արձակուած ուռմերը կրնային նոյնքան մնասկ նաև Սերպերու: — Այն տանն, կը պատմէ սերպ վիրասոր մը, նշմարեցի ին՝ ճիծանօթ հրեայ մը, Ավրամիչէ, որ Պէլիբասի մէկ վաճառատան պաշտօնեան էր, և դրօշի տակ սանուած էր իրը Սերպից հպատակ (*): Երբայրէն սպօթքներ կը մըմար, բայց ստիկա պատճառ մը չէր բլար որ մեր ամէնէս աւելի արտաք և աւելի լաւ չգործածէ իր հրօցանը: Սակայն

(* Սերպիս, Յունաստան և Պուլկարիս լսի իրենց թուրք հպատակները դրօշ տակ չկոչեցին պատերազմի պահուն:

